

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԹՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԻԶԵՎԱՆ – 2017

ՆԱԽԱԲԱՆ

Միբեյի՝ ուսանողներ

Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:

ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետազոտի իրականացման լայն հնարավորություն:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և

մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառնությունները՝ ձեռք համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:

Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեռք համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրությունների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեռք առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատաձևավորման, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:

Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:

ՌԵԿՏՈՐ՝



Ա. ՄԻՄՈՆՅԱՆ

I ԲԱԺԻՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1.** Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետև՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետև՝ ԵՊՀ) առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները:
- 1.2.** Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն:
- 1.3.** Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ կանոնադրությանը համապատասխան:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

- 2.1.** ԵՊՀ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը առկա ուսուցման համար սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի, իսկ հեռակա ուսուցման համար՝ 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
- 2.2.** Բակալավրի կրթական ծրագրի լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ:
- 2.3.** Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ), իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 2 տարի (4 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 8 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ, 7 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ ու ստուգարքներ և 3 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.4.** Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ

հերթականությամբ. 4 շաբաթ լսարանային պարապմունքներ¹, 1 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:

2.5. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրի տևողությունը 2,5 տարի է (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 3 շաբաթ լսարանային պարապմունքներ, 2 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:

2.6. Մանկավարժի որակավորում ստանալու համար համապատասխան մասնագիտությունների ուսանողները լրացուցիչ պետք է կուտակեն 30 կրեդիտ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կարգ»-ի:

2.7. Բակալավրի կրթական ծրագրի յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում նախատեսվում է առավելագույնը 5 քննություն, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ քննությունների թիվը չի գերազանցում 3-ը: Մագիստրոսի կրթական ծրագրում այդ քննությունների թիվը սահմանվում է ըստ օրինակելի ուսումնական պլանի:

2.8. Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը գնահատվում են 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն ԵՊՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերի:

3. Գիտելիքների ստուգումը և գնահատումը

3.1. Համակարգի հիմնադրույթները

3.1.1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) կազմակերպել ուսումնառության համաչափ գործընթաց և խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,

բ) ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման մի-

¹ Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով:

չոց օգտագործելու համար:

3.1.2. Գնահատումը ներառում է հետևյալ բաղադրամասերը.

- ա) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ),
- բ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, որը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,
- գ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3.1.3. Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորության աստիճանը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 4 խմբի՝

- ա) *եզրափակիչ գնահատումով,*
- բ) *առանց եզրափակիչ գնահատման,*
- գ) *առանց ընթացիկ գնահատման,*
- դ) *ստուգարքային:*

3.2. Դասընթացների գնահատումը

3.2.1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* դեպքում, քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննությունից բացի, նախատեսվում է 2 ընթացիկ քննություն:

Ընթացիկ և եզրափակիչ քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) նշվում է կրթական ծրագրի մասնագրում:

3.2.2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը (Գ_{արթ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

- ա) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից (ΣԶ_{ընթ.}), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 5 միավոր,

բ) եզրափակիչ քննության արդյունքից ($P_{եզր.}$), որը կարող է գնահատվել առավելագույնը 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար.

$$Q_{արդ.} = \sum P_{ընթ.} + P_{եզր.}:$$

Ըստ այդմ՝ *եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 1*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով²).

Աղյուսակ 1.

Գնահատման բաղադրամասը	$P_{ընթ.1}$	$P_{ընթ.2}$	$P_{եզր.}$	$Q_{արդ.}$
Առավելագույն միավորը	5	5	10	20

3.2.3. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների արդյունքներով:

3.2.4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Q_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից ($\sum P_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 10 միավոր,

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին ընթացիկ քննություններից վաստակած միավորների գումար.

$$Q_{արդ.} = \sum P_{ընթ.}:$$

Ըստ այդմ՝ *առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 2*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով³).

Աղյուսակ 2.

² Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը առնվազն 1 միավոր է, իսկ գնահատման քայլը՝ 0,5: Առաջադրանքների գնահատականները գումարվում են, և վերջնական արդյունքը ներկայացվում է ամբողջ թվով:

³ Տե՛ս սույն կարգի 3.2.2. կետը:

Գնահատման բաղադրամասը	Քննթ 1	Քննթ 2	Գարդ.
Առավելագույն միավորը	10	10	20

Վերոնշյալը (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2) կիրառվում է նաև հեռակա ուսուցման համար:

- 3.2.5.** Լաբորատոր աշխատանքի ձև ունեցող դասընթացի ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60 % կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ դեպքում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական տեղեկագրում նշանակվում է «0» միավոր:
- 3.2.6.** Դասընթացը կարող է լինել *եզրափակիչ գնահատումով* միայն այն դեպքում, եթե կիսամյակում ունի առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն:
- 3.2.7.** *Առանց ընթացիկ գնահատման* (միայն եզրափակիչ քննությամբ) և *առանց եզրափակիչ գնահատման* կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթացները:
- 3.2.8.** *Ստուգարքային* կարող են լինել բակալավրիատի ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացները, մագիստրատուրայի ընդհանուր դասընթացները, ինչպես նաև մագիստրատուրայի «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» մասնագիտական դասընթացը:

3.3. Գնահատման գործընթացի կազմակերպումը

- 3.3.1.** Կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում դասախոսը ուսանողներին տեղեկացնում է գիտելիքների ստուգման ձևերի, հարցաշարերի և ժամկետների, ինչպես նաև գնահատման մեթոդների ու չափանիշների մասին:
- 3.3.2.** Տակուլտետները կազմում են քննաշրջանների ժամանակացույցները, որոնք հաստատում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն, իսկ ուսանողներին տեղեկացվում է նրանց համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով:
- 3.3.3.** Ընթացիկ քննություններն անցկացվում են՝ առկա ուսուցման դեպքում՝ ուսումնառության կիսամյակի 9-րդ և 17-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 6÷7-րդ և 11÷12-րդ շաբաթներում (այդ շաբաթներում դասեր չեն նախատեսվում):

- 3.3.4.** Եզրափակիչ քննությունները առկա ուսուցման դեպքում անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18÷20-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 13÷16-րդ շաբաթներում:
- 3.3.5.** Բանավոր քննության և ստուգարքի ավարտից հետո դասախոսը տեղեկագիրը սքանավորման համար նույն օրը ներկայացնում է դեկանատ, իսկ գրավոր քննության տեղեկագիրը դասախոսը սքանավորման համար դեկանատ է ներկայացնում տվյալ քննության ավարտին հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.3.6.** Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգարքների գնահատականը հրապարակելու օրը ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը գրավոր դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, անհրաժեշտության դեպքում նաև ֆակուլտետի դեկանին:
- 3.3.7.** Գրավոր քննությունները գրառվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տեսքերում: Ուսանողը և դասախոսը պետք է պահպանեն քննական տեսքում ներկայացված պահանջները:
- 3.3.8.** Ստուգարքի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվում է միայն ուսանողի ներկայությամբ (բացառությամբ «Չն»-ի): Եզրափակիչ գնահատումով դասընթաց(ներ)ի ընթացիկ քննությունները հանձնելուց հետո, եթե ուսանողի արդյունաբար միավորը 8 կամ բարձր է, ապա ուսանողն իրավունք ունի տվյալ դասընթացի եզրափակիչ քննությանը, հետևաբար նաև լուծարքային շրջանին չներկայանալ, և այդ դեպքում տեղեկագրի համապատասխան սյունակներում կատարվում է «Չն» նշումը, և պահպանվում է ուսանողի 8 կամ բարձր միավորը: Ստուգարքին/քննությանը չներկայանալու դեպքում կատարվում է «Չն» նշումը:
- 3.3.9.** Քննաշրջանը կամ առանձին ստուգարքներ/քննություններ ուսանողը համապատասխան հիմնավորմամբ ժամկետից շուտ կարող է հանձնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի թույլտվությամբ:
- 3.3.10.** Ընթացիկ քննությունները, ստուգարքները և եզրափակիչ քննությունները հեռավար ձևով կազմակերպելը թույլատրվում է միայն ռեկտորի հրամանով:

3.4. Գնահատման սանդղակը

- 3.4.1.** ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է 20 միավորանոց սանդղակը, որը ներկայաց-

ված է ստորև.

Աղյուսակ 3.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»

3.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

3.5.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում գրանցելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար լրացվում է *ակադեմիական տեղեկագիր*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

3.5.2. Ուսանողի վաստակած կրեդիտները նրա ուսումնառության ողջ շրջանում գրանցվում և կուտակվում են ակադեմիական տեղեկագրում:

3.5.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- գումարային կրեդիտներ,
- գնահատված կրեդիտներ,
- վարկանիշային միավորներ,
- միջին որակական գնահատական:

3.5.4. *Գումարային կրեդիտը (Գ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

3.5.5. *Գնահատված կրեդիտը (ԳԳ)* գումարային կրեդիտի այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$ԳԳ = \sum \text{կրեդիտ} \cdot \dots$$

3.5.6. Վարկանիշային միավորը (ՎՄ) թվային միավորներով գնահատված դասընթացների (մոդուլների) կրեդիտների և դրանց արդյունաբար գնահատականների արտադրյալների գումարն է.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ}_i \times \text{Գ}_{\text{արդ}_i},$$

որտեղ $\text{Գ}_{\text{արդ}_i}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունաբար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից ստացել է համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վարկանիշային միավորն է՝
 $\text{ՎՄ} = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238$ ՝ 300 հնարավորից ($5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20$):

3.5.7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}} :$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝ ՄՈԳ
 $= \frac{238}{15} = 15,87$ ՝ 20 հնարավորից:

3.5.8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունաբար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

4. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

4.1. Քննաշրջանի արդյունքներով դրական (8 և բարձր) միավոր ստացած ուսանողին տվյալ դասընթացը վերահանձնել չի թույլատրվում:

4.2. Ընթացիկ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե չներկայանալու պատճառի մասին ուսանողը (կամ որևէ մեկը նրա անունից) նախօրոք կամ քննության օրը գրավոր իրազեկում է դեկանատին: Դիմումը վավերացնում է ֆակուլտետի դեկանը կամ դեկանի տեղակալը, և նույն օրը դեկանատի աշխատակիցը սքանավորման եղանակով այն

ամրագրում է ԵՊՀ SuperVision ծրագրում: Հիվանդության պատճառով բացակայած ուսանողը բժշկական տեղեկանքը բուժման շրջանի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ներառյալ (ԵՊՀ հատուկ պոլիկլինիկայի կողմից վավերացնելուց հետո) ներկայացնում է դեկանատ: Այլ պատճառներով բացակայելու դեպքում ուսանողը ներկայացնում է բացակայության հարգելիությունը հավաստող համապատասխան փաստաթուղթ:

- 4.3.** Ընթացիկ քննությանը հարգելի պատճառով չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել դասերին հաճախման օրվանից սկսած 5 աշխատանքային օրվա ընթացքում, դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցով:
- 4.4.** Ստուգարքին և/կամ քննությանը հարգելի պատճառով չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է հանձնել համապատասխան ստուգարքը և/կամ քննությունը, որը չի համարվի լուծարք, եթե բավարարվել են 4.2 ենթակետի բոլոր պահանջները: Այդ մասին ֆակուլտետի դեկանը համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
- 4.5.** Ակադեմիական պարտքերի մարման կարգը սահմանվում է ԵՊՀ ռեկտորատի կողմից, և այդ ընթացքում ստուգարքների և/կամ քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են ռեկտորի հրամանով:
- 4.6.** Եզրափակիչ գնահատումով դասընթացի գնահատման արդյունաբար դրական նվազագույն միավորի՝ 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 1 և 3 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝ $Q_{արդ.} = 1 + 3 + 3 = 7$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Այս դեպքում պահպանվում են միայն ընթացիկներից ստացած միավորները, այսինքն՝ 4, և պարտքերի մարման շրջանում ուսանողը վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7:

4.7. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատման արդյունաբար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում ընթացիկ քննությունները պետք է վերահանձնի առանձին-առանձին (իր ցանկությամբ մեկը կամ երկուսը) և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 2 և 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունաբար միավորը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 3 = 5$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Վերահանձնելով ընթացիկ քննություն(ներ)ը՝ ուսանողը կարող է վաստակել դրական նվազագույն 8 միավոր և ավելի: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը:

4.8. Առանց ընթացիկ գնահատման դասընթացի գնահատման արդյունաբար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

4.9. Գնահատման վերոնշյալ կանոնները վերաբերում են նաև հեռակա ուսուցման համակարգին:

4.10. Բակալավրի կրթական ծրագրում ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո, եթե առաջացած առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա համաձայն սահմանված կարգի՝ ուսանողը (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների) կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով այդ առարկաների դասընթացները:

4.11. Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո մագիստրոսի կրթական ծրագրում թույլատրվում է հանձնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ը, եթե դասընթացի գնահատման արդյունաբար միավորը 5-7 տիրույթում է, իսկ 4 և ցածր արդյունաբար միավորի դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

4.12.Քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների՝ համալսարանից հեռացման վերաբերյալ որոշումը կայացվում է ըստ ԵՊՀ ռեկտորատի սահմանած չափանիշների:

4.13.Մագիստրոսի կրթական ծրագրում մագիստրոսական թեզի պատրաստման կատարողականը ատեստավորվում է համապատասխան ուսումնական ստորաբաժանման կողմից՝ համաձայն ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի պահանջների:

4.14.Մագիստրոսական թեզի ատեստավորումը չանցած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով: Հեռացված ուսանողը վերականգնումից հետո շարունակում է կատարել նախկինում հաստատված թեմայով մագիստրոսական թեզը:

5.Ուսանողի անձնական գործը և ուսումնական քարտը

5.1.Ուսանողի անձնական գործը նրա ողջ ուսումնառության ընթացքում դեկանատում պահվող հիմնական փաստաթղթերից է:

5.2.Բակալավրիատի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ կրթության վկայականը (բնօրինակ), ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները, կենտրոնացված և ներբուհական քննությունների դեպքում՝ համապատասխան հիմքերը, ընդհանուր մրցույթից դուրս ընդունվածների համապատասխան փաստաթղթերը: Բացի այդ, ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

-համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,

-վճարովի համակարգում սովորող ուսանողի բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,

-ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները,

-ընդունելության միասնական քննությունների արդյունքների մասին վկայականը, որը համալսարան ընդունված դիմորդը ներկայացնում է սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում:

5.3.Մագիստրատուրայի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները, ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները: Նշվածներից բացի՝ ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները:

5.4. Համալսարանն ավարտվելուց հետո ուսանողի անձնական գործն ամբողջությամբ՝ ներառյալ ստուգման գրքույկը, շրջանցիկ թերթիկը, դիպլոմի և դրա հավելվածի պատճենները և ավարտման հրամանը, հանձնվում է ԵՊՀ արխիվ:

5.5. Ուսանողի հետ պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ուսումնական էլեկտրոնային քարտում ֆակուլտետի ղեկանատի կողմից մուտքագրվում են ուսանողի անձնական տվյալները, նրան վերաբերող բոլոր հրամանները, և տեղադրվում է նրա լուսանկարը: Ուսանողի քննաշրջանի արդյունքները քննաշրջանից հետո ուղարկվում են ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Դասընթացների տեղեկագիրքը

6.1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է *ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք*, որը տեղադրվում է համալսարանի կայքէջում:

6.2. *Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը և «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված կրթական վերջնարդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային

ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի նպատակը և կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված կրթական մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

7. Առցանց դասընթացի կազմակերպումը

7.1. ԵՊՀ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով:

7.2. Առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեն նույնը:

7.3. Առցանց եղանակով նախատեսվող դասընթացի նյութը պատրաստում է իրականացնող ամբիոնը և ներկայացնում ֆակուլտետի մեթոդական խորհրդին՝ երաշխավորություն ստանալու համար:

7.4. Առցանց ուսուցման էլեկտրոնային միջավայրի տեխնիկական ապահովումը և վերահսկողությունն իրականացնում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոնը և տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը:

7.5. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առցանց դասընթացներ իրականացնող ամբիոնը ՏՏԿՀ կենտրոնին ներկայացնում է դրանց անվանումները, դասախոսներին և ընդգրկված ուսանողներին, որի հիման վրա ՏՏԿՀ կենտրոնն ապահովում է առցանց միջավայր:

7.6. Առցանց դասընթացը վարող դասախոսը վերահսկում է ուսանողների մասնակցությունը, տրամադրում և շարունակաբար թարմացնում է էլեկտրոնային ուսումնական նյութերը, առցանց կապի մեջ է լինում ուսանողների հետ, կազմակերպում է քննարկումներ և սեմինարներ:

7.7. Ուսանողները ստանում են տեխնիկական աջակցություն էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

8. Պրակտիկայի կազմակերպումը

8.1. Պրակտիկան ուսանողի մասնագիտական կրթության կարևոր և անբաժանելի բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքների գործնական կիրառության հմտությունների զարգացմանը:

- 8.2.** Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողները, մասնագիտությամբ պայմանավորված, կարող են անցնել հետևյալ պրակտիկաներից մի քանիսը՝ ուսումնական (ճանաչողական, դաշտային, էքսկուրսիոն, թանգարանային և այլն) և մասնագիտական (արտադրական, գիտահետազոտական, փորձարարական, մանկավարժական), իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողները՝ միայն մասնագիտական պրակտիկա:
- 8.3.** Ուսումնական պրակտիկան կազմակերպվում է Բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար, որի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսանողի ընդհանուր մասնագիտական գիտելիքները:
- 8.4.** Մասնագիտական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների նեղ մասնագիտական հմտությունները:
- 8.5.** Պրակտիկայի տեսակը, տևողությունը և ժամկետները սահմանվում են համապատասխան կրթական ծրագրով:
- 8.6.** Պրակտիկան կազմակերպվում և վերահսկվում է ուսումնամեթոդական վարչության կողմից՝ պրակտիկայի ծրագրի և ժամանակացույցի համաձայն, համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) պրակտիկայի պատասխանատու(ներ)ի հետ համատեղ:
- 8.7.** Պրակտիկայի ամբողջ ընթացքն արձանագրվում է ուսանողի օրագրում: Պրակտիկայի ավարտին այն իրականացնող հաստատության պատասխանատու անձը օրագրում ներկայացնում է կարծիք և բնութագիր: Օրագիրը կցվում է ուսանողի անձնական գործին:
- 8.8.** Մասնագիտությամբ աշխատող ուսանողը ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
- 8.9.** Պրակտիկան գնահատվում է ստուգարքի ձևով: Պրակտիկայի ղեկավարը «Ստուգված» նշում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային և կատարել է առաջադրանքները:
- 9. Կուրսային աշխատանքի պատրաստումը և գնահատումը**
- 9.1.** Կուրսային աշխատանքը նպատակաուղղված է դասընթացի կամ դասընթացների խմբի ուսումնասիրության արդյունքում ուսանողի ստացած գիտելիքների կիրառության հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:
- 9.2.** Կուրսային աշխատանքի թեման և ղեկավարին հաստատում է ամբիոնը կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում և տեղեկացնում ուսանողներին:
- 9.3.** Թեմայի հաստատումից հետո մեկշաբաթյա ժամկետում կուրսային աշխատանքի ղեկավարը ուսանողի հետ կազմում է առաջադրանքը

և նրան տրամադրում համապատասխան գրականության ցանկը:

9.4. Կուրսային աշխատանքի ղեկավարը կանոնավոր խորհրդատվությունների ժամանակացույցը ներկայացնում է ամբիոն և տեղեկացնում ուսանողներին:

9.5. Ուսանողը ավարտած կուրսային աշխատանքը (տպագիր և էլեկտրոնային) ամբիոն է ներկայացնում պաշտպանությունից առնվազն 7 օր առաջ:

9.6. Կուրսային աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է առնվազն երկու դասախոսից (որոնցից մեկը կուրսային աշխատանքի ղեկավարն է) կազմված հանձնաժողովում:

9.7. Պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է անբավարար:

9.8. Գնահատականի վերաբերյալ անհամաձայնության դեպքում ուսանողը նույն օրը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին:

10. Կամրնտրական դասընթացների ընտրության ընթացակարգը

10.1. Բակլավարի կրթական ծրագրի կամրնտրական դասընթացներ են նախատեսվում *ընդհանուր կրթական* և *մասնագիտական* կառուցամասերում:

10.2. Ընդհանուր կրթական կառուցամասի կամրնտրական դասընթացների ցանկից ուսանողն ընտրում է երեքը:

10.3. Մագիստրոսի կրթական ծրագրի կամրնտրական դասընթացները նախատեսվում են մասնագիտացման դասընթացների կրթամասում, որոնցից ուսանողն ընտրում է հինգը:

10.4. Կամրնտրական դասընթացներին ուսանողները գրանցվում են ֆակուլտետում, և արդյունքները սահմանված ժամկետում ներկայացվում են ուսումնամեթոդական վարչություն:

10.5. Կամրնտրական դասընթացներին ուսանողների գրանցումը կատարվում է նախորդող ուստարում՝ մինչև ապրիլի 1-ը: Սահմանված վերջնաժամկետից հետո գրանցումներ չեն կատարվում:

10.6. Համալսարանը կարող է չեղարկել ցանկացած կամրնտրական դասընթացի իրականացումը, եթե դրանում ընդգրկված չեն բավարարվով ուսանողներ՝ ըստ սահմանված նորմերի:

11. Կրթական ծրագրի ղեկավարը

11.1. Կրթական ծրագրի պատշաճ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման նպատակով նախատեսված են կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներ:

11.2. Կրթական ծրագրի ղեկավարը կազմում է նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և

հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

- 11.3.** Կրթական ծրագրի ղեկավարը ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ ձևակերպում է ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:
- 11.4.** Կրթական ծրագրի ղեկավարը կազմակերպում է ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը, որին մասնակից է դարձնում նաև գործատուներին և արտաքին այլ շահակիցներին:
- 11.5.** Կրթական ծրագրի ղեկավարը ապահովում է ծրագրի հրապարակայնությունն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:
- 11.6.** Կրթական ծրագրի ղեկավարը ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկավարության հետ միասին կրթական ծրագիրը նախապատրաստում է հավատարմագրման:
- 11.7.** Կրթական ծրագրի ղեկավարը չի կարող ղեկավարել նույն կրթական մակարդակի մեկից ավելի կրթական ծրագրեր:

12. Ուսումնական խորհրդատուն (կուրսատոր)

- 12.1.** Առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով նշանակվում են ուսումնական խորհրդատուներ, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են:
- 12.2.** Ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ 30 ուսանողի համար նախատեսելով մեկ խորհրդատու:
- 12.3.** Ուսումնական խորհրդատուն ուսանողների ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին (ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ԵՊՀ ներքին կարգապահական, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման և այլն), ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն:
- 12.4.** Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում նրանց ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ:

12.5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետի գիտական խորհուրդը լսում և գնահատում է ուսումնական խորհրդատուների հաշվետվությունները:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1. Ուսանողն իրավունք ունի՝

- սահմանված կարգով ցանկացած կրթական մակարդակում ընդհատելու կամ շարունակելու մասնագիտական կրթությունը,
- սահմանված կարգով վերականգնելու ընդհատած ուսանողական իրավունքները ԵՊՀ-ում,
- մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց (արտաճրագրային), որը դասավանդվում է ԵՊՀ-ում՝ ըստ սահմանված կարգի,
- հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (գուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- օգտվելու ԵՊՀ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,
- լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա պետությունների բուհերը) կամ փոխելու մասնագիտությունը,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ուսումնառության տվյալ կամ ամբողջ ժամանակահատվածի համար,
- ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի երկլեզու դիպլոմի հավելվածը:

13.2.Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ սույն կարգին և հետևել դրա պահանջներին,
- կատարել դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- հաճախել իր կրթական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,
- սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,
- վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում ժամանակին վճարել ուսման վարձավճարը,
- հոգատար վերաբերվել ԵՊՀ գույքին,
- կատարել սույն կարգով, ԵՊՀ կանոնադրությամբ և ԵՊՀ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ուսանողի պարտականությունները:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵԴԵԿԱԳԻՐ

Հավելված 1.

Բակալավրի կրթական ծրագիր

Անձնական համար	Ազգանուն անուն հայրանուն	Մասնագիտություն
125001	Մաթևոսյան Աշոտ Կարենի	«Տնտեսագիտություն»

1-ին կիսամյակ

Աշնանային կիսամյակ, 2008 թ.

Թվակիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
140 1/ՅՕ1	Հայրց լեզու և գրականություն-1	2	Ստ.	-
170X/ՅՕ1	Ռուսաց լեզու-1	4	Ստ.	-
160X/ՅՕ1	Օտար լեզու-1	4	Ստ.	-
1106/ՅՕ1	Հայրց պատմության հիմնահարցեր-1	2	Ստ.	-
XXOX/ՅՕ1	Համակարգիչից օգտվելու հմտություններ	2	Ստ.	-
OXOX/ՅՕ1	Մաթեմատիկայի հիմունքներ	2	Ստ.	-
OXOX/ՅՕ1	Եկոլոգիայի և քննադատականության հիմունքներ	2	Ստ.	-
ՕՕՕ 1/ՅՕ1	Ֆիզդաստիարակություն	-	Ստ.	-
XXX/ՅXX	Դասընթաց-1	4	Լավ	17
XXX/ՅXX	Դասընթաց-2	4	Լավ	16
XXX/ՅXX	Դասընթաց-3	4	Լավ	16
Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ	
30	12	196	16.33	

Ընդհանրացված արդյունքները 2008 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
30	12	196	16.33

2-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2009 թ.

Թվակիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
170X/ՅՕ2	Ռուսաց լեզու-2	4	Ստ.	-
160X/ՅՕ2	Օտար լեզու-2	4	Ստ.	-
ՕՕՕ 1/ՅՕ1	Ֆիզդաստիարակություն	-	Ստ.	-
140 1/ՅՕ2	Հայրց լեզու և գրականություն-2	2	Լավ	16
1106/ՅՕ2	Հայրց պատմության հիմնահարցեր-2	2	Գեր.	19
XXX/ՅXX	Դասընթաց-4	6	Բավ.	12
XXX/ՅXX	Դասընթաց-5	6	Լավ	16
XXX/ՅXX	Դասընթաց-6	6	Գեր.	20
Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ	
30	22	358	16.27	

Ընդհանրացված արդյունքները 2009 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
60	34	554	16.29

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագիր

Անձնական համար	Ազգանուն անուն հայրանուն	Մասնագիտություն
125001	Մաթևոսյան Աշոտ Կարենի	«Տնտեսագիտություն»
3-րդ կիսամյակ		

Աշնանային կիսամյակ, 2009 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
1107/ԲՕ1	Մշակութաբանություն	2	Ստ.	-
0001/ԲՕ1	Ֆիզդաստիարակություն	-	Ստ.	-
XXOX/ԲՕ3	Օտար լեզու-3	4	Գեր.	19
130X/ԲՕ1	Փիլիսոփայության հիմունքներ	4	Լավ	15
XXX/BXX	Դասընթաց-7	5	Բավ.	11
XXX/BXX	Դասընթաց-8	6	Բավ.	8
XXX/BXX	Դասընթաց-9	6	Գեր.	20
XXX/BXX	Դասընթաց-10	3	Գեր.	19
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		28	416	14.86

Ընդհանրացված արդյունքները 2009 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Անփոփոխ ՄՈԳ
90	62	970	15.65

4-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2010 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
1901/ԲՕ1	Իրավագիտություն	2	Ստ.	-
0001/ԲՕ1	Ֆիզդաստիարակություն	-	Ստ.	-
XXX/BXX	Դասընթաց-11	5	Բավ.	9
XXX/BXX	Դասընթաց-12	5	Լավ	16
XXX/BXX	Դասընթաց-13	6	Լավ	17
XXX/BXX	Դասընթաց-14	6	Գեր.	18
XXX/BXX	Դասընթաց-15	6	Գեր.	20
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		28	455	16.25

Ընդհանրացված արդյունքները 2010 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Անփոփոխ ՄՈԳ
120	90	1425	15.83

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵԼԵԿԱԳԻՐ

Բալլավորի կրթական ծրագիր

Լնծնական հասար	Ազգանուն անուն հայրանուն	Մասնագիտություն
125001	Մաթևոսյան Աշոտ Կարենի	«Տնտեսագիտություն»

5-րդ կիսամյակ

Աշնանային կիսամյակ, 2010 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
0002/B01	Քաղաքացիական պաշտպանություն	2	Ստ.	-
0002/B02	Արտակ. իրավիճ. բնակչութ. առաջին րուծոգություն	2	Ստ.	-
XXX/BXX	Դասընթաց-16	5	Բավ.	10
XXX/BXX	Դասընթաց-17	5	Գեր.	20
XXX/BXX	Դասընթաց-18	5	Լավ	18
XXX/BXX	Դասընթաց-19	5	Լավ	17
XXX/BXX	Դասընթաց-20	6	Գեր.	16
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		26	421	16,19

Ընդհանրացված արդյունքները 2010 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
150	116	1846	15,91

6-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2011 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XXX/BXX	Պրակտիկա	4	Ստ.	-
XXX/BXX	Դասընթաց-21	5	Բավ.	11
XXX/BXX	Դասընթաց-22	5	Բավ.	12
XXX/BXX	Դասընթաց-23	5	Լավ	16
XXX/BXX	Դասընթաց-24	5	Լավ	17
XXX/BXX	Դասընթաց-25	4	Գեր.	19
XXX/BXX	Կուրսային աշխատանք-25	2	Գեր.	20
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		26	396	15,23

Ընդհանրացված արդյունքները 2011 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
180	142	2242	15,79

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագիր

Լինձնական իսմար	Ազգանուն անուն իայրանուն	Մասնագիտություն
125001	Մաթևոսյան Աշոտ Կարենի	«Տնտեսագիտություն»
7-րդ կիսամյակ		

Աշնանային կիսամյակ, 2011 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XXX/BXX	Դասընթաց-26	4	Լավ	13
XXX/BXX	Դասընթաց-27	4	Լավ	14
XXX/BXX	Կուրսային աշխատանք-27	2	Բավ.	12
XXX/BXX	Դասընթաց-28	5	Լավ	16
XXX/BXX	Դասընթաց-29	5	Լավ	17
XXX/BXX	Դասընթաց-30	5	Գեր.	18
XXX/BXX	Դասընթաց-31	5	Գեր.	19
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		30	482	16.07

Ընդհանրացված արդյունքները 2011 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
210	172	2724	15.84

8-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2012 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XXX/BXX	Դասընթաց-32	4	Լավ	15
XXX/BXX	Դասընթաց-33	5	Լավ	16
XXX/BXX	Դասընթաց-34	5	Գեր.	20
XXXX/BXX	Ամփոփիչ մասնագիտական քննություն	4	Գեր.	20
XXXX/BXX	Ավարտական աշխատանք	12	Լավ	17
Գումարային կրեդիտներ		Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ
30		30	524	17.47

Ընդհանրացված արդյունքները 2012 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
240	202	3248	16,08

Ամփոփիչ արդյունքներ

Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Արդյունաբար վարկանիշային միավորներ	Արդյունաբար ՄՈԳ
240	202	3248	16.08

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՎԵՐՋԸ

ԱՆՎԱԿԵՐ Է ԱՌԱՆՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՆԻՔԻ

Տեսուչ՝

Ֆակուլտետի դեկան՝

Պրոռեկտոր՝

Հավելված 2

Ավարտական աշխատանքի պաշտպանության

Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

Ուսանող՝

Ազգանուն անուն հայրանուն _____

Մասնագիտություն, խումբ _____

Ավարտական աշխատանքի թեման _____

Ավարտական աշխատանքի

ղեկավար _____

(ազգանուն, անուն, գիտ. աստ., կոչում)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝

Ազգանուն անուն _____

Գիտական աստիճան, կոչում _____

Պաշտոնը _____

**Ավարտական աշխատանքի գնահատման արդյունքներն ըստ
սահմանված որակական չափանիշների**

Թիվ	Հանձնաժողովի անդամներ (ազգանուն, անուն)	Գնահատման միավորն ըստ սահմանված որակական չափանիշների				Մտորագրու- թյուն
		1	2	3	4	
1						
2						
3						
4						
5						
6						
7						
Գնահատման միջին միավորը						

Թիվ	Որակական չափանիշը	Գնահատման միավորի սահ- մանված չափա- քանակը	Գնահատման միջին միավորը	Գումարային միավորը	Գնահա- տականը
1	Ներկայացման որակը	6			
2	Ձևակերպման որակը	6			
3	Կատարման ինքնուրույնության աստիճանը	6			
4	Արդիականությունը /նորությունը	2			

Գնահատականը ըստ գումարային միավորի

Գումարային միավորը	0...7	8...12	13...17	18...20
Գնահատականը	<i>«անբավարար»</i>	<i>«բավարար»</i>	<i>«լավ»</i>	<i>«զերազանց»</i>

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն որոշում է՝

1) Բակալավրի որակավորման աստիճան (ղիպլում) շնորհելու վերաբերյալ

Շնորհել / Չշնորհել (յրացնել)

Հանձնաժողովի նախագահ _____

ստորագրություն

« » _____ 200__ թ.

II ԲԱԺԻՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բակլավլրի ուսումնական ծրագիրը ներառում է հինգ հիմնական կրթա-մաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթե-մատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնա-գիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ: Ծրագրի ընդ-հանուր կառուցվածքը բերված է ստորև.

«Պատմություն» կրթական ծրագիր

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	32	14
պարտադիր	16	8
կամընտրական	16	6
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	10	4
պարտադիր	8	3
կամընտրական	2	1
Ընդհանուր մասնագիտական	172	42
պարտադիր	160	39
կամընտրական	12	3
Կրթական այլ մոդուլներ	26	6
ԸՆԴԱՄԵՆԸ	240	66

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիր

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	32	14
պարտադիր	16	8
կամընտրական	16	6
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	10	4
պարտադիր	8	3
կամընտրական	2	1
Ընդհանուր և հատուկ մասնագիտական	174	44
պարտադիր	154	34

կամրնտրական	20	10
Կրթական այլ մոդուլներ	24	5
ԸՆԴԱՄԵՆԸ	240	67

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ–տնտեսագիտական պարտադիր կամրնտրական	32 6 16	14 8 6
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական պարտադիր կամրնտրական	10 10 0	4 4 0
Ընդհանուր մասնագիտական պարտադիր կամրնտրական	160 152 8	54 50 4
Կրթական այլ մոդուլներ	38	8
ԸՆԴԱՄԵՆԸ	240	70

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ–տնտեսագիտական պարտադիր կամրնտրական	28 24 4	13 11 2
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական պարտադիր կամրնտրական	10 8 2	4 3 1
Ընդհանուր և հատուկ մասնագիտական պարտադիր	178 178	36 36
Կրթական այլ մոդուլներ	22	5
ԸՆԴԱՄԵՆԸ	238	58

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

ԿՐԹԱՄԱՍ	ԿՐԵԴԻՏՆԵՐ	ԴԱՍԸՆԹԱՑ – ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ–տնտեսագիտական պարտադիր կամրնտրական	28 24 4	13 11 2
Ընդհանուր մաթեմատիկական	10	4

և բնագիտական պարտադիր կամրնտրական	8 2	3 1
Ընդհանուր և հատուկ մասնագիտական պարտադիր	180 180	36 36
Կրթական այլ մոդուլներ	22	5
ԸՆԴԱՄԵՆԸ	240	58

Ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը ծրագրում ըստ ուսումնական տարիների սահմանափակված է հետևյալ չափաքանակներով.

1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի
32 ժամ*	30ժամ*	28 ժամ	24 ժամ

** Առանց ֆիզաստիարակության ժամերի հաշվառման*

Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20-շաբաթյա տևողու-
թյունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցման, իսկ 4-ը՝ քննաշրջանի
համար: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական
բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝
60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում
է 240 կրեդիտի:

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամ-
ընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսա-
րանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍ պարտադիր դասընթացներ

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովան-
դակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մո-
դուլ-դասընթացները.

Պատմություն կրթական ծրագիր

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ) ²	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականու- թյուն-1	2	30(6/24/0/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Անգլերեն լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-1				

Հայոց լեզու և գրականություն-2	2	30(6/24/0/0)	2	հանրագում.
Ռուսաց լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Անգլերեն լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-2				
Ռուսաց լեզու-3	4	60(0/60/0/0)	3	հանրագում.
Անգլերեն լեզու-3				
Ֆրանսերեն լեզու-3				
Փիլիսոփայության հիմունքներ	4	60(45/0/15/0)	4	հանրագում.
Ֆիզդաստիարակություն	-	120(0/120/0/0)	2,4	ստուգարք

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ռուսաց լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	30 (24/0/6/0)	1	ստուգարք
Անգլերեն լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-1				
Ռուսաց լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	32(24/0/6/0)	2	հանրագում.
Անգլերեն լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-2				
Փիլիսոփայության հիմունքներ	4	60 (45/0/15/0)	4	հանրագում.
Ռուսաց լեզու-3	4	60(0/60/0/0)	3	հանրագում.
Անգլերեն լեզու-3				
Ֆրանսերեն լեզու-3				
Ֆիզդաստիարակություն	-	120(0/120/0/0)	2,4	ստուգարք
Էթիկա և վարվեցողության հիմունքներ	-	30 (30/0/0)	2	ստուգարք

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ս/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ռուսաց լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	30(24/0/6/0)	1	ստուգարք
Անգլերեն լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-1				
Ռուսաց լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	30(24/0/8/0)	2	հանրագում.
Անգլերեն լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Ֆրանսերեն լեզու-2				
Ռուսաց լեզու-3	4	60(0/60/0/0)	3	հանրագում.

Անգլերեն լեզու-3				
Ֆրանսերեն լեզու-3				
Փիլիսոփայության հիմունքներ	4	48(37/0/11/0)	4	հանրագում.
Ֆիզդաստիարակություն	-	120(0/120/0/0)	2,4	ստուգարք

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ա/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականություն-1	2	30(6/24/0/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	30(24/0/6/0)	1	ստուգարք
Հայոց լեզու և գրականություն-2	2	30(6/24/0/0)	2	հանրագում.
Ռուսաց լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	30(24/0/6/0)	2	հանրագում
Ռուսաց լեզու-3	4	60(0/60/0/0)	3	հանրագում
Փիլիսոփայության հիմունքներ	4	60(45/0/15/0)	4	հանրագում
Ֆիզդաստիարակություն	-	180(0/180/0/0)	1,2,4	ստուգարք
Էթիկա և վարվեցողության հիմունքներ	-	30 (30/0/0)	2	ստուգարք

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/ա/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
Հայոց լեզու և գրականություն-1	2	30(6/24/0/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու-1	4	60(0/60/0/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	30(24/0/6/0)	1	ստուգարք
Հայոց լեզու և գրականություն-2	2	30(6/24/0/0)	2	հանրագում.
Ռուսաց լեզու-2	4	60(0/60/0/0)	2	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	30(24/0/6/0)	2	հանրագում
Ռուսաց լեզու-3	4	60(0/60/0/0)	3	հանրագում
Փիլիսոփայության հիմունքներ	4	60(45/0/15/0)	4	հանրագում
Ֆիզդաստիարակություն	-	180(0/180/0/0)	1,2,4	ստուգարք
Էթիկա և վարվեցողության հիմունքներ	-	30 (30/0/0)	2	ստուգարք

ՀՍ կամընտրական դասընթացներ

Թեմա 2՝ Քաղաքականությունը որպես սոցիալական երևույթ. բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: **Թեմա 4՝** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 5՝** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 6՝** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 7՝** Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 8՝** Քաղաքական գաղափարախոսություններ: **Թեմա 9՝** Կոռուպցիան և նրա դրսևորման տեսակները, նրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

0304/B01. «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 3-րդ, ստուգարք

Նպատակը.

Սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները: Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձևավորումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը,
2. կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները,
3. կիմանա կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,
4. կունենա գիտելիքները գործնականում կիրառելու ունակություններ և հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասարակություն և պետություն: **Թեմա 2**՝ Իրավունքի ձևերը: **Թեմա 3**՝ Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: **Թեմա 4**՝ Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: **Թեմա 5**՝ Սահմանադրական իրավունք: **Թեմա 6**՝ Դատական իշխանություն և դատական համակարգ: **Թեմա 7**՝ Քաղաքացիական իրավունք: **Թեմա 8**՝ Աշխատանքային իրավունք: **Թեմա 9**՝ Ընտանեկան իրավունք: **Թեմա 10**՝ Էկոլոգիական իրավունք: **Թեմա 11**՝ Քրեական իրավունք: **Թեմա 12**՝ Դատավարական իրավունք: **Թեմա 13**՝ Միջազգային իրավունք:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամաբար դիմացառից), որոնցից առնվազն երկուսին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

0202/Յ19. «ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային և հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համապարփակ գիտելիքներ կունենա գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին,
2. ծանոթ կլինի մշակույթի կառուցվածքին, բաղադրիչներին, տիպաբանությանը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափություններին,
3. ընդհանուր գիտելիքներ կունենա համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2**՝ Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառնությունները և մեխանիզմները: Մշակույթային գործընթացներ: **Թեմա 3**՝ Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: **Թեմա 4**՝ Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները՝ մոտեցումներ, հար-

ցադրումներ, օրինաչափություններ: **Թեմա 5՝** Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0304/B02. «ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դեմոմիսացիաների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնաձիսական համակարգը.
2. կհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները.
3. կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2՝** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3՝** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4՝** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5՝** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6՝** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7՝** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8՝** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9՝** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10՝** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

3.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

3.1 Պարտադիր դասընթացներ

0104/Յ01. «ՀԱՄԱԿԱՐԳՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական` 2 ժամ (6 ժամ դասախոսություն, 24 ժամ գործնական
պարապմունքներ)

Կիսամյակերը` 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների, դրանց տեխնիկական, ծրագրային և ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները,
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները,
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

Բովանդակությունը.

Թեմա 1`** Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: **Թեմա 2` Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: **Թեմա 3`** Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: **Թեմա 4`** Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:

**0001/В03. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻ-
ՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)**

**Շաբաթական` 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական
պարապմունքներ)**

Կիսամյակը` 5-րդ , ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արտակարգ իրավիճակներում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:

Դասընթացների նպատակն է ուսանողներին սովորեցնել էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահարում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) մինչբժշկական օգնության ցուցաբերում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ստեղծված արտակարգ իրավիճակներում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:
2. կկարողանա էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում, ոսկորների կոտրվածքներ, արյունահոսություն, շոկային իրադրություն, վնասվածքներ) ցուցաբերել առաջին և մինչբժշկական օգնություն:

Բովանդակությունը.

Թեմա 1`** Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: **Թեմա 2` Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: **Թեմա 3`** Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: **Թեմա 4`** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: **Թեմա 5`** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: **Թեմա 6`** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: **Թեմա 7`** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: **Թեմա 8`** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 9`** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: **Թեմա 10`** Սուր հիվանդություններ և թունավորումներ: **Թեմա 11`** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: **Թեմա 12`** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով: Հարցատոմսը ներառում է երեք հարց. երկուսը՝ տեսական, մեկը՝ գործնական:

0105/B02. «ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակները՝ 2-րդ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում էկոլոգիա գիտության տեսական հիմնահարցերի, բնապահպանության առկա խնդիրների և հիմնահարցերի լուծման առաջարկվող եղանակների և կիրառվող մեթոդների ու մոդելների մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա էկոլոգիա գիտության հիմնական տեսական մոտեցումները, օրենքները, հարցերը,
2. կկարողանա օգտագործել այդ գիտելիքները բնապահպանական հարցերի լուծման ոլորտում,
3. կկարողանա կատարել անհրաժեշտ վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ էկոլոգիայի զարգացման պատմական ուղին, տեղն ու դերը մյուս գիտությունների համակարգում: Օրգանիզմներ և էկոհամակարգ: էկոլոգիական հիմնական օրենքները և կանոնները: ***Թեմա 2՝*** էկոհամակարգի տարրերը և տրոֆիկ մակարդակները: ***Թեմա 3՝*** Օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունը, էկոգործոններ: ***Թեմա 4՝*** էներգիան էկոհամակարգերում: Սննդային շղթաներ: Կենսաերկրաքիմիական ցիկլեր: ***Թեմա 5՝*** Մարդու էկոլոգիա: Շրջակա միջավայր: Մարդածին համակարգեր: ***Թեմա 6՝*** Բնական պաշարների դասակարգումը: Գլոբալ արտադրություն և քայքայում: ***Թեմա 7՝*** Շրջակա միջավայրի ոլորտների նկարագրություն: ***Թեմա 8՝*** Պոպուլյացիոն էկոլոգիա: ***Թեմա 9՝*** Շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերը: Գլոբալ էկոլոգիական պրոբլեմներ:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

3.2 Կամընտրական դասընթացներ

0105/B04 «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է հումանիտար մասնագիտության ուսանողների մոտ ձևավորել մասնագիտական խնդիրների ճիշտ ձևակերպման մտածողության, այդ խնդիրների լուծման արդյունավետ և ռացիոնալ ճանապարհների ընտրության ճիշտ կողմորոշման մաթեմատիկական ունակություն: Հստակ ուշադրություն դարձնել մասնագիտական աշխատանքի հետ կապված անհրաժեշտ մաթեմատիկական հաշվարկներ կատարելու մաթեմատիկական մշակույթի ձևավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի թվերի տեսության հիմունքներին և նրանց մաթեմատիկական հաշվարկներ կատարելու հնարքներին,
2. կհասկանա մաթեմատիկայի լեզուն և կկարողանա արդյունավետ կիրառել մասնագիտական ոլորտներում,
3. կկարողանա թվերով, գծապատկերներով, սանդղակներով ձևավորել վերջնարդյունք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բնական, ամբողջ, ռացիոնալ, իռացիոնալ, իրական և կոմպլեքս թվեր, անվերջ փոքրեր և անվերջ մեծեր: **Թեմա 2՝** Անալիտիկ երկրաչափությունը հարթության վրա: Էվկլիդեսի եռաչափ տարածությունը: **Թեմա 3՝** Ֆունկցիա: Տարրական ֆունկցիաներ: Ֆունկցիայի անընդհատությունը և սահմանը: Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվներ: Նրանց կիրառական նշանակությունը: **Թեմա 4՝** Բազմությունների տեսության տարրերը: Պատահույթների հավանականությունը: Վիճակագրության տարրերը: **Թեմա 5՝** Մաթեմատիկական մոդելավորում և հաշվողական էքսպերիմենտներ: Կերպարների մաթեմատիկական ընկալումներ: Համակարգիչը և կյանքը:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

0105/B04. «ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՆՑԵՊՏԻՄՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության հիմնական սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները,

2. կիսականա բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները,
3. կկարողանա կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2՝** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: **Թեմա 3՝** Աշխարհի մեխանիստական պատկերը: **Թեմա 4՝** Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: **Թեմա 5՝** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: **Թեմա 6՝** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: **Թեմա 7՝** Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: **Թեմա 8՝** Անոթոշությունը աշխարհում: Անոթոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 9՝** Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 10՝** Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 11՝** Մոլորակների կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 12՝** Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 13՝** Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: **Թեմա 14՝** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 15՝** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

4.1 «Պատմություն» մասնագիտություն

0304/B18. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (60 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ հայ ժողովրդի հին և միջին շրջանի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կկարողանա ներկայացնել հայ ժողովրդի պատմության հին և միջին դարերի շրջանների պատմությունը.
2. կկարողանա վերլուծել հայոց հին և միջին շրջանի պատմությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական դասախոսություն և հնագույն պատմություն: **Թեմա 2՝** Հայկյանների և Վանյան թագավորություններ: Հայաստանի Երվանդական թագավորություն: **Թեմա 3՝** Հայաստանն Առաջավոր Ասիայի հզոր տերություն: **Թեմա 4՝** Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը: **Թեմա 5՝** Քրիստոնեության հռչակումը Հայաստանի պետական կրոն: **Թեմա 6՝** Մեծ Հայքի թագավորությունը 4-5-րդ դդ.: **Թեմա 7՝** Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը: **Թեմա 8՝** Հայաստանը 5-9-րդ դդ.: **Թեմա 9՝** Հայ ազատագրական պայքարը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B14 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՂՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի պատմական աշխարհագրության՝ Հայկական լեռնաշխարհի, էթնիկ հիմնահարցերի, վարչական բաժանումների, քաղաքների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կրելի չայկական լեռնաշխարհի և նրա ժողովրդագրության վերաբերյալ,
2. կայուն գիտելիքներ կունենա պատմական Հայաստանի պատմական աշխարհագրությունից,
3. կկարողանա տիրապետել պատմական Հայաստանի աշխարհագրությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները: **Թեմա 2՝** Հին Հայաստանի բնակչությունը: **Թեմա 3՝** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները և նրանց քաղաքական ու տնտեսական նշանակությունը: **Թեմա 4՝** Հին Հայաստանի տերիտորիալ և վարչական բաժանումը Ք.ա. 5-րդ դարից մինչև 1-ին դարը: **Թեմա 5՝** Հին Հայաստանի պատմաշխարհագրական նկարագիրը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B24. «ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տեղեկություններ հաղորդել Հին արևելյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման միտումների մասին: Տալ գիտելիքներ այդ քաղաքակրթությունների տիպաբանության, հին արևելյան հասարակությունների կառուցվածքի, գաղափարախոսության, կրոնի և մշակույթի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հին արևելյան խոշոր քաղաքակրթությունների տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի առանձնահատկությունները,
2. կկարողանա նրանց պատմության կոնկրետ փաստերն ու իրողությունները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների դիտանկյունից:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հին Արևելք հասկացությունը: **Թեմա 2՝** Հին Եգիպտոս: **Թեմա 3՝** Հին Միջագետք (Շումեր, Աքադ, Բաբելոն): **Թեմա 4՝** Ասորեստան: **Թեմա 5՝** Պաղեստին: **Թեմա 6՝** Փյունիկիա: **Թեմա 7՝** Խեթական թագավորություն: **Թեմա 8՝** Հին Հնդկաստան: **Թեմա 9՝** Հին Չինաստան:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B46. «ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)
Շաբաթական՝ 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ պատկերացում ձևավորել նախնադարյան հասարակության զարգացման հիմնական էտապների մասին, գիտելիքներ տալ հոմինիդների ընտանիքի զարգացման և ժամանակակից մարդու ձևավորման գործընթացի մասին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտրոպոգենեզի հիմնական էտապները, գիտելիքներ կունենա հոմինիդների բրածո ներկայացուցիչների, նրանց տարածման տիրույթների և աշխատանքային գործունեության մասին,
2. պատկերացում կունենա սոցիո -, կուլտուրո -, պոլիտեգենեզի հիմնական էտապների զարգացման տրամաբանության մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նախնադարի պատմության առարկան, նշանակությունը, պարբերացումն ու ժամանակագրությունը: **Թեմա 2՝** Նախնադարի դարաշրջանի պատմական աղբյուրները: **Թեմա 3՝** Նախնադարի պատմության պատմագրությունը: Հին մարդկանց պատկերացումները ժողովուրդների մասին: Ազգաբանական դիտարկումները միջնադարում: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և ազգաբանական գիտելիքների ընդլայնումը: Նախնադարյան հասարակության մասին գիտելիքների կուտակումը և դրանց ընդհանրացումները XIX դարում: **Թեմա 4՝** Նախնադարի հասարակության կազմավորումը. նախահամայնքի դարաշրջանը՝ մարդու ծագումը: Մարդագայացման պրոցեսի շարժիչ ուժերը: Մարդու մերձավոր նախնիները և մարդացման գործընթացի տեղն ու ժամանակը: Հնագույն և հին հոմինինները: **Թեմա 5՝** Մարդկային հասարակության ծագումը՝ նախահամայնք: Սեռական հարաբերությունները նախահամայնքում: Մտածողության և խոսքի ծագման խնդիրը: Գաղափարական պատկերացումների սաղմերը: **Թեմա 6՝** Մարդագայացման պրոցեսի ավարտը, ժամանակակից տեսակի մարդու հանդես գալը, ռասսաների ծագումը, համայնատոհմական կարգերի առաջացումը: **Թեմա 7՝** Վաղ նախնադարյան համայնքը: Սեռատարիքային խմբերը վաղ նախնադարյան համայնքում, ինիցիացիա: Ամուսնությունը և ընտանիքը, իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը վաղ նախնադարյան համայնքում: **Թեմա 8՝** Ուշ նախնադարյան համայնք: Արտադրող տնտեսության առաջացումը, բնակչությունը և նրա վերարտադրությունը: Սեռատարիքային

կազմակերպություններ: Ամուսնությունը և ընտանիքը: Իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը: **Թեմա 9՝** Դասակարգային հասարակության հաստատությունների հանդես գալը: Ստրկությունը և նրա ձևերը: Մենամուսնական ընտանիք: Դրացիական համայնքի ձևավորումը: Հոգևոր մշակույթի զարգացումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B02. «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 1-ին, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ մշակույթը մինչև 5-րդ դար: Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: **Թեմա 2՝** Պատմագրություն: **Թեմա 3՝** Հայ միջնադարյան գրականությունը: **Թեմա 4՝** Հայ նոր գրականությունը: **Թեմա 5՝** Հայ նորագույն գրականությունը: **Թեմա 6՝** Արդի հայ գրականությունը և նրա զարգացման միտումները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

0304/B19. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -2 (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (55 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել միջնադարում հայոց պետականության գլխավոր փուլերի, հայոց բանակի ու

հայ զինվորականության դերի, հայ եկեղեցու և պետության փոխհարաբերությունների, զարգացած ավատատիրության և ուշ միջնադարյան դարաշրջանների առանձնահատկությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ներկայացնել հայոց միջնադարյան պետականության առանձնահատկությունները, զարգացման ընթացքը և փուլերը.
2. կկարողանա պատկերացնել հայ իրականության մեջ զարգացած ավատատիրական հարաբերությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները.
3. կկարողանա համադրել պատմական փաստերը, համակողմանի գնահատել երևույթները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայաստանի անկախության վերականգնումը, Բագրատունիների թագավորության հռչակումը և ամրապնդումը: ***Թեմա 2՝*** Բագրատունիների թագավորությունը խաղաղ զարգացման և տնտեսական վերելքի ժամանակաշրջանում: ***Թեմա 3՝*** Բագրատունիների թագավորության թուլացումն ու անկումը: ***Թեմա 4՝*** Հասարակական-տնտեսական հարաբերությունները և պետական կարգը 9-11-րդ դարերում, թոնդրակյան շարժումը և գյուղացիական ելույթները Հայաստանում 9-11-րդ դարերում: ***Թեմա 5՝*** Հայ ժողովրդի պայքարը սելջուկ-թուրքերի դեմ, Զաքարյանների իշխանությունը, տնտեսական կյանքը, հայկական իշխանական տները 13-րդ դ.-14-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 6՝*** Կիլիկյան Հայաստանը 11-14-րդ դարերում: ***Թեմա 7՝*** Հայկական մշակույթը 9-րդ դարում-14-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 8՝*** Հայաստանը 14-րդ դարի երկրորդ կեսին-17-րդ դարի առաջին կեսին: ***Թեմա 9՝*** Հայկական մշակույթը 14-րդ դարի երկրորդ կեսին-17-րդ դարի առաջին կեսին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B25. «ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՈՈՄԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (60 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պրակտիկ և տեսական գիտելիքներ անտիկ քաղաքակրթությունների առանձնահատկությունների մասին: Ներկայացնել քաղաք-պետությունների (պոլիսի) ձևավորումը, դրանց առաջացման առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա հին հունական քաղաքակրթության կոնկրետ պատմության փաստերը, իրողությունները և կկարողանա դրանք շարադրել իբրև միասնական պատմություն՝ միկենյան կենտրոններից մինչև դեմոկրատական պոլիս.
2. կկարողանա ճշգրիտ որոշել քաղաքացիական հասարակության հիմնարար չափումները և տեսնել դրա հեռանկարները միջնադարյան պատմության մեջ.
3. կկարողանա հասկանալ անտիկ մշակույթի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը համաշխարհային պատմության վրա:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ ժամանակաշրջան հասկացությունը: Հին Հունաստանի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը: ***Թեմա 2՝*** Էգեյան կամ Կրետե-միկենյան ժամանակաշրջան /Ք.ա. 3-2-րդ հազարամյակ/: ***Թեմա 3՝*** Հունաստանը նախապոլիսյան դարաշրջանում /Ք.ա. 11-9-րդ դդ./: ***Թեմա 4՝*** Հունաստանը արխայիկ դարաշրջանում /Ք.ա. 8-6-րդ դդ./: ***Թեմա 5՝*** Դասական Հունաստանը /Ք.ա. 5-4-րդ դդ./: ***Թեմա 6՝*** Հելլենիզմի շրջան /Ք.ա. 4-1-ին դդ./: ***Թեմա 7՝*** Հռոմի հիմնադրումը և թագավորության շրջանը: ***Թեմա 7՝*** Հին Հռոմի պատմության սկզբնաղբյուրները և պատմագրությունը: ***Թեմա 8՝*** Հռոմեական Հանրապետություն: ***Թեմա 9՝*** Հռոմեական Հանրապետության անկումը: ***Թեմա 10՝*** Կայսրության առաջացումը Հռոմում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B15. «ԳՐԱԲԱՐ» -1 (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական և բառային իրողությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կլիմանա գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական և բառային հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի հնչյունաբանական, բառապաշարային, վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարը՝ որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: **Թեմա 3՝** Գրաբարի դերբայները: **Թեմա 4՝** Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակները: **Թեմա 5՝** Գրաբարի անկանոն բայերը: **Թեմա 6՝** Գրաբարի պակասավոր բայերը: Պատճառական բայեր. գրաբարի բաղադրյալ ժամանակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B35. «ՌՈՒՄՍՍՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, ճիշտ պատկերացում կունենա ներկա զարգացումների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Սլավոնական ցեղերից Արևելյան սլավոնների աշխարհագրական առանձնացումը: Ռյուրիկովյան դինաստիան և հին ռուսական Ռյուրիկյան պետության՝ Կիևյան Ռուսիայի կազմավորումը: **Թեմա 2՝** Ռուս-բյուզանդական առաջին պայմանագիրը: Դրեվյանների ապստամբությունը և Օլգայի բարեփոխումները: Սվյատոսլավ մարտիկ-իշխանը և բալկանյան քաղաքականությունը: Կիևյան Ռուսիայի պետական կառուցվածքը: **Թեմա 3՝** Վլադիմիրը որպես մեծ իշխան. քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն: **Թեմա 4՝** Յարոսլավ Իմաստունի ժամանակաշրջանը (1019-1054թթ.): **Թեմա 5՝** Վլադիմիր Մոնոմախ (1113-1125թթ.): **Թեմա 6՝** Կիևյան Ռուսիայի քաղաքական մասնատումը: **Թեմա 7՝** Կիևյան Ռուսիայի կուլտուրան X – XIII դդ.: **Թեմա 8՝** Ռուսիան թաթար-մոնղոլական լծի տակ և դրա հետևանքները: **Թեմա 9՝** Հյուսիս-Արևելյան Ռուսիայի վերածնունդը և Մոսկովյան իշխանության ուժեղացումը (Իվան Կալիտա. 1325-1344թթ., Դմիտրի Դոնսկոյ. 1359-1389թթ., Վասիլի I. 1389-1425թթ., Վասիլի

II. 1425-1462թթ.): **Թեմա 10՝** Իվան III. 1462-1505թթ.: Թաթար-մոնղոլական լծի թոթափումը և ռուսական կենտրոնացված պետության կազմավորումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B36. «ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում.
3. հստակ պատկերացում կկունենա ներկա զարգացումների մասին, կկարողանա կատարել ճիշտ հետևություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Իվան IV-ի (Ահեղի) գահակալությունը և բարեփոխումները: Արտաքին քաղաքականությունը: **Թեմա 2՝** Ռյուրիկովյան դինաստիայի ընդհատումը և Բորիս Գոդունովի ներքին և արտաքին քաղաքականությունը: Խռովության և խառնակության շրջանը: Գյուղացիության ճորտացումը: Ռոմանովյան դինաստիայի գահակալումը: Ռեկրաինայի միացումը Ռուսաստանին: **Թեմա 3՝** Պյոտր Մեծի ժամանակաշրջանը. 1689-1725թթ.: **Թեմա 4՝** Ռուսաստանը Եկատերինա Մեծի գահակալության շրջանում. 1762-1796թթ.: **Թեմա 5՝** Ալեքսանդր I. 1801-1825թթ.: 1812թ. հայրենական պատերազմը: **Թեմա 6՝** Դեկաբրիստների ապստամբությունը: **Թեմա 7՝** Ղրիմի պատերազմը և ճորտատիրական իրավունքի վերացումը: **Թեմա 8՝** Հետոեֆորմյան շրջանի բուրժուական բարեփոխումները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B20. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -3(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնավոր գիտելիքներ հաղորդել 17-րդ դարի կեսերից մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ընդգրկող ժամանակաշրջանի հայոց պատմության առանձնահատկությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի, ինչպես նաև Հայաստանի հասարակական-տնտեսական ու մշակութային կյանքի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կրերի ազատագրական պայքարի, Հայկական հարցի առաջացման և բովանդակության, Հայաստանում ռուսական տիրապետություն հաստատելու վերաբերյալ.
2. ձեռք կրերի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտություն, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական հարցի առաջացումը, բովանդակությունը: ***Թեմա 2՝*** Ազատագրական պայքարը (17-րդ դարի 2-րդ կես-18-րդ դարի առաջին կես): ***Թեմա 3՝*** Հայ ազատագրական շարժումները (18-րդ դարի երկրորդ կեսին): ***Թեմա 4՝*** Հայաստանի սոցիալ- տնտեսական կացությունը (17-րդ դարի կես-19-րդ դարի սկիզբ): ***Թեմա 5՝*** Ռուսաստանի տիրապետությունը Արևելյան Հայաստանում: ***Թեմա 6՝*** Հայաստանը 1830-60-ական թթ.: ***Թեմա 7՝*** Հայ հասարակական-քաղաքական միտքը և ազատագրական շարժումները: ***Թեմա 8՝*** Հայկական մշակույթը (17-րդ դարի երկրորդ կես-19-րդ դարի առաջին կես): ***Թեմա 9՝*** Հայկական գաղթավայրերը (17-րդ դարի երկրորդ կես-19-րդ դարի առաջին կես):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B16. «ԳՐԱԲԱՐ» -2 (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի ձևաբանական և շարահյուսական իրողությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները.
2. կհասկանա գրաբար տեքստերը.

3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարի անվանական հոլովումը: **Թեմա 2՝** Գրաբարի դերանվանական հոլովումը: Անձնական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 3՝** Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 4՝** Ստացական և փոխադարձ դերանուններ: Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: Որոշյալ դերանուններ: **Թեմա 5՝** Ածական անուն. ածականների համեմատության աստիճանների կազմությունը: **Թեմա 6՝** Թվականը գրաբարում: **Թեմա 7՝** Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B28. «ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելիքների համակարգ միջնադարի վերաբերյալ: Ցույց տալ անցումը դեպի միջնադար, ձևավորել միջնադարի հիմնարար առանձնահատկությունները՝ ֆեոդալական հասարակության գաղափարաբանությունը, մշակույթը: Ներկայացնել եվրոպական միջնադարյան հասարակությունների պատմությունը և տիպաբանությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կունենա ճշգրիտ գիտելիքներ միջնադարյան հասարակության կառուցվածքի վերաբերյալ, կկարողանա համեմատել Եվրոպայի, Մերձավոր Արևելքի ֆեոդալական հասարակարգի զարգացման միտումները.
2. կկարողանա բացահայտել միջնադարյան քաղաքակրթության բովանդակությունը.
3. կկարողանա հասկանալ հասարակական կյանքի վրա համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության, իսլամի, բուդդայականության ազդեցությունը,
4. կկարողանա հասկանալ ժամանակակից ազգությունների և պետությունների ծագումն ու զարգացման տենդենցները.
5. կհասկանա հասարակական, մշակութային, քաղաքական ոլորտներում դեր ունեցած բարեփոխական-ռեֆորմիստական և հեղափոխական իրողությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջին դարերի պարբերացումը և աղբյուրները: **Թեմա 2՝** Հռոմեական ստրկատիրական հասարակարգի ճգնաժամն ու փլուզումը: **Թեմա 3՝** Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը և բարբարոսական թագավորությունների կազմավորումը: **Թեմա 4՝** Մերովինգների ֆրանկական պետությունը: **Թեմա 5՝** Կարոլինգների ֆրանկական միապետությունը: **Թեմա 6՝** Բյուզանդիան 6-11-րդ դդ.: **Թեմա 7՝** Ֆեոդալիզմը Արևմտյան Եվրոպայում 9-11-րդ դդ.: **Թեմա 8՝** Խաչակրաց արշավանքները: **Թեմա 9՝** Ֆրանսիան 11-15-րդ դդ.: **Թեմա 10՝** Անգլիան 11-14-րդ դդ.: **Թեմա 11՝** Բյուզանդիան 14-15-րդ դդ.:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B45. «ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (55 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել բազային գիտելիքներ հնագիտության դիսցիպլինի տեսության, տերմինաբանության, կարևորագույն հնագիտական մշակույթների և քաղաքակրթությունների ու մշակույթի հաջորդական զարգացման փուլերի և առանձնահատկությունների մասին: Տալ գիտելիքներ Հայաստանի հնագիտության կարևորագույն հնագիտական մշակույթների, փուլաբաժանումների և այլնի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կյուրացնի հնագիտության տեսության խնդրացանկը,
2. կընկալի հնագիտական պեղումների, պարբերացման և պատմա-մշակութային գործընթացների տրամաբանությունը,
3. կկարողանա կատարել վերլուծական բնույթի պատմա-հնագիտական աշխատանք, պատրաստ կլինի գիտելիքները կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հնագիտություն առարկան, խնդիրները, տեղը պատմական գիտությունների համակարգում: Մշակույթի նյութական մնացորդների հնագիտական ուսումնասիրություններն ու նրանց պատմական արժեքը: **Թեմա 2՝** Հնագիտության փորձարարական հնարավորությունները և տերմինաբանությունը **Թեմա 3՝** Հնագիտական ուսումնասիրության աստիճանները, կիրառվել մեթոդները: **Թեմա 4՝** Պատմության և մշակույթի պատմա-

հնագիտական պարբերացումը, ժամանակագրությունը: **Թեմա 5՝** Հայոց պատմության հնագիտական ուսումնասիրությունը մինչև արտադրական տնտեսության ձևավորումը: **Թեմա 6՝** Արտադրական տնտեսության ձևավորումը Հայկական լեռնաշխարհում և Մերձավոր Արևելքում: Կոմպլեքսային հասարակության կառուցվածքն ու գործունեության ոլորտները: **Թեմա 7՝** Հայաստանում վաղ դասակարգային հասարակության հնագիտական ուսումնասիրության նախնական արդյունքները: Հնագույն պետականության սաղմնավորումն ըստ Հայաստանի հնագիտության: **Թեմա 8՝** Տավուշի մարզի հնագիտական հուշարձանները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B21. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -4 (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (55 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել Հայոց պատմության նոր ժամանակաշրջանի՝ 1877-1878 թ. ռուս-թուրքական պատերազմից մինչև 1918թ. Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանն ընդգրկող հիմնախնդիրները, որը հնարավորություն կտա ձևավորել հայոց նոր պատմության իմացություն՝ բազմաթիվ նորահայտ նյութերի ներկայացման և մեկնաբանման միջոցով:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ներկայացվող ժամանակաշրջանի նոր պատմության հիմնախնդիրները,
2. ձեռք կբերի պատմական փաստերը համադրելու և ինքնուրույն վերլուծության ենթարկելու որոշակի հմտություն, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 2՝** Բեռլինի կոնգրեսի պատմական դասերը: **Թեմա 3՝** Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: **Թեմա 4՝** Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: **Թեմա 5՝** Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի կենսագործման սկիզբը: **Թեմա 6՝** Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: **Թեմա 7՝** Հայկական հարցը և մեծ տեղությունները 1890-ական թթ.: **Թեմա 8՝** Հայաստանը 20-դ դարի սկզբին. Հայոց

Մեծ Եղեռնը: **Թեմա 9** Հայաստանը 1917թ. փետրվարյան հեղափոխության շրջանում: **Թեմա 10** Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B33. «ՈՒՐԲԱՆԻՉՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ուրբանիզացման գլոբալ հիմունքները, ուրբանիզացիայի հետազոտությունը, նրա համակարգային մոտեցումը գեոուրբանիստիկայում, քաղաքային բնակչության թվի շարժընթացը և ուրբանիզացման գործընթացները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կկարողանա ներկայացնել ուրբանիզացման հիմնախնդիրները,
2. Կկարողանա դիտարկել քաղաքային համակարգերի փոփոխությունը, քաղաքային բնակչության թվի շարժընթացը ուրբանիզացիայի համապատկերում, ինչպես նաև տարածքային զարգացման օրինաչափությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: **Թեմա 2՝** Ժամանակակից ուրբանիզացման անտրոպոմշակութային պարադիգման: **Թեմա 3՝** Ուրբանիզացման գլոբալ հիմունքները: **Թեմա 4՝** Ուրբանիզացված տարաբնակեցում: **Թեմա 5՝** Ուրբանիզացիայի հետազոտությունը: **Թեմա 6՝** Հետազոտության համակարգային մոտեցումը գեոուրբանիստիկայում: **Թեմա 7՝** Քաղաքը որպես համակարգ մեծ քաղաքների համակարգում: **Թեմա 8՝** Ագլոմերացիաներ: **Թեմա 9՝** Ուրբանիզացված շրջան եւ գոտի: **Թեմա 10՝** Մեգապոլիս: **Թեմա 11՝** Խոշորագույն քաղաքային համակարգերի փոփոխությունը հեռանկարում: **Թեմա 12՝** Քաղաքային բնակչության թվի շարժընթացը: **Թեմա 13՝** Ուրբանիզացիայի տարածքային զարգացման օրինաչափությունները: **Թեմա 14՝** Խորհրդային Միության ուրբանիզացման առանձնահատկությունները: **Թեմա 15՝** Նոր քաղաքներ. վերացական գաղափարներ եւ իրատեսական վիճակներ: **Թեմա 16՝** Հայաստանի քաղաքային բնակչության թվի շարժընթացը և ուրբանիզացման գործընթացները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

0304/B29. «ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է բացահայտել միջնադարյան առևտրատնտեսական բաղկացուցիչի և կապիտալի համաշխարհային ընդլայնման գործընթացը: Ներկայացնել Եվրոպայում (Գերմանիա, Շվեյցարիա) հումանիստական և ռեֆորմիստական շարժումների զարգացումը և ընթացքը, դրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական պատմության վրա: Նշել վերածննդի օրինաչափությունները, վերածննդի իրողությունները և աշխարհի պատկերի ընդլայնման իրողությունը: Ներկայացնել առաջին բուրժուական հեղափոխությունը Եվրոպայում (Նիդեռլանդներ) և նրա նշանակությունը: Ներկայացնել համաեվրոպական առաջին խոշոր հակամարտությունը (Երեսնամյա պատերազմ) և միջազգային հարաբերությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ներկայացնել վերածննդի արմատական փոփոխությունների քաղաքակրթական բովանդակությունը, քաղաքային կյանքը, աշխարհիկ գիտելիքները, ռեֆորմացիան.
2. կհասկանա նոր աշխարհընկալման ընդլայնումը.
3. կհասկանա նիդեռլանդական բուրժուական հեղափոխության նշանակությունը Եվրոպայում բուրժուա-դեմոկրատական կարգերի ձևավորման առումով.
4. կհասկանա միջազգային իրավիճակի սրումը Եվրոպայում, հակասությունների հետևանքները ուշ միջնադարում.
5. կկարողանա ցույց տալ միջնադարյան քաղաքակրթության աստիճանական քայքայումը և անցումը դեպի նոր արդյունաբերական հասարակության:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կապիտալիստական հարաբերությունների առաջացումը Արևմտյան Եվրոպայի երկրներում: **Թեմա 2՝** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները 15-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբին: **Թեմա 3՝** Գերմանիան 16-17-րդ դդ.: **Թեմա 4՝** Ռեֆորմացիան Շվեյցարիայում: Հակառեֆորմացիան Եվրոպայում: **Թեմա 5՝** Իսպանիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 6՝** Նիդեռլանդական հեղափոխությունը: **Թեմա 7՝** Իտալիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 8՝** Անգլիան 16-րդ դարում: **Թեմա 9՝** Ֆրանսիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 10՝** Սկանդինավիան 16-րդ դարում և 17-րդ դարի առաջին կեսին: **Թեմա 11՝** Միջազգային հարաբերությունները 17-րդ դարի առաջին կեսին: Երեսնամյա պատերազմը (1618-1648թթ.):

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B07. «ԱԶԳԱԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել գիտության ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հիմնախնդիրները, աշխարհի ժողովուրդների էթնիկական, մարդաբանական, դավաբանական, էթնոլեզվական, աշխարհագրական, տնտեսամշակութային բնութագիրը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կծանոթանա աշխարհի ժողովուրդների էթնիկ գործընթացների, էթնոլեզվաբանական պատկանելիությանը, մարդաբանական, դավանաբանական, էթնոմշակութային հատկանիշներին:
2. Աշխարհի ժողովուրդների տեղին ու դերին, նրանց տարածքային, էթնիկական, լեզվական, մարդաբանական, դավանաբանական բնութագրություններին, էթնոմերձեցման և էթնոձուլման, էթնոանջատման գործընթացներին:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Ազգագրություն առարկան, նպատակը, խնդիրները, ուսումնասիրության կարևորությունը: ***Թեմա 2՝*** Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Գիտության հիմնական հասկացությունները /էթնիկ հանրություն, պատմական տիպերը (ցեղ, ժողովուրդ, ազգ), կառուցվածքային առումները/: «Մշակույթ» հասկացությունը, կառուցվածքը, քառամաս բաժանումը: «Կենցաղ» հասկացությունը, կառուցվածքը/: ***Թեմա 3՝*** Գիտության ուսումնասիրության հիմնախնդիրները: Ազգագրական գիտության կապը հարակից գիտությունների հետ: Ուսումնասիրության մեթոդները: ***Թեմա 4՝*** Աշխարհի բնակչության էթնոլեզվական դասակարգման սկզբունքները. /հնդեվրոպական լեզվաընտանիք սլավոնական, գերմանական, կելտական, ռոմանական, բալթյան, իրանական, հնդիրանական: Մեկուսի ժողովուրդներ/: Աֆրոասիական/ սեմաքամական, ալթայյան /թյուրքական, մոնղոլական, տունգուս-մանջուրական, կորեա-ճապոնական/, կովկասյան /աբխազա-ադաղական, վայնախա-դաղստանյան, քարթվելական/, ֆիննա-ուգրական, չին –տիբեթյան, ավստրոնեզական, պապուասական, թայական, ավստրոասիական, հնեասիական, էսկիմոսա-ալեույան ավստրալական, նիգերկորդոֆանյան էթնոլեզվաընտանիքներ: ***Թեմա 5՝*** Աշխարհի ժողովուրդների մարդաբանական բնութագիրը /եվրոպոիդ, մոնղոլոիդ, նեգրոիդ, ավստրոլոիդ, խառը, մեկուսի/ ռասաներ: ***Թեմա 6՝***

Աշխարհի ժողովուրդների աշխարհագրական դասակարգումը: **Թեմա 7՝** Աշխարհի ժողովուրդների էթնոմշակութային և դավանաբանական դասակարգումը: Աշխարհի ժողովուրդների դավանաբանական քարտեզը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B37. «ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -3 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել Ռուսաստանի պատմության 19-րդ դ. ավարտի և 20-րդ դ. սկզբի, մինչև 1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության ժամանակաշրջանն ընդգրկող պատմական կարևոր իրադարձությունների մասին համապատասխան գիտելիքներ, տալ պատշաճ մասնագիտական պատկերացում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դ. ավարտի և 20-րդ դ. սկզբի Ռուսաստանի պատմության տեսական խնդրացանկը.
2. կհասկանա Ռուսաստանի պատմության տվյալ ժամանակաշրջանի վերլուծական մեթոդի տրամաբանությունը.
3. կկարողանա յուրաքանչյուր թեմայի վերլուծության հիման վրա անել տեսական ընդհանրացումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հեղափոխական նարոդնիկությունը: Ալեքսանդր III-ը (1881-1894թթ.) և ռեակցիայի մոլեգնումը: **Թեմա 2՝** Ռուսաստանի տնտեսական և քաղաքական դեմքը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին. Մերգեյ Վիտտե: 1897-ի մարդահամարը: **Թեմա 3՝** Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում: Քաղաքական կուսակցությունների կազմավորումը: Ռուս-ճապոնական պատերազմը: **Թեմա 4՝** Ռուսական առաջին հեղափոխությունը: 1-ին, 2-րդ և 3-րդ Պետական Դումաները: **Թեմա 5՝** Ստոլիպինի ագրարային ռեֆորմը: **Թեմա 6՝** Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Ռասպուտին: **Թեմա 7՝** Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում: Նիկոլայ II-ի հրաժարականը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B22. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -5 (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (55 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները, ներկայացնել նորահայտ նյութերը և այլն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կբերի Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ.
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական դասախոսություն. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.: **Թեմա 2՝** Անկախ պետականության ստեղծումը: **Թեմա 3՝** Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: **Թեմա 4՝** Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը: **Թեմա 5՝** Հայկական հարցը 1919–1920թթ.: **Թեմա 6՝** Հայաստանի Հանրապետության անկումը: **Թեմա 7՝** Հայկական մշակույթը 1918–1920թթ. :

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B44. «ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին հաղորդել տեսական գիտելիքներ թանգարանագիտության վերաբերյալ, ներկայացնել թանգարանագիտությունը որպես գիտություն, դրա ուսումնասիրության առարկան և օբյեկտը, թանգարանագիտական հիմնական հասակացությունները, թանգարանագիտության կապը և տեղը մյուս գիտությունների համակարգում: Ուսանողին ամբողջական գիտելիքներ է տրվում արխիվների, արխիվային գործի, արխիվային գործառույթների և արխիվային վավերագրերը մշակելու և օգտագործելու վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա թանգարանների ստեղծման պատմությունը և կծանոթանա թանգարանների կառուցվածքին,
2. կճանաչի ու նորովի կգնահատի մշակութային արժեքներն ու թանգարանների դերը դրանց պահպանման և սերունդներին փոխանցելու գործում,
3. ամբողջական գիտելիքներ կստանա արխիվային գործի սկզբնավորման, զարգացման և առաջիկա հեռանկարների վերաբերյալ,
4. կկարողանա մշակել վավերագրերը և օգտագործել իր գիտական հետազոտություններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թանգարանների ծագման պատմությունից: ***Թեմա 2՝*** Հայաստանի թանգարանների պատմությունից: ***Թեմա 3՝*** Թանգարանագիտությունը որպես գիտություն, ուսումնասիրության առարկան, օբյեկտը: ***Թեմա 4՝*** Թանգարանագիտական հիմնական հասկացությունները: ***Թեմա 5՝*** Թանգարանագիտության մեթոդը, կառուցվածքը, տեղը մյուս գիտությունների համակարգում: ***Թեմա 6՝*** Թանգարանների հիմնական սոցիալական խնդիրները: ***Թեմա 7՝*** Թանգարանային ֆոնդեր: ***Թեմա 8՝*** Թանգարանների կառավարում և մարքեթինգ: ***Թեմա 9՝*** Թանգարանների դասակարգումը ըստ տիպերի: ***Թեմա 10՝*** Ցուցադրություն, ցուցահանդես: ***Թեմա 11՝*** Ցուցադրության տեքստեր: ***Թեմա 12՝*** Թանգարանի հանրահոշակում, ինֆորմացիա և գովազդ: ***Թեմա 13՝*** ԻԿՈՄ-ի պատմությունը, թանգարանների բարեկամների ասոցիացիա: ***Թեմա 14՝*** Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը թանգարաններում: ***Թեմա 15՝*** Ներածական դասախոսություն: ***Թեմա 16՝*** Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 17՝*** Վաղ միջնադարյան Հայաստանի սկզբնաղբյուրները: ***Թեմա 18՝*** Հայաստանի զարգացած միջնադարի սկզբնաղբյուրները: ***Թեմա 19՝*** Հայաստանի ուշ միջնադարի պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 20՝*** Հայոց նոր պատմության սկզբնաղբյուրները: ***Թեմա 21՝*** Հայոց նորագույն պատմության սկզբնաղբյուրները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B30. «ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (55 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է եվրոպական առաջատար երկրների պատմության մեկնությամբ ներկայացնել 17-ից 19-րդ դարերում արևմտյան աշխարհում լուսավորական գաղափարների ազդեցությամբ ընթացող սոցիալական, քաղաքական, մշակութային, տնտեսական նորացման գործընթացներին: Կքննարկվեն Վեսթֆալյան համակարգի ձևավորումը, առանձնահատկությունները և դերակա-

տարները, քաղաքական-պետական միավորների տարատեսակները, ազգ-պետությունների ձևավորումն ու արդիականացման միտումները, բնութագրիչները, պետության գործառնությունները և իշխանության իրականացման ոլորտները, ռազմական համակարգերի տարատեսակներն ու կազմակերպման փոփոխությունները, քաղաքական համակարգերի փոփոխման ձևերը, նոր ձևավորվող միջազգային հարաբերությունների համակարգում ուժերի հարաբերակցությունը, կոնֆլիկտների տարատեսակները, համագործակցության շրջանակներն ու մեխանիզմները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կըմբռնի արդիական պետության ձևավորման համատեքստը, ֆեոդալական հաստատություններից դեպի ներկայացուցչական հաստատություններ անցումը, հասարակության քաղաքական պասիվությունից անցումը դեպի ակտիվ մասնակցային նոր ձևերի և նորացման գործընթացի ծավալումը
2. կկարողանա ավելի խորը և համապարփակ ընկալել ու վերլուծել պատմական գործընթացները
3. կկարողանա արևմտյան պատմության հենքի վրա ըմբռնել արդի համաշխարհային քաղաքականության համատեքստում տեղի ունեցող քաղաքական և հասարակական փոփոխությունների տրամաբանությունը:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Վեստֆալյան համակարգի ձևավորումը: ***Թեմա 2՝*** Անգլիայում միապետական հաստատության առանձնահատկությունները: ***Թեմա 3՝*** Սոցիալական շերտերը, քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, պետական կառավարման վերափոխումները: ***Թեմա 4՝*** Ֆրանսիական հասարակության սոցիալական կառուցվածքը և պետական կարգը: Հեղափոխություն տերմինի ձևակերպումը, պետական-հասարակական ճգնաժամի խորացումը, հեղափոխական կառավարման համակարգը: ***Թեմա 5՝*** Բոնապարտի վարչակարգը, արտաքին քաղաքականությունը և պատերազմները, հետպատերազմյան կարգավորումները Եվրոպայում: ***Թեմա 6՝*** Բուրբոնների վերականգնումը, Հուլիայան միապետությունը, Երկրորդ կայսրությունը: ***Թեմա 7՝*** ԱՄՆ-ի տարածքում գաղութների ձևավորումը և դրանց անկախացումը, ԱՄՆ-ում քաղաքական համակարգի ձևավորումը, դաշնային և նահանգային լիազորությունների սահմանազատման հիմնահարցերը: ***Թեմա 8՝*** Ավստրիական Հաբսբուրգների արտաքին քաղաքական առաջնությունները, Մարիա-Թերեզայի և Հովսեփ II-ի արդիականացման գործընթացը, կայսրության տնտեսական համապատկերը: ***Թեմա 9՝*** Ավստրո-հունգարական դուալիզմի ձևավորումը: ***Թեմա 10՝*** Պրուսիան և Գերմանիայի միավորումը: ***Թեմա 11՝*** Իտալիայի պետական-քաղաքական միավորները և միավորման գործընթացները, միավորված Իտալիայի պետական-քաղաքական կառուցվածքը: ***Թեմա 12՝*** Իսպանական կայսրության թուլացման ներքին պատճառներն ու աշխարհաքաղաքական իրողությունները: ***Թեմա 13՝*** Լեհաստանի պետական-քաղաքական կառուցվածքը, սոցիալ-տնտեսական իրողությունները, պետության թուլացման ներքին պատճառներն ու արտաքին քաղաքական միջավայրի փոփոխությունները, Լեհաստանի մասնատումները: ***Թեմա 14՝***

Արդյունաբերական հեղափոխության առաջնային ոլորտները, ֆինանսավորման աղբյուրները, քաղաքական վերնախավերի և սոցիալական շերտերի շահերը, մասնակցությունն ու շարժառիթները, ժողովրդագրական հիմնախնդիրները, գրագիտությունը, հանրային առողջապահությունը, գյուղատնտեսությունը, քաղաքային միջավայրի փոփոխությունները, հարկադրանքի և կապիտալի համահարաբերակցության մոդելները Եվրոպայում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B38. «ՌՈՒՄՍՍՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ» - 4 (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է գիտա-ճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Ռուսաստանի պատմության պատմական անցյալին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. լիարժեք տեսական գիտելիքներ կունենա նշված ժամանակաշրջանի Ռուսաստանի պատմության մասին.
2. կհասկանա Ռուսաստանի խաղացած դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում.
3. հստակ պատկերացում կկազմի ներկա զարգացումների մասին, կկարողանա կատարել ճիշտ հետևություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ 1917-ի հոկտեմբերը և բոլշևիկների ռազմական հեղաշրջումը: Ժամանակավոր կառավարության ձերբակալումը: Խորհուրդների համառուսաստանյան II համագումարը և ընդունած հիմնարար որոշումը: Կենտգործկոմի և միակուսակցական բոլշևիկյան կառավարության կազմավորումը: ***Թեմա 2՝*** Հոկտեմբերյան հեղափոխության քաղաքական հետևանքները: ***Թեմա 3՝*** Խորհրդային իշխանության առաջին դեկրետները: Կառավարման նոր պետական ապարատի կազմավորումը: ***Թեմա 4՝*** Խորհրդային իշխանության հակադեմոկրատական բնույթը: Ա. Խորհուրդների համառուսաստանյան II համագումարի կողմից իշխանությունը խորհուրդներին հանձնելու որոշման դեմ բողոքը: Բ. Մահմանադիր ժողովի հրավիրումը և ցրումը: ***Թեմա 5՝*** Խորհրդային իշխանության արտաքին քաղաքականությունը և Բրեստ-Լիտվսկի խաղաղության պայմանագիրը: ***Թեմա 6՝*** Ռազմական կոմունիզմ-կոմկուսի 8-րդ համագումարի որոշումները:

Ռազմական կոմունիզմը գյուղում և քաղաքում: **Թեմա 7՝** Սպիտակ շարժում. կամավորական բանակի կազմավորումը: **Թեմա 8՝** Քաղաքացիական պատերազմը: **Թեմա 9՝** Ռազմական կոմունիզմից-նոր տնտեսական քաղաքականությունը՝ ՆԷՊ: Կրոնշտադի ապստամբությունը: Կոմկոուսի 10-րդ համագումարը և որոշումները: ՆԷՊ-ը գյուղում և քաղաքում: **Թեմա 10՝** Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և միջազգային մեկուսացման հաղթահարումը: Անդրֆեդերացիայի ստեղծումը և ԽՍՀՄ-ի կազմավորումը: **Թեմա 11՝** Ներկուսակցական նոմենկլատուրա: Տրոցկին և «46-ի պլատֆորմը»: Նոր կուրս: Լենին-գրադյան ընդդիմությունը և նրա ջարդը: **Թեմա 12՝** Ինդուստրացում և կոլեկտիվացում: **Թեմա 13՝** «Դասակարգային պատերազմի» տեսությունը և բռնությունների ալիքը: **Թեմա 14՝** Խորհրդա-գերմանական պայմանագրերը: Խորհրդա-ֆիննական պատերազմը: **Թեմա 15՝** Խորհրդային Միության հայրենական մեծ պատերազմը: ԽՍՀՄ-ի մասնակցությունը Ճապոնիայի դեմ պատերազմին: **Թեմա 16՝** «Մեծ եղյակի» հանդիպումները: **Թեմա 17՝** Երկու հակադիր սիստեմները և «Սառը պատերազմը»: **Թեմա 18՝** Կյանքը պատերազմից հետո, սպասումներ և իրականություն: **Թեմա 19՝** Ստալինի մահը: Իրադրությունը առանց Ստալինի: Կոմկոուսի 20-րդ համագումարը և «քաղաքական հալոցքը»: **Թեմա 20՝** Միխայիլ Գորբաչովի քաղաքականություն և անկախության հաղթարշավը: Ռուսաստանյան ֆեդերացիայի անկախացումը: **Թեմա 21՝** Նոր Օգարովի համաձայնագիրը: Արտակարգ դրության պետական կոմիտեն և Անկախ պետությունների համագործակցությունը: **Թեմա 22՝** Անկախ Ռուսաստանի 1993թ. Սահմանադրությունը: Ռուսաստանի վարչական կառուցվածքը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B11. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին համաշխարհային պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական հենքի հետ, ցույց տալ աղբյուրների բովանդակությունը և կառուցվածքի առանձնահատկությունները պատմական տարբեր դարաշրջաններում, բացահայտել փաստերից օգտվելու և պատմականորեն շարադրելու ճիշտ մեթոդները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Սկզբնաղբյուրների բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունների, ինչպես նաև փաստերից օգտվելու և կիրարկելու մասին:
2. կողմնորոշվել համաշխարհային պատմության աղբյուրների տիպաբանության մեջ (արձանագրություններ, տարեգրություններ, հուշագրություններ, պատմագիտական աշխատություններ, կինոֆիլմեր),
3. բացահայտել նրանց արժանահավատության մակարդակը և օգտագործել իր պատմական ուսումնասիրություններում և հետազոտություններում,
4. վերլուծել սկզբնաղբյուրների գիտական աշխատանքների տվյալներն ու օգտագործել դրանք իր իսկ կատարած աշխատանքներում:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Պատմական մտքի և պատմական գիտության զարգացումը Անգլիայում 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում: **Թեմա 2՝** Պատմական գիտության զարգացումը Ֆրանսիայում 18-րդ դարում. ֆրանսիական լուսավորության պատմական միտքը: **Թեմա 3՝** Պատմական մտքի զարգացումը Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում 19-րդ դարում: **Թեմա 4՝** Պատմական մտքի զարգացումը ԱՄՆ-ում 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարում: **Թեմա 5՝** Մարքսիստական պատմագրության առաջացումը. Կ.Մարքսի և Ֆ.Էնգելսի պատմական հայացքները: **Թեմա 6՝** Պատմական մտքի զարգացումը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին: **Թեմա 7՝** Պատմական մտքի զարգացումը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում նորագույն ժամանակաշրջանում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B16. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ բազմադարյան մատենագրության ընթացքին՝ աղբյուրագիտական գիտելիքների ձևավորման, կուտակման և համակարգ դառնալու գործընթացին, ներկայացնել ինչպես աղբյուրագիտական նյութերի նախագրային շրջանի, այնպես էլ հետգրային շրջանի աղբյուրների վերլուծությունն ու դասակարգումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի ազգային և օտար բոլոր այն հեղինակների երկասիրություններին, որոնցում խոսվում է հայերի և Հայաստանի մասին,
2. կհասկանա հայ իրականության մեջ աղբյուրագիտական գիտելիքների առաջացման, աստիճանական զարգացման և համակարգման սկզբունքները,
3. ձեռք կբերի սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական լեռնաշխարհի համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 2՝** Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 3՝** Վաղ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 4՝** Զարգացած միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 5՝** Ուշ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B23. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -6 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակողմանի և ամբողջական գիտելիքներ հայոց նորագույն պատմության քաղաքական, տնտեսական և մշակութային հիմնախնդիրների վեաբերյալ, ինչպես նաև պարզաբանել պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ խնդիրները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ամբողջական և համակողմանի գիտելիքներ ձեռք կրերի Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Երրորդ Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ,
2. կկարողանա կատարել ճիշտ վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածական դասախոսություն: **Թեմա 2՝** Խորհրդային Հայաստանը 1920–1922 թթ.: Խորհրդային Հայաստանի ներքին և միջազգային դրությունը: **Թեմա 3՝** Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: **Թեմա 4՝** Խորհրդային Հայաստանը 1922–1941 թթ.: **Թեմա 5՝** Խորհրդային Հայաստանի մշակույթը: **Թեմա 6՝** Հայկական Սփյուռքը 1920-1941թթ.: **Թեմա 7՝** Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: **Թեմա 8՝** Խորհրդային Հայաստանը 1946-1991թթ.: **Թեմա 9՝** Սփյուռքը 1941-1991թթ.: **Թեմա 10՝** Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումը և պետականության կայացման գործընթացը: **Թեմա 11՝** Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը: **Թեմա 12՝** Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը: **Թեմա 13՝** Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: **Թեմա 14՝** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B31. «ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -2 (5կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (55 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմության նոր ժամանակաշրջանի երկրորդ հատվածը 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի սկիզբ: Քննարկել այնպիսի համաշխարհային կարևորության երևույթներ ինչպիսիք են բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունները Եվրոպայում, Գերմանական կայսրության ձևավորումը և քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում: Համաշխարհային գերտերությունների արտաքին քաղաքականության ձևավորումը: Միջազգային իրադրության լարվածությունը, ուժերի նոր դասավորվածությունը և ռազմաքաղաքական դաշինքների ձևավորումը Առաջին Համաշխարհայինից առաջ:

Կրթական արդյունքները

3. Գիտելիքներ կունենա Եվրոպայում 19-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցող ազգային-ազատագրական պայքարի և նոր պետությունների առաջացման պատմական նշանակության վերաբերյալ: Եվրոպայում սկիզբ առած հեղափոխությունների նոր «շքերթի» պատմաքաղաքական նշանակության ու հետևանքների վերաբերյալ:
4. Գիտելիքներ կձևավորի միջազգային հակասությունների նոր փուլի վերաբերյալ, Եվրոպայում և աշխարհում նոր ռազմաքաղաքական դաշինքների ու բաժանարար գծերի առաջացման պատճառների ու հետևանքների մասին, համաշխարհային տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումների վերաբերյալ և Առաջին աշխարհամարտի պատճառների ու հետևանքների, և որպես արդյունք, միջազգային հարաբերությունների նոր համակարգի հաստատման վերաբերյալ:
5. կկարողանա իր ընկալումների հենքի վրա ըմբռնել արդի համաշխարհային քաղաքականության համատեքստում տեղի ունեցող քաղաքական և հասարակական փոփոխությունների տրամաբանությունը:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Ֆրանսիան 19-րդ դարի 2-րդ կեսին- 20-րդ դարի սկզբին: ***Թեմա 2՝*** 1830թ. հուլիսյան հեղափոխությունը: ***Թեմա 3՝*** 1848թ. հեղափոխությունը: Ֆրանս-պրուսական պատերազմի պատճառներն ու սկիզբը: ***Թեմա 4՝*** 1870 թ. սեպտեմբերի 4-ի հեղափոխությունը: Փարիզի կոմունան: ***Թեմա 5՝*** Երրորդ հան-

րապետության պետական կարգը և քաղաքական կյանքը: **Թեմա 6'** 1875թ. Սահմանադրությունը: Արտաքին քաղաքականությունը 1870-1890-ական թթ.: Բուլանժեական ճգնաժամը: **Թեմա 7'** Ֆրանս-ռուսական դաշինքը: Գաղութային քաղաքականությունը: «Պանամայի խաբեությունը»: Դրեյֆուսի գործը: Վալդեբ Ռուսոյի կառավարությունը: «Միլերանի կազուսը»: Ռադիկալների ներքին և արտաքին քաղաքականությունը: **Թեմա 8'** Ժ. Կլեմանսոյի կառավարությունը: Ֆրանսիայի քաղաքական դերն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: **Թեմա 9'** Ա. Բիրանի կառավարությունը: **Թեմա 10'** Ռ. Պուանկարեի իշխանությունը: **Թեմա 11'** Կլեմանսոյի դիկտատորական կառավարության հաստատումը: **Թեմա 12'** Անգլիան 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: **Թեմա 13'** 1832թ. պառլամենտական բարեփոխումը: Զարտիստական շարժումը: Անգլիայի տնտեսական զարգացումը: Գլադստոնի, Դիզրայելի, Սոլսբերիի կաբինետները: **Թեմա 14'** Անգլիայի գաղութային քաղաքականությունը: Լիբերալների հաղթանակը 1906թ.: **Թեմա 15'** Լեյբորիստական կուսակցության առաջացումը: Լյոդղորջիզմ: **Թեմա 16'** Անգլիայի արտաքին քաղաքականությունը 1912-1914թթ., իռլանդական հարցը: **Թեմա 17'** Ամերիկյան գաղութների անկախացումը: **Թեմա 18'** Գերմանական կայսրության կազմավորումը, Գերմանիայի միավորման պատմական անհրաժեշտությունը: **Թեմա 19'** Գերմանիայի միավորման խնդիրը 1850-1860-ական թթ.: Օտտո ֆոն Բիսմարկը և ֆրանս-պրուսական պատերազմը 1870-1871թթ.: **Թեմա 20'** Կայսրության հռչակումը: Գերմանական կայսրությունը 1871-1918թթ.: Կայսրության պետական կարգը և քաղաքական կյանքը: **Թեմա 21'** Քաղաքական կուսակցությունները: Կայսերական կառավարության ներքին ռեֆորմները: «Կուլտուրկամֆ»: **Թեմա 22'** Կապրիվիի կանցլերությունը: Պանգերմանական միությունը: Գերմանիայի պայքարը աշխարհի վերաբաժանման համար: Բյուլովի կանցլերությունը: **Թեմա 23'** Իտալիան 19-րդ դարում և 20-րդ դ. 1848-1849թթ. ազգային հեղափոխությունը: Իտալիայի միավորման սկիզբը: Զ. Գարիբալդի: **Թեմա 24'** Իտալիայի պետական կարգը և քաղաքական կյանքը: Պապական պետությունը: «Աջի» կառավարում: «Չախի» կառավարումը: Իտալիայի արտաքին քաղաքականությունը: **Թեմա 25'** Ֆ. Կրիսպիի անցումը իշխանության գլուխ: Ներքաղաքական դրության սրումը: **Թեմա 26'** Զ. Ջոլիտիի լիբերալ քաղաքականությունը 20-րդ դարի սկզբին: **Թեմա 27'** Իտալո-թուրքական պատերազմը: **Թեմա 28'** ԱՄՆ-ն 19-րդ դարում: ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը և տարածքային աճը: **Թեմա 29'** Աբրիցիոնիզմ: Քաղաքացիական պատերազմը 1861-1865թթ.: Արտաքին քաղաքականությունը: **Թեմա 30'** Ամերիկյան էքսպանսիոնիզմի գաղափարախոսությունը: **Թեմա 31'** «Բաց դռների» դոկտրինան: **Թեմա 32'** Միջազգային հարաբերությունները 1871-1914թթ. Երեք կայսրերի համաձայնությունը: 1875-1878թթ. Արևելյան ճգնաժամը: **Թեմա 33'** Ավստրո-գերմանական դաշինքը /1879թ./: Եռյակ դաշինքը /1882թ./: **Թեմա 34'** Պայքարը Աֆրիկայի և Ասիայի համար: «Ինքնաապահովության» պայմանագիրը: **Թեմա 35'** «Փայլուն մեկուսացման» անգլիական քաղաքականությունը: **Թեմա 36'** Ֆրանս-ռուսական դաշինքը /1891-1893թթ./: Մեծ տերությունները և հակասությունների սրումը Հեռավոր Արևելքում: **Թեմա 37'** Աշխարհի բաժանման ավարտը: Միջազգային հարաբերությունների սրումը Առաջին աշխարհամարտի նախօրյակին: **Թեմա 38'** «Բաց դռների» դոկտրինան: Անգլո-գերմանական հակասությունները: Հեռավորարևելյան հարցը: **Թեմա 39'** Անտանտի կազմավորումը: Առաջին մարտկ-

յան ճգնաժամը /1905-1906թ./: **Թեմա 40՝** Ռուս-գերմանական հակասությունները: **Թեմա 41՝** 1908-1909թթ. Բոսնիական ճգնաժամը: Երկրորդ մարոկկյան ճգնաժամը 1911թ.: **Թեմա 42՝** Իտալո-թուրքական, Բալկանյան առաջին և երկրորդ պատերազմները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B09. «ԱՄԻՍՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (60 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմությունը: Ներկայացնել Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման առանձնահատկությունները միջին և նոր դարերում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի ասիական և աֆրիկյան երկրների զարգացման առանձնահատկությունները.
2. կկարողանա ճշգրտորեն գնահատել ասիական և աֆրիկյան ժողովուրդների ունեցած ավանդը համաշխարհային պատմության մեջ:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն հասկացությունը և նրա տարածաժամանակային սահմանները: **Թեմա 2՝** Ճապոնիան 5-17-րդ դ.դ.: **Թեմա 3՝** Հնդկաստանը 2-14-րդ դ.դ.: **Թեմա 4՝** Արաբական խալիֆայությունը. Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրները: **Թեմա 5՝** Իսլամի ներթափանցումը Ասիայի և Աֆրիկայի երկրներ: **Թեմա 6՝** Մոնղոլական պետության կազմավորումը և նվաճողական արշավանքները: Մոնղոլիան ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանում: **Թեմա 7՝** Չինաստանը 15-17-րդ դ.դ.: **Թեմա 8՝** Ճապոնիան 15-17-րդ դ.դ.: **Թեմա 9՝** Հնդկաստանը 15-17-րդ դ.դ.: **Թեմա 10՝** Արաբական երկրները Օսմանյան կայսրության տիրապետության ներքո: **Թեմա 11՝** Արևելյան Ասիայի և Աֆրիկայի զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 12՝** Ասիայի և Աֆրիկայի երկրները նոր պատմության սկզբին: Մեծ Մոնղոլի կայսրության ճգնաժամը և քայքայումը: **Թեմա 13՝** Հնդկաստանի գաղութացումը Անգլիայի կողմից: **Թեմա 14՝** Օսմանյան կայսրությունը նոր դարաշրջանում: **Թեմա 15՝** Չինաստանը Ցին դինաստիայի իշխանության ներքո: **Թեմա 16՝** Ճապոնիան Տոկուգավայի սյոգունատի ժամա-

նակաշրջանում: **Թեմա 17՝** Հնդկաստանի գաղութային նվաճման ավարտը և գաղութային շահագործումը 19-րդ դ. առաջին կեսին: **Թեմա 18՝** Չինաստանի գաղութացման սկիզբը. Տայպինների գյուղացիական պատերազմը Չինաստանում: **Թեմա 19՝** Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի առաջին կեսին: Ասիայի և Աֆրիկայի արաբական երկրները նոր շրջանում: **Թեմա 20՝** Անավարտ բուրժուական հեղափոխությունը Ճապոնիայում 1868 թ.: Ասիայի և Աֆրիկայի երկրները 1870-1918 թ.թ.: **Թեմա 25՝** Ճապոնիայի վերածումը գաղութային տերության: Ճապոնիայի զարգացումը 19-րդ դ. վերջին երեսնամյակում : Ճապոնիան 1890-1914 թվականներին. Ասիան և Աֆրիկան 19-րդ դարի վերջին երեսնամյակում և 20-րդ դարի սկզբին: **Թեմա 21՝** Հնդկաստանը 19-րդ դ. վերջին երեսնամյակում Հնդկաչինի թերակղզու պետությունները 19-րդ դարի վերջին երեսնամյակին և 20-րդ դարասկզբին /Վիետնամ, Կամբոջա, Լաոս, Սիամ, Բիրմա/: **Թեմա 22՝** Կորեան 19-րդ դ. երկրորդ կեսին և 20-րդ դ. սկզբին: **Թեմա 23՝** Արաբական երկրները 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին: Աֆրիկայի բաժանման ավարտը /19-րդ դ. վերջին երեսնամյակ – 20-րդ դ. սկիզբ/ Հարավային Աֆրիկայի գաղութային բաժանման ավարտը: **Թեմա 24՝** Չինաստանը 19-րդ դարի վերջին երեսնամյակում. Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի վերջին երեսնամյակում ասիական երկրները 1900-1914 թ.թ.: **Թեմա 25՝** Ասիայի զարթոնքը. Օսմանյան կայսրությունը 1900 – 1914 թթ. Չինաստանը 1900 – 1914 թ.թ.: Հնդկաստանը 20-րդ դարի սկզբին: **Թեմա 26՝** Ասիայի և Աֆրիկայի երկրները 20-րդ դարասկզբին: Ճապոնիայի վերածումը գաղութային տերության: Ճապոնիան 20-րդ դարի առաջին կեսին. Ճապոնիայի գաղութային և տնտեսական հավակնությունները և դրա կրախը: **Թեմա 27՝** 1905-1911 թթ. Իրանական հեղափոխությունը, Իրանի զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 28՝** Հնդկաստանը Բրիտանական կայսրության մաս. Ազգային ազատագրական պայքարի վերելքը. Մ. Գանդի, Զ. Ներու Ասիայի և Աֆրիկայի երկրների զարգացման հիմնական միտումները 20-րդ դարում: **Թեմա 29՝** Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքները ասիական և աֆրիկյան երկրների վրա: **Թեմա 30՝** Ազգային ազատագրական շարժումների վերելքը Ասիայի և Աֆրիկայի երկրներում: **Թեմա 31՝** Հեռավոր Արևելքի երկրները 20-րդ դարի երկրորդ կեսին: Գաղութատիրական համակարգի ազդեցությունը երրորդ աշխարհի երկրների հասարակական քաղաքական զարգացումների վրա:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B12. «ՀԱՅ ԱԶԳԱԳՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Ազգագրությունը որպես գիտություն Հայաստանում կայացավ 19-րդ դ. 80-90-ական թթ., սակայն Հայաստանին և հայերին վերաբերող ազգագրական վկայությունները գալիս են խոր հնադարից և սփռված են հսկայական տարածության և ժամանակի մեջ: Կուրսի նպատակն է ուսանողին ծանոթացնել հայ ազգագրության ձևավորման փուլերին, հայ և օտար սկզբնաղբյուրներում եղած վկայություններին, որոնք վերաբերում են հայերի տնտեսական, հասարակական-ընտանեկան կենցաղին, նյութական և հոգևոր մշակույթին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կծանոթանա հայ ազգագրության ձևավորման ու գիտության վերածնվելու պատմությանը.
2. Կծանոթանա հայերի և Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների էթնոկենցաղամշակութային համալիրին
3. Կծանոթանա էթնոգենեզին և էթնիկ պատմությանը

Բովանդակություն.

Թեմա 1՝ Պատմական Հայաստանի պատմաազգագրական մարզերն ու շրջանները: Հայ ազգագրության ձևավորման ու զարգացման փուլերի խնդիրը: **Թեմա 2՝** Ժայռապատկերները որպես ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրներ: **Թեմա 3՝** Հունա-հռոմեական պատմիչների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /Հերոդոտոս, Քսենոփոն, Ստրաբոն, Տակիտոս, Պրոկոպիոս Կեսարացի/: **Թեմա 4՝** Հայ պատմագրության մեջ եղած ազգագրական նյութերի ակնարկ: **Թեմա 5՝** Արաբ մատենագիրների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /IX-XIV դդ./: **Թեմա 6՝** Եվրոպայի ճանապարհորդների վկայությունները Հայաստանի և հայերի մասին /XIII-XVIII դդ./: **Թեմա 7՝** Մխիթարյան միաբանների ազգաբանական գործունեությունը (Ղ. Ինճիճյան, Ս. Բժշկյան, Ղ. Ալիշան, Վ. Հացունի): **Թեմա 8՝** Հայ ազգագրությունը XIX դ. առաջին կեսին, /Ս. Թադիաղյան, Խ. Աբովյան/: **Թեմա 9՝** Հայ ազգագրությունը XIX դարի II կես - XX դարի սկիզբ/ Գ. Սրվանձտյանց, Գր. Խալաթյանց, Ե. Լալայան/: **Թեմա 10՝** Սո. Լիսիցյանի և Խ. Սամվելյանի ազգագրական գործունեությունը: **Թեմա 11՝** ՀՀ-ում ազգագրական գիտական հաստատությունների և ազգագրական թանգարանների համառոտ ակնարկ: **Թեմա 12՝** Հայերը աշխարհի էթնիկ հանրությունների համակարգում, հայերի էթնոլեզվական, մարդաբանական, խառնվածքային, դավանաբանական, ժողովրդագրական բնութագիրը: **Թեմա 13՝** ՀՀ ազգային փոքրամասնությունների ժողովրդագրական և էթնոմշակութային բնութագիրը: **Թեմա 14՝** Հայերի ավանդական և ժամանակակից արտադրական մշակույթը. երկրագործական մշակույթ, Հայկական լեռնաշխարհը երկրագործական մշակույթի կենտրոն: Բրիչային և արորագութանային երկրագործության արտադրատեխնիկան, աշխատանքի կազմակերպման հնավանդ ձևերը: Անասնապահական մշակույթ, ձկնորս, համագործակցության և փոխօգնության ավանդական սկզբունքները: Տնայնագործական և արհեստագործական մշակույթ: Համբարական կազմակերպությունները քաղաքներում, դրոշները և սովորույթները: Օժանդակ և յուրացնող տնտեսաձևերը: Ժողովրդական ավանդական փոխադրամիջոցները և կապի

միջոցները: **Թեմա 15՝** Հայոց կենսապահովման մշակույթը. Գյուղական և քաղաքային ավանդական ու ժամանակակից բնակավայրերի տիպերը, կառուցվածքը, բնորոշ գծերը: Հայ ժողովրդական բնակարանը և ներսույթը՝ ջեռուցման, լուսավորության ավանդական և ժամանակից միջոցները, կահույքը, դրանց գործառության բնութագրությունը: Հայոց ավանդական և ժամանակակից տարազային համալիրները, տարածքային առանձնահատկությունները: Հայկական ուտեստն ու ըմպելիքները, հացկերությունները: **Թեմա 16՝** Սոցիոներմատիվ մշակույթ, հայերի ավանդական և ժամանակակից ընտանքը և վավերելակարգը: Հայերի ընտանեկան ծիսակարգը, ամուսնության և հարսանեկան ծիսաշարը, տղաբերքի և մանկատառության, հուղարկավորման և հիշատակման հետ կապված ավանդական և ժամանակակից սովորությունները և ծեսերը: Հայոց ազգակցական համակարգը, տնտեսական, տարածքային և գաղափարական կապերը: Հայերի գյուղական համայնքը XIX-XX դդ.: **Թեմա 17՝** Հայոց ավանդական և ժամանակակից հումանիտար մշակույթը. Հնագույն հավատալիքների, պաշտամունքի, բանավոր ստեղծագործությունների, տոների վերաբերյալ պատկերացումների հայոց մեջ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B47. «ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել պատմական գործընթացի վերաբերյալ տարբեր ժամանակներում առաջ քաշված հայեցակարգերը, լուսաբանել պատմական գործընթացը կերտող գործոնների հետազոտման հիմնական սկզբունքները, պատմագիտության գործառույթների լուսաբանման հիմամբ վեր հանել պատմական ճանաչողության յուրահատկությունը, հիմնավորել պատմական հետազոտության և նրա մեթոդաբանության կապի անհրաժեշտությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1.կունենա ամբողջական պատկերացում պատմագիտական առավել նշանակալի տեսությունների և մեթոդաբանական դպրոցների մասին,
- 2.կկարողանա ըմբռնել եվրոպական պատմագիտական մտքի առանձնահատկությունները,
- 3.կտիրապետի պատմագիտության տեսության և մեթոդաբանության տերմինաբանությանը,

4.կունենա ընդհանրական կարողություններ՝ սեփական հետազոտության մեթոդների, տեխնոլոգիաների ընտրության և կիրառման համար,

5.կտիրապետի պատմական ճշմարտությանը հասու դառնալու արվեստին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն դասընթացի առարկան, խնդիրները, նպատակները: **Թեմա 2՝** Պատմագիտությունը իբրև ուրույն հետազոտական միջավայր՝ իր օբյեկտով, սուբյեկտով, գործառույթներով, հիմնախնդիրներով և մեթոդներով: **Թեմա 3՝** Պատմական ճանաչողության ձևավորման հիմնական փուլերը: **Թեմա 4՝** Պատմության գիտականության հիմնախնդիրը. պատմության դրապաշտական /պոզիտիվիստական/ և ռոմանտիկական ընկալումները: **Թեմա 5՝** Կ.Մարքսի ֆորմացիոն տեսությունը: **Թեմա 6՝** Հասարակության զարգացման քաղաքակրթական մոտեցումները պատմագիտության մեջ: **Թեմա 7՝** Պատմագիտության հարացույցը 20-րդ դարասկզբին. «Աննալների» պատմագիտական դպրոցը: **Թեմա 8՝** Պատմական հետազոտության վերաբերյալ պոստմոդեռնիստական մոտեցումները: Նոր ուղղություններ պատմագիտական հետազոտություններում: **Թեմա 9՝** Պատմական հետազոտության համընդհանուր և հատուկ պատմական մեթոդները: **Թեմա 10՝** Պատմական իրադարձություն, երևույթ և գործընթաց: **Թեմա 11՝** Պատմական գործընթացը կերտող կարևորագույն գործոնները և դրանց հետազոտման հիմնական սկզբունքները: **Թեմա 12՝** Պատմագետի գործունեության դիտանկյունները: Պատմագետ-հետազոտողի տիպը և անձնական որակները: **Թեմա 13՝** Պատմագետը իբրև «դարաշրջանի բանական աչք». պատմական ժամանակ, հիշողություն և մոռացում: **Թեմա 14՝** Պատմական փաստը և սկզբնաղբյուրի ընտրության սկզբունքներն ու նրա աշխատանքի փուլերը: **Թեմա 15՝** Հատուկը և կրկնվողը պատմության մեջ: Պատմական առաջադիմություն և հետադիմությունը: Պատմության այլընտրանքայնությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B15. «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԻ-ԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության առավելապես բանավիճային և քիչ ուսումնասիրված հիմնախնդիրներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի Հայկական հարցի առաջացման, նրա էության, զարգացման փուլերի շուրջ պատմագիտության մեջ գոյություն ունեցող իրարամերժ կարծիքներին,
2. կկազմի առավել խոր պատկերացում Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների և միջազգային դիվանագիտության դիրքորոշման, Հայկական հարցի ուղղությամբ հայ քաղաքական կուսակցությունների ռազմավարության և մարտավարության փոփոխությունների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայկական հարցի ծագման և նրա էության շուրջ պատմագրության մեջ գոյություն ունեցող կարծիքները և նշեց քննական վերլուծությունը: ***Թեմա 2՝*** Հայկական հարցի զարգացման փուլերը: ***Թեմա 3՝*** Հայկական հարցը հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերում: ***Թեմա 4՝*** Հայկական հարցի միջազգայնացումը: ***Թեմա 5՝*** Հայկական հարցը արդի փուլում, նրա բովանդակությունը և լուծման եղանակները: ***Թեմա 6՝*** Հայոց ցեղասպանության պատճառները: ***Թեմա 7՝*** Ցեղասպանության իրագործման փուլերը: ***Թեմա 8՝*** Հայոց ցեղասպանության դասերն ու հետևանքները: ***Թեմա 9՝*** Միջազգային իրավունքը և ցեղասպանությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B39. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԴՔԵՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ճանաչողական, գիտատեսական և քաղաքական դիտանկյունով ներկայացնել Վրաստանի և Ադրբեջանի պատմությունը, լուսաբանել տարաբնույթ վիճահարույց և միմյանց հակադիր տեսակետները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կճանաչի հարևան երկու երկրների պատմությունը,
2. կհասկանա և կվերլուծի այդ ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկությունները, նրանց քաղաքակրթությունների էությունը,
3. կկարողանա կատարել տեսական ընդհանրացումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Վրաստանը հնագույն ժամանակներում: **Թեմա 2՝** Վրաստանը 4-8-րդ դդ.: **Թեմա 3՝** Վրաստանը 9-11-րդ դդ.: **Թեմա 4՝** Վրաստանը 13-րդ դ. սկզբներից մինչև 19-րդ դ. սկիզբը: **Թեմա 5՝** Վրաստանը 19-20-րդ դ. սկզբին: **Թեմա 6՝** Վրաստանը խորհրդային ժամանակաշրջանում: **Թեմա 7՝** Վրաստանը ետխորհրդային տարիներին: **Թեմա 8՝** Արևելյան Անդրկովկասը 8-16-րդ դդ.: **Թեմա 9՝** Արևելյան Անդրկովկասը 16-րդ դ.-19-րդ դ. սկզբին: **Թեմա 10՝** Արևելյան Անդրկովկասը ռուսական կայսրության կազմում: **Թեմա 11՝** Արևելյան Անդրկովկասը 20-րդ դ. սկզբին: **Թեմա 12՝** Ադրբեջանի անկախ հանրապետությունը 1918-1920 թթ.: **Թեմա 13՝** Ադրբեջանի խորհրդայնացումը և հարաբերությունները հարևան երկրների հետ: **Թեմա 14՝** Ադրբեջանը խորհրդային տարիներին: **Թեմա 15՝** Ադրբեջանի հանրապետությունը ետխորհրդային տարիներին:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B32. «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (8 կրեդիտ)

Շաբաթական՝ 8 ժամ (90 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել 20-րդ դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմությունը: Տալ քաղաքակրթության զարգացման տիպաբանությունը 20-րդ դարի ընթացքում ինչպես Եվրոպական աշխարհամասում, այնպես էլ ամերիկյան մայրցամաքում: Ներկայացնել հասարակության զարգացման վերաբերյալ երկու հակադիր գաղափարախոսությունների բախումներն ու տրանսֆորմացիան:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 20-րդ դարի Եվրոպայի և Ամերիկայի երկրների զարգացման առանձնահատկությունները.
2. կհասկանա 20-րդ դարում գերիշխող գաղափարախոսությունների էությունը.
3. կկարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Եվրոպայի և Ամերիկայի երկրների զարգացման հիմնական միտումները 1918-39թթ. **Թեմա 2՝** Վերսալ-վաշինգտոնյան համակարգը, միջազգային հարաբերությունները երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում **Թեմա 3՝** Գերմանիան 1918-39թթ. **Թեմա 4՝** Ֆրանսիան 1918-39թթ. **Թեմա 5՝** Մեծ Բրիտանիան 1918-39թթ. **Թեմա 6՝** Իտալիան 1918-43թթ. **Թեմա 7՝** Քաղաքացիական պատերազմը Իսպանիայում

Թեմա 8՝ ԱՄՆ-ն 1918-39թթ. **Թեմա 9՝** Երկրորդ համաշխարհային պատերազմը 1939-1945 **Թեմա 10՝** Եվրոպայի և Ամերիկայի երկրների զարգացման հիմնական միտումները 20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարի սկզբին **Թեմա 11՝** Միջազգային հարաբերությունները «Սառը պատերազմի» շրջանում **Թեմա 12՝** Երկրներ համակարգի փլուզումը, ԵՄ ձևավորումը **Թեմա 13՝** ԱՄՆ-ն 1945-2000 **Թեմա 14՝** Մեծ Բրիտանիան 1945-2000 **Թեմա 15՝** Ֆրանսիան 1945-2010 **Թեմա 16՝** Գերմանիան 1945-2010 **Թեմա 17՝** Իտալիան 1945-2000 **Թեմա 18՝** Արևելյան Եվրոպայի երկրները 1945-2010թթ **Թեմա 19՝** Լատինական Ամերիկայի երկրները 1945-2000թթ: Զարգացման ընդհանուր միտումները, Լատինական Ամերիկայի հեղափոխությունը **Թեմա 20՝** Աշխարհը երրորդ հազարամյակի սկզբին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B17. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար գիտելիքներ հաղորդել մեր ազգային պատմական գիտության անցած ողջ ուղու մասին՝ սկսած նախագրական շրջանի պատկերացումներից մինչև մեր օրերի պատմագիտական դպրոցները, ուղղությունները, տեսությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կպատկերացնի հայ պատմագրության առանձնահատկությունները, զարգացման իր ուրույն ընթացքի փուլերը,
2. կհասկանա հայ իրականության մեջ պատմական գիտելիքների առաջացման աստիճանական զարգացման և համակարգման ընթացքը,
3. կընկալի հայոց պատմության պատմագրության խնդիրները, գիտելիքներ ձեռք կրերի պատմագիտական հետազոտությունների տիպերի մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական գիտելիքների առաջացումը Հայաստանում: **Թեմա 2՝** Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը: **Թեմա 3՝** Միջնադարյան հայ պատմագրությունը: **Թեմա 4՝** Պատմագիտության առաջընթացը 18-րդ դարի վերջերին: **Թեմա 5՝** Հայ պատմագիտական միտքը 19-րդ դ. առաջին կեսին: **Թեմա 6՝** Հայ պատմագիտական միտքը 19-րդ դ. երկրորդ կեսին: **Թեմա 7՝** Հայ պատմագիտությունը 20-րդ դարում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0304/B40. «ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացն ունի ինչպես իմացաբանական, այնպես էլ մեթոդաբանական նշանակություն: Նպաստել ուսանողի տրամաբանական կարողությունների զարգացմանը, հմտությունների ձեռք բերմանը, նպաստել մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների յուրացմանը, գիտահետազոտական աշխատանքի կատարմանը, ինչպես նաև ինտելեկտուալ անհատականության ձևավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավարությունն ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը, գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,
2. կհասկանա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տրամաբանության առարկան և նրա դերն ու նշանակությունը:

Թեմա 2՝ Հասկացություն: ***Թեմա 3՝*** Դատողություն: ***Թեմա 4՝*** Տրամաբանության օրենքները: ***Թեմա 5՝*** Մտահանգում: ***Թեմա 6՝*** Ապացուցում և հերքում: ***Թեմա 7՝*** Պարալոգիզմ, Մոփեստություն, սրամտություն, պարադոքս: Հիպոթեզ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0202/B38. «ՀԱՅ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 8 ժամ (40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին հայ և համաշխարհային արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին: Հաղորդակից դարձնել ուսանողին նախնադարյան, հին քաղաքակրթությունների, դասական՝ հունա-հռոմեական, միջնադարյան մշակույթներին, ինչպես նաև հեղինակավոր արվեստագետների ստեղծագործությունների ուսումնասիրմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա մշակույթի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները,
2. կճանաչի հայ և համաշխարհային մշակույթի կարևոր հուշարձանները, կը դառնա որոշ ստեղծագործությունների անմիջական հաղորդակիցը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Նախնադարյան արվեստ: **Թեմա 2՝** Հին քաղաքակրթությունների արվեստների ընդհանուր բնութագիրը և հիմնական հուշարձանները: **Թեմա 3՝** Հին Հունաստանի և Հռոմի արվեստի հիմնական շրջաններն ու հուշարձանները: **Թեմա 4՝** Միջնադարյան Արևելաքրիստոնեական և Արևմտաքրիստոնեական արվեստ: **Թեմա 5՝** Վերածնունդի արվեստը: **Թեմա 6՝** 17-րդ դարի արվեստի ընդհանուր բնութագիրը, իտալական, ֆլամանդական, հոլանդական, իսպանական դպրոցները: **Թեմա 7՝** 18-19-րդ դարերի արվեստի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 8՝** Իմպրեսիոնիզմ և պոստիմպրեսիոնիզմ: **Թեմա 9՝** Մոդեռնիզմի ուղղությունները: **Թեմա 10՝** Հին հայկական և ուրարտական արվեստ: **Թեմա 11՝** Միջնադարյան հայ արվեստ: **Թեմա 12՝** Հայ կերպարվեստագետները 19-րդ դ. և 20-րդ. 1-ին կեսին: **Թեմա 13՝** Խորհրդային շրջանի հայ արվեստը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

0304/B48. «ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին լիարժեք գիտելիքներ տալ նոր և նորագույն ժամանակաշրջանների սոցիալական և քաղաքական գործընթացների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 16-19-րդ դարերի բուրժուական և բուրժուադեմոկրատական հեղափոխությունների հետևանքով Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում տեղի ունեցած հասարակական կարգի փոփոխությունները,
2. կիսկանա նորագույն հասարակություններում ընթացած սոցիալական և քաղաքական իրադարձությունների մասին,
3. կկարողանա տիրապետել քաղաքական պատմության այն նյութը, որը նրան հնարավորություն կտա հաջորդ կուրսերում լիարժեք պատկերացում ունենալ միջազգային քաղաքականության, քաղաքական ինստիտուտների և գործընթացների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նիդեռլանդական բուրժուական հեղափոխությունը: **Թեմա 2՝** Անգլիական բուրժուական հեղափոխությունը: **Թեմա 3՝** 18-րդ դարի ֆրանսիական մեծ հեղափոխությունը և կապիտալիզմի հաստատումը Եվրոպայում: **Թեմա 4՝** Միջազգային հարաբերությունները Եվրոպայում 19-րդ դարում: **Թեմա 5՝** 1848-1849 թթ. Բուրժուադեմոկրատական հեղափոխությունները Եվրոպայում և քաղաքական նոր իրողությունները: **Թեմա 6՝** Ռազմա-քաղաքական խմբավորումները 19-րդ դարի վերջերին և 1-ին աշխարհամարտը: **Թեմա 7՝** Ռուսաստանը 20-րդ դարի 1-ին տասնամյակների և Ռուսաստանի քաղաքական զարգացման առանձնահատկությունները: **Թեմա 8՝** 2-րդ աշխարհամարտը և միջազգային քաղաքական գործընթացները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

1.1.1. Կամընտրական դասընթացներ

0304/B13. «ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍՍԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ»

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ինչպես հայ ավանդական ազգային կուսակցությունների, այնպես էլ հայ մյուս քաղաքական կուսակցությունների ու ժամանակակից հայ քաղաքական կուսակցությունների ձևավորման, ծրագրերի և գործունեության ամբողջական պատմությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ քաղաքական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթների և գործունեության ամբողջական պատմությունը.

2. կկարողանա կատարել հայ ավանդական և ժամանակակից քաղաքական կուսակցությունների ծրագրերի, գործունեության մարտավարական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն, քննարկում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Արմենական կուսակցության առաջացումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: **Թեմա 2՝** Արմենական կուսակցության գործունեությունը 1890-ական թթ.: 1896թ. Վանի ինքնապաշտպանությունը և Արմենական կուսակցության անկման գործընթացը: **Թեմա 3՝** Հնչակյան կուսակցության ձևավորումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: **Թեմա 4՝** Հնչակյան կուսակցության գործունեությունը 1990 - ական թթ. և պառակտումը: **Թեմա 5՝** ՀՍԴԿ առաջացումը և նրա ծրագրային դրույթները: **Թեմա 6՝** Հ. Յ. Դաշնակցության առաջացումը և Արևմտյան Հայաստանի ազատագրման նրա ծրագիրը: **Թեմա 7՝** ՀՅԴ գործունեությունը 19-րդ դարի 90 - ական թթ. և դրա գնահատականը: **Թեմա 8՝** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը 1900 - 08թթ. -ին: Վերաբերմունքը Երիտթուրքական Սահմանադրության նկատմամբ: **Թեմա 9՝** 1905 - 6թթ. հայ - թաթարական կռիվները Կովկասում և հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը: **Թեմա 10՝** Հայ քաղաքական կուսակցությունները Հայկական Հարցի վերաբացման շրջանում(1912 - 1914թթ.): **Թեմա 11՝** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: **Թեմա 12՝** Հայ քաղաքական կուսակցությունները Հայաստանի առաջին Հանրապետության գոյության տարիներին: **Թեմա 13՝** ՀԿԿ կուսակցության ձևավորումը և գործունեությունը: **Թեմա 14՝** Հայաստանի խորհրդայնացումը և հայ քաղաքական կուսակցությունների լիկվիդացիայի գործընթացը: **Թեմա 15՝** Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը Մփյուռքում 1920 - 80 - ական թթ.: **Թեմա 16՝** Խորհրդային Միության փլուզումը և հայկական նոր քաղաքական կազմակերպությունների առաջացումը: ՀՀ - ի քաղաքական դիրքորոշումները: **Թեմա 17՝** Հայ ավանդական և նորաստեղծ կուսակցությունների գործունեությունը 1991 - 1998թթ.: **Թեմա 18՝** Հայաստանի Հանրապետական կուսակցության առաջացումը և գործունեությունը 1998 - 2008թթ. - ին: **Թեմա 19՝** ՀՀԿ գործունեությունը 2008 - 12թթ. -ին: **Թեմա 20՝** ԱԺՄ, Օրինաց Երկիր, Բարգավաճ Հայաստան, Ժառանգություն և այլ զանգվածային կուսակցությունների ձևավորումը և գործունեությունը Հայաստանի 3- րդ Հանրապետության շրջանում: **Թեմա 21՝** Հայ քաղաքական կուսակցությունների խորհրդարանական գործունեությունը Հայաստանի 3-րդ Հանրապետության շրջանում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B49. «ՊԱՌԼԱՍԵՆՏԱՐԻԶՄԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել դասային ներկայացուցչական միապետության ձևավորման ժամանակաշրջանը, Եվրոպական երկրների դասային համակարգերը, պետական կարգը և դրանց առաձևահատկությունները, ինչպես նաև ամերիկյան հասարակության մեջ ժողովրդավարական համակարգի ձևավորման հիմքերն ու զարգացման բնութագրիչները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դասային համակարգի ձևավորման առանձնահատկությունները.
2. ճշգրիտ պատկերացում կունենա այդ երկրների զարգացման քաղաքացիական հասարակությունների ձևավորման մասին.
3. կկարողանա ճշգրտորեն գնահատել ժողովրդավարական գործընթացների շարժընթացը ամերիկյան և եվրոպական հասարակություններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: ***Թեմա 2՝*** «Դեմոկրատիա» հասկացությունը: ***Թեմա 3՝*** Ժողովրդավարությունն արևմտյան ժողովրդափշխանության համակարգում: ***Թեմա 4՝*** Ժողովրդափշխանությունն արևմտյան ժողովրդավարության համակարգում: ***Թեմա 5՝*** Արևմտյան ժողովրդավարությունների տիպաբանությունը: ***Թեմա 6՝*** Մեծ Բրիտանիա: ***Թեմա 7՝*** Ամերիկայի Միացյալ Նահանգներ: ***Թեմա 8՝*** Ֆրանսիա: ***Թեմա 9՝*** Իտալիա: ***Թեմա 10՝*** Հունաստան: ***Թեմա 11՝*** Գերմանիա: ***Թեմա 12՝*** Շվեյցարիա: ***Թեմա 13՝*** Իսպանիա: ***Թեմա 14՝*** Եվրոպական միության քաղաքական համակարգը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B50. «ԱՐԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակ՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համապատասխան գիտելիքներ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում ձևավորվող քաղաքական կուսակցությունների և նրանց դերակատարության մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների ձևավորման գործընթացը,
2. կհասկանա քաղաքական կուսակցությունների ձևավորման պատմական անհրաժեշտությունը և նրանց դերը երկրի քաղաքական կյանքում,

3. կկարողանա տեսական գիտելիքների հիման վրա վերլուծել երկրի քաղաքական կյանքը և անել տեսական ընդհանրացումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հեղափոխական նարոդնիկական շարժումը որպես քաղաքական կուսակցությունների ձևավորման նախորդ շրջան: **Թեմա 2՝** Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում և Գ. Վ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խումբը: **Թեմա 3՝** ՌՄԴԲԿ ստեղծումը, նրա ծրագիրը և գործունեությունը: **Թեմա 4՝** Սոցիալիստ հեղափոխականների կուսակցությունը, նրա ծրագիրը և գործունեությունը: **Թեմա 5՝** Ռուսական լիբերալ կուսակցությունները. Մահմանադրական-դեմոկրատական կուսակցությունը: **Թեմա 6՝** «Հոկտեմբերի 17-ի միությունը» (Օկտյաբրիստներ) կուսակցությունը: **Թեմա 7՝** Կառավարական պահպանողական (կոնսերվատիվ) կուսակցությունները: **Թեմա 8՝** Տրոլոպիկների («Աշխատանքային խումբ») մանրբուրժուական քաղաքական կուսակցությունը: **Թեմա 9՝** Բազմակուսակցական համակարգի վերացումը և միակուսակցական համակարգի ձևավորումը Ռուսաստանում: **Թեմա 10՝** Այլախոհական շարժումները ԽՍՀՄ-ում 1960–80-ական թթ.: **Թեմա 11՝** Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը և անցումը բազմակուսակցական համակարգի: **Թեմա 12՝** «Ռուսաստանի համայնքների կոնգրես» հասարակական-քաղաքական շարժումը: **Թեմա 13՝** «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը: **Թեմա 14՝** «Արդարացի Ռուսաստան» կուսակցությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B51. «ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅԻ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Առաջավոր Ասիայի, Կովկասի քաղաքակրթությունների պատմությանը, հոգևոր և նյութական մշակութային էթնիկ գործընթացներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհիմանա արդի քաղաքակրթությունների ծագման տեսական հիմնադրույթները.
2. կհասկանա ուսումնասիրվող հանրությունների քաղաքակրթական տիպաբանական կազմը.
3. կկարողանա կատարել վերլուծական դատողություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հին քաղաքակրթությունները և դրանց բնորոշումը, բաղադրիչ տարրերը: Մշակութային պրոցեսների ուսումնասիրումը և վերակազմությունը: **Թեմա 2**՝ Վաղ երկրագործական պատմա-մշակութային համալիրները: **Թեմա 3**՝ Միջագետքի հնագույն մշակույթները: Նեոլիթյան հեղափոխությունը և նրա հետևանքները: **Թեմա 4**՝ Արևելամիջերկրական և փոքրասիական վաղ երկրագործական և հնագիտական մշակութային օջախները: **Թեմա 5**՝ Իրանի հին մշակույթը: Փոխառնչությունները Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործական օջախների հետ: **Թեմա 6**՝ Կովկասի հնագիտական համագարկերը նեոլիթից երկաթի դարյան ժամանակաշրջանում: **Թեմա 7**՝ Վանի թագավորության ֆենոմենը: Ուրարտական մշակույթի դրսևորումները Հայկական լեռնաշխարհում: Տերունական մշակույթ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B52. «ՀԱՅ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ ռազմարվեստի պատմության առանցքային նշանակություն ունեցող դրվագները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա ներկայացնել հայ ռազմարվեստի դրսևորման առանձնահատկությունները.
2. կկարողանա կատարել վերլուծական դատողություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն. առարկայի նպատակը և խնդիրները: **Թեմա 2**՝ Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումների ռազմարվեստի պատմությունից: **Թեմա 3**՝ Ռազմարվեստը Արարատյան թագավորության շրջանում: **Թեմա 4**՝ Հայկական ռազմարվեստը Երվանդունիների թագավորության շրջանում: **Թեմա 5**՝ Հայ ռազմարվեստը Արտաշեսյան թագավորության շրջանում. Արտաշես 1-ը որպես հայոց բանակի և նոր ռազմական մարտավարության հիմնադիր: **Թեմա 6**՝ Հայ ռազմարվեստը Տիգրան Մեծի գահակալության շրջանում: **Թեմա 7**՝ Հայ ռազմարվեստը Արշակունյաց թագավորության շրջանում: **Թեմա 8**՝ Դրվագներ հայկական ռազմարվեստի դրսևորումներից 5-6-րդ դարերում: **Թեմա 9**՝ Հայ ռազմարվեստի դրսևորման ձևերը արաբական տիրապետության շրջանում: **Թեմա 10**՝ Բագրատունիների թագավորության հայ ռազմական արվեստը: **Թեմա 11**՝ Զաքարյանների իշխանապետությունը և հայկական ռազմարվեստը: **Թեմա 12**՝ Կիլիկյան հայկական իշխանության և թագավորության շրջանի հայ

ռազմարվեստի դրսևորման առանձնահատկությունները: **Թեմա 13**՝ 1722-1730թթ. Արցախի և Սյունիքի ապստամբության շրջանի հայ ռազմարվեստը: **Թեմա 14**՝ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ հայդուկային կոիվների մարտավարությունը: **Թեմա 15**՝ Հայկական կամավորական շարժումները որպես ռազմարվեստի դրսևորման յուրահատուկ ձև: **Թեմա 16**՝ Հայաստանի առաջին հանրապետության շրջանի հայոց բանակի ռազմական արվեստը 1918թ. /մայիս-1920թ. նոյեմբեր/: **Թեմա 17**՝ Հայկական զինվորական կազմակերպությունների ռազմարվեստի առանձնահատկությունները խորհրդային ժողովուրդների Հայրենական Մեծ պատերազմի շրջանում: **Թեմա 18**՝ Արցախյան ազգային ազատագրական պայքարը և հայկական ռազմարվեստի էվոլյուցիոն զարգացումը 1991-1994թթ.: **Թեմա 19**՝ Հայոց բանակի կազմավորման գործընթացը Հայաստանի երրորդ հանրապետության շրջանում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0301/B53. «ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ),

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կովկասյան տարածաշրջանի քաղաքական և էթնիկ պատմության հիմնական փուլերին ու հիմնախնդիրներին, տարածաշրջանի զարգացումները դիտարկել հայոց պատմության և հայերի հետ փոխահարաբերությունների համատեքստում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տարածաշրջանի էթնիկ և քաղաքական պատմության հիմնական փուլերը,
2. ծանոթ կլինի ինչպես ողջ տարածաշրջանի, այնպես էլ վերջինիս առանձին կառուցվածքային միավորների էթնոքաղաքական պատմության հիմնական փուլերին,
3. ծանոթ կլինի տարածաշրջանի հիմնական էթնիկ հակամարտություններին ու կկարողանա տալ վերջիններիս համեմատական վերլուծությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական հիմնական բնութագիրը, հիմնական էթնիկ հանրությունները: **Թեմա 2**՝ Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական պատմության հիմնական փուլերը. ըստ խոշոր տարածաշրջանների և էթնիկ հանրությունների: **Թեմա 3**՝ Կովկասյան տարածաշրջանի հիմնական էթնիկ հակամարտությունները. ձևավորման ընթացքը, զարգացումները, արդի վիճակը: **Թեմա 4**՝ Տարածաշրջանի արդի էթնոքաղաքական

վիճակն ու զարգացման հեռանկարները: **Թեմա 5՝** Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B54. «ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձևի ծնունդը, զարգացումը և անկումը անտիկ քաղաքակրթության, մասնավորապես պոլիսային համակեցության համատեքստում: Դասընթացի ընթացքում քննության է ենթարկվում անտիկ ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցը (քաղաքացիության ինստիտուտ, աշխարհաժողով, պետական խորհուրդ, պաշտոնեություն, դատարաններ ևն), գաղափարախոսական հենքը: Դիտարկվում է «ժողովրդավարություն» հասկացության մշակումը, նրա հարաբերակցումը քաղաքական կառավարման մյուս ձևերի հետ անտիկ հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի ծիրում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ժողովրդավարության իբրև հասարակության կառավարման ձևի առաջացման պատճառների, Հին Հունաստանում և Հռոմում զարգացման փուլերի մասին: Ինչպես նաև «ժողովրդավարություն» հասկացության տեսական բովանդակությանն անտիկ հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի մշակումների և առանձնահատկությունների մասին:
2. գնահատել անտիկ ժողովրդավարության իմաստը, բովանդակությունը, առանձնահատկությունները: Կատարելացնի ժողովրդավարական հաստատությունների գործառնությունները, իրավասությունները, դրանց գործառնական ընթացակարգը:
3. վերհանել անտիկ ժողովրդավարության զարգացման ընդհանուր միտումներն ու առանձնահատկությունները, առավել հիմնավոր կերպով շարունակել «ժողովրդավարության պատմություն» դասընթացի ուսումնառությունը՝ հետևելով «ժողովրդավարություն» տերմինի, նրա բովանդակության, անտիկ քաղաքակրթության ծիրում մշակված ժողովրդավարական վարչակարգի կառուցակազմիկ բաղադրատարրերի, ժողովրդավարության տեսության կերպափոխմանը հետագա պատմական դարաշրջաններում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ «ժողովրդավարություն» հասկացությունը, նրա իմաստային և ծագումնաբանական վերլուծությունը: **Թեմա 2՝** Քաղաքացիական համայնքն (պոլիս, կիվիտաս) իբրև անտիկ քաղաքակրթության հիմնարար կառույց և դրա

կարևորագույն չափորոշիչները: **Թեմա 3՝** Պոլիսային համակեցության ձևավորումը Հին Հունաստանում: Ժողովրդավարական կարգի կայացման պատճառները Աթենքում: **Թեմա 4՝** Աթենական ժողովրդավարության կայացման փուլերը. Ա.Սոլոնի բարենորոգումները. Բ. Կլիսթենեսի և Պերիկլեսի բարենորոգումները, Գ. Պերիկլեսյան դարաշրջանը: **Թեմա 5՝** Ժողովրդավարական հաստատությունները, դրանց համալրման սկզբունքները, գործառույթները, իրավասությունները, գործառումը Հին Հունաստանում. Ա. Քաղաքացիության ինստիտուտ, Բ. Աշխարհաժողով (Էկլեսիա), Գ. Պետական խորհուրդ (500-ի խորհուրդ, բուլե), Դ. Արեոպագոս, Ե. Դատական իշխանություն (հելիայա), Գործադիր իշխանություն (ստրատեգոսների խորհուրդ ևն): **Թեմա 6՝** Աթենական ժողովրդավարության ընկերային քաղաքականությունը: «Պերիկլեսի ճառը» և աթենական ժողովրդավարության գաղափարախոսությունը: **Թեմա 7՝** Թատրոնը որպես աթենական քաղաքացիների կրթման «դպրոց»: **Թեմա 8՝** Պլատոնի հասարակագիտությունը («Պետություն», «Օրենքների մասին» տրամախոսությունները): **Թեմա 9՝** Արիստոտելի ուսմունքը մարդու, հասարակական համակեցության և պետության վերաբերյալ («Պոլիտեյա», «Աթենական պոլիտեյա», «Բարոյագիտություն»): **Թեմա 10՝** Ժողովրդավարության անկման պատճառները Հին Հունաստանում: Նրա պատմական նշանակությունը: Ժողովրդավարության զարգացման առանձնահատկությունները Հին Հռոմում: **Թեմա 11՝** Դասային պայքարը: Հանրապետական կարգի և հռոմեական քաղաքացիական համայնքի ձևավորումը Հին Հռոմում: **Թեմա 12՝** Հին Հռոմի պետական-քաղաքական կարգը Ք.ա. V-III դդ.ա. հռոմեական քաղաքացիության ինստիտուտը և նրա էվոլյուցիան, Բ. աշխարհաժողով (կոմիտիաներ), Գ. պետական խորհուրդ (սենատ), Դ. գործադիր իշխանություն (մագիստրատուրաներ): **Թեմա 13՝** Ստոիկյան իմաստասիրությունը և հռոմեական «հասարակական ինքնաձանաչողությունը»: **Թեմա 14՝** Պոլիբիոսի «Համաշխարհային պատմությունը», խառը պետական կառույցի մասին նրա տեսությունը: Հանրապետական կարգի ճգնաժամի և անկման պատճառները: **Թեմա 15՝** Կ. Սալյուստիոսը որպես Հռոմեական Հանրապետության ճգնաժամի տեսաբան («Կատիլինայի դավադրությունը», «Յուգուրթական պատերազմ»): **Թեմա 16՝** Մ.Կ. Կիկերոնը և «հանրապետական միապետության» (պրինցիպատ) իմաստասիրական հարացույցի համակողմանի մշակումը («Հանրապետության մասին», «Օրենքների մասին», «Պարտականությունների մասին», «Բարեկամության մասին»): **Թեմա 17՝** Հռոմեական ժողովրդավարության պատմական նշանակությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B55. «ՀՈՈՄԵԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՐՈՒՅ-ԹԸ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել հռոմեական քաղաքակրթության հիմնական բաղադրատարրերը (լատիներեն լեզու, պետական կառույց, իրա-

վունք, մշակույթ, արտադրական և մտահոգևոր տեխնոլոգիաներ) և նրա ազդեցությունը եվրոպական միջնադարյան, նոր և նորագույն քաղաքակրթության նկարագրի վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. եվրոպական քաղաքակրթության սկզբնավորման և զարգացման շրջափուլերի մասին՝ սկսած հռոմեական դարաշրջանից մինչև մեր օրերը՝ ըստ հիմնարար պետական, հասարակական կառույցների, տեխնոլոգիաների, մշակութային և կրոնական հարացույցների:
2. եվրոպական քաղաքակրթության տիպաբանության և հիմնական հատկանիշների մասին
3. եվրոպական ինքնության և պատմական տարբեր շրջափուլերում եվրոպական համընդհանրության տարբեր հարացույցների մասին
4. Եվրոպան դիտարկել իբրև միասնական քաղաքակրթական գործընթաց (անցյալ, ներկա, ապագա)
5. ի մի բերել համաշխարհային պատմության դասընթացներում (Անտիկ պատմություն, Միջին դարերի պատմություն, Նոր պատմություն, Նորագույն պատմություն) ձեռք բերած գիտելիքները եվրոպական պատմության վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հռոմեական քաղաքակրթության ընդհանուր բնութագիրը՝ պետական, հասարակական կառույց, գաղափարախոսություն, իրավունք, արտադրական տեխնոլոգիաներ, մշակույթ, լեզու, կենցաղավարություն ևն: **Թեմա 2՝** Հռոմեական տերության ձևավորումը (Ք. ա. II - Ք. հ. III դդ.): **Թեմա 3՝** Հռոմեական խաղաղության հարացույցը: **Թեմա 4՝** Հռոմեական կայսրությունը իբրև միջազգային տարասեռ հարաբերությունների միջավայր: **Թեմա 5՝** Ռոմանականացման գործընթացը Արևմուտքում՝ քաղաքներ, վարչական ապարատ, տեխնոլոգիաներ, լատիներեն լեզու, մշակույթ, հռոմեական ապրելաձև ևն: **Թեմա 6՝** Ուշ անտիկ դարաշրջան (Ք. ա. 3-7-րդ դդ.): **Թեմա 7՝** Բարբարոսական արշավանքները և հռոմեական քաղաքակրթության կերպափոխությունը: **Թեմա 8՝** Արևմտաեվրոպական քաղաքակրթությունը իբրև հռոմեական և բարբարոսական աշխարհների համաձուլման միջավայր: **Թեմա 9՝** Միջնադարյան քաղաքակրթական կենտրոնները Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 10՝** Վաղ պետական կազմավորումները և ժողովուրդների ձևավորման գործընթացը: **Թեմա 11՝** Եվրոպայի քաղաքական միասնության (կայսրության) գաղափարը (Կարլոս Մեծ, Օտտոն Ա): **Թեմա 12՝** Պապականությունը և քրիստոնեական համընդհանրությունը: **Թեմա 13՝** Քաղաքական բազմազանությունը և հոգևոր-մշակութային ընդհանրությունը Արևմտյան Եվրոպայում: **Թեմա 14՝** Վերածնունդը և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: **Թեմա 15՝** Ռեֆորմացիան և եվրոպական համընդհանրության նոր հարացույցը: **Թեմա 16՝** Արդյունաբերական քաղաքակրթությունը (17-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ) և հռոմեական ժառանգությունը: **Թեմա 17՝** Հասարակության նորացումը՝ տեխնոլոգիաներ, պետական կառավարման ձևեր (հեղափոխություններ, լուսավորյալ միապետություն, պառլամենտարիզմ), հա-

սարակական միտք են: **Թեմա 18՝** Հետադարձադարձական քաղաքակրթությունը և հոռիմտական ժառանգությունը (20-րդ դ. կեսից մինչև մեր օրերը): **Թեմա 19՝** Եվրամիությունը և եվրոպական հանընդհանրության արդի հարացույցը՝ միությունն Բազմակուսության մեջ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0304/B56. «ԴԵՍՈԿՐԱՏԻԱՅԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ» -2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձև, ավելի քան 2.5 հազ. տարի աշխարհը ծանոթ է այդպիսի երևույթի, ինչպիսին է ժողովրդավարությունը: Այն բավականին տեղական ժամանակաշրջանում մարդիկ հնարավորություն ունենին համեմատելու և համադրելու տարբեր կառավարման ձևն ու պետական կառուցվածքները, մարդու և իշխանության փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Արդյունքում արևմտյան քաղաքագիտական միտքն հանգեց այն դատողությանը, որ պետական կառավարման և մարդկային համակեցության արդյունավետ գործունեության համար մարդու կառավարման ձևերից ժողովրդավարությունն ամենա արդյունավետն է և ընդունելի:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

1. կիմանա ժողովրդավարությունը զարգացման ինչ փուլերով է անցել ծուրջ 3 հազ. տարվա ընթացքում,
2. կհասկանա անտիկ ռեսպուբլիկայի և դեմոկրատիայի իմաստային տարբերությունը,
3. կկարողանա կիրառել անտիկ և միջնադարյան ռեսպուբլիկանիզմի և դեմոկրատիայի փորձը արդի քաղաքագիտական տեսությունները ուսումնասիրելիս և վերլուծելիս:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Իտալական քաղաք-պետությունները Բարձր միջնադարում: **Թեմա 2՝** Ռեսպուբլիկանիզմի նոր փորձառություն: **Թեմա 3՝** Միջնադարյան դուքրովնիկ քաղաք-պետության առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Պարոն Մեծ Նովգորոդի և Սկովի հանրապետությունները 9-16-րդ դդ.: **Թեմա 5՝** Անտիկ և միջնադարյան հանրապետությունների համեմատությունն ու համադրությունը: **Թեմա 6՝** Արդիականացման գործընթացները Անգլիայում 1688թ. «Փառահեղ հեղափոխությունից» հետո: **Թեմա 7՝** Սահմանադրական միապետություն: **Թեմա 8՝** Ժամանակակից ժողովրդավարության մեխանիզմների ամրագրումը 18-րդ

դարի վերջին Միացյալ Նահանգներում: **Թեմա 9՝** Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունն և դրա ազդեցությունը 19-րդ դարի Եվրոպայի քաղաքականացման և ժողովրդավարացման հիման վրա: **Թեմա 10՝** Արդի ժողովրդավարության տարբերակների կոնսոլիդացումը Ամերիկյան և Ֆրանսիական ժողովրդավարության ձեռքբերումների հիման վրա: **Թեմա 11՝** Ժողովրդավարական ինստիտուտները և քաղաքացիական հասարակությունը արդի դարաշրջանում: **Թեմա 12՝** Հայաստանը արդի ժողովրդավարության համատեքստում:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

0304/B10. «ԹՈՒՐԶԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Թուրքիայի (13-րդ դարից սկսած) և Իրանի (3-րդ դ-ից սկսած) պատմությունը, բացահայտել տարբեր ժամանակաշրջաններում այդ երկրների զարգացման օրինաչափությունները, արտաքին և ներքին քաղաքականությունների միտումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա Թուրքիայի և Իրանի պատմության հիմնական խնդիրները,
2. կհասկանա Թուրքիայի և Իրանի պատմական զարգացման օրինաչափությունները՝ տիրապետելով պատմության վերլուծական մեթոդին,
3. ձեռք կբերի ընդհանուր պատկերացումներ Թուրքիայի և Իրանի պատմության վերաբերյալ,
4. կկարողանա կատարել անհրաժեշտ համեմատական եզրահանգումներ,
5. ի վիճակի կլինի մասնակցելու գիտաժողովների և կոնֆերանսների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թուրքիա. 1-ին Թուրքական պետական կազմավորումները Փոքր Ասիայում: Օսմանյան պետության կազմավորումը: **Թեմա 2՝** Օսմանյան կայսրությունը 16–18-րդ դդ.: **Թեմա 3՝** Օսմանյան կայսրությունը 19-րդ դդ.: **Թեմա 4՝** Օսմանյան կայսրությունը 1900–1918 թթ.: Պանթուրքիզմի քաղաքականությունը և կայսրության կործանումը: **Թեմա 5՝** Թուրքիայի Հանրապետությունը (մինչև 1945 թ.): **Թեմա 6՝** Թուրքիան 1945–2005 թթ.: **Թեմա 7** Իրան. Սասանյան Իրանը 3-7-րդ դդ.: **Թեմա 8՝** Արաբական տիրապետությունը Իրանում: **Թեմա 9՝** Իրանը 11-15-րդ դդ.: **Թեմա 10՝** Սեֆյան Իրանը (Պարսկաստանը) 16-18-րդ դդ.: **Թեմա 11՝** Իրանը 19-րդ դ.: **Թեմա 12՝** Իրանը 20-րդ դ. 1-ին կեսին: **Թեմա 13՝** Իրանը 20-րդ դ. 2-րդ կեսին:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

0304/B57. «ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել Հունաստանի պատմությունը օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում, նրա անկախության վերականգնման և տնտեսական, մշակութային զարգացման հիմնախնդիրները մինչև մեր օրերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կատարելագործի Հունաստանի պատմության՝ վերսկսած օսմանյան տիրապետությունից մինչև 1930թ. անկախության ժամանակաշրջանը,
2. կիմանա Հունաստանի տնտեսական, կրոնական զարգացումները մինչև մեր օրերը,
3. կընկալի հույն ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները,
4. ճիշտ կմեկնաբանի նրա տեղն ու դերը արդի աշխարհում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բալկանյան թերակղզու և Հունաստանի նվաճումը Հռոմի կողմից: Հունաստանը Հռոմեական տիրապետության ժամանակաշրջանում: **Թեմա 2՝** Լոնդոնի կոնֆերանսը և Հունաստանի անկախության ճանաչումը: **Թեմա 3՝** Հունաստանի ներքաղաքական դրությունը 60-ական թթ.: **Թեմա 4՝** Հունաստանը անգլիական դիվանագիտության ծրագրերում: **Թեմա 5՝** Հունաստանի մասնակցությունը Փարիզի հաշտության կոնֆերանսին: **Թեմա 6՝** Լոզանի կոնֆերանսի որոշումները Հունաստանի վերաբերյալ: **Թեմա 7՝** Հունաստանը երկրորդ աշխարհամարտի և քաղաքացիական պատերազմների հետնախորքում: **Թեմա 8՝** Հունաստանի ներքաղաքական կյանքի դեմոկրատացման համար մղված պայքարը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

0304/B58. «ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (32 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել քաղաքակրթության տեսության պատմությունը, պատմական ճանաչողության ընդհանուր միտումներն ու բովանդակությունը, ծանոթացնել ինչպես քաղաքակրթական գիտակցության, այդպես և քաղաքակրթության տեսության կայացման ու ձևավորման ընթացքին, քաղաքակրթական հայեցակարգերի և մեթոդների կիրառմամբ ուսումնասիրել առանձին պատմական դարաշրջանների փոխակերպությունների քաղաքակրթական նախադրյալներն ու հետևանքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Ունակ կլինի որոշել պատմագիտության զարգացման տարբեր փուլերում պատմության և արդիության փոխհարաբերությունների սահմանները:
2. Կկարողանա ներկայացնել Հինարևելյան, Անտիկ, Միջնադարյան, Արդյունաբերական և Հետարդյունաբերական քաղաքակրթությունների տիպաբանությունը, բացատրել դրանց բովանդակային և հաստատութենական կառուցվածքը,
3. Կկարողանա մատնանշել քաղաքակրթության տեսաբաններից յուրաքանչյուրի տեսության հիմնարար բաղադրիչներն ու առանձնահատկությունները,
4. Կկարողանա համադրել քաղաքակրթական փոխակերպությունների առանձնահատկությունները ժամանակի տարբեր տևողությունների համապատկերում,

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքակրթությունն իբրև փոխաբերություն, գիտական հասկացություն և հետազոտական մոդել: ***Թեմա 2.*** Քաղաքակրթական պատկերացումները Հին Արևելյան երկրներում (Հին Եգիպտոս, Միջագետք, Հին Հնդկաստան, Հին Չինաստան): ***Թեմա 3.*** Քաղաքակրթական պատկերացումները Անտիկ դարաշրջանում (Հին Հունաստան, Հին Հռոմ): ***Թեմա 4.*** Քաղաքակրթական պատկերացումները Միջնադարում (Բյուզանդիա, Իսլամական աշխարհ): ***Թեմա 5.*** «Քաղաքակրթություն» եզրույթի առաջացումն ու քաղաքակրթության տեսության հիմնախնդիրները (Ն. Դանիլսկի, Օ. Շպենգլեր, Ա. Թոյնբի, Ֆ. Բրոդել, Պ. Սորոկին, Ն. Էլիաս, Ս. Հանթինգթոն):

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց:

4.2 «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

0302/B01. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» -1(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (15 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի հնչյունների հատկանիշներն ու դասակարգման սկզբունքները, բառապաշարի ընդհանուր հատկանիշները,
2. կհասկանա հնչյունափոխական առանձնահատկությունները, գրանշանների և հնչյունների փոխհարաբերությունը,
3. կկարողանա կատարել բառերի հնչյունաբանական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում. հայերենի զարգացման փուլերը: **Թեմա 2՝** Հայերենի հնչյունական համակարգը. այբուբենի հատկանիշները: **Թեմա 3՝** Հնչյուն և հնչույթ. հնչույթ և գրանշան: **Թեմա 4՝** Ձայնավորների դասակարգումը. բաղաձայնների դասակարգումը: **Թեմա 5՝** Շեշտը հայերենում. վանկ. տողադարձ: **Թեմա 6՝** Հնչյունափոխությունը և նրա տեսակները: **Թեմա 7՝** Հայերենի ուղղագրության սկզբունքները. ուղղագրական բարեփոխումներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B02. «ԳՐԱԲԱՐ» -1(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի հնչյունական և բառային իրողությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի հնչյունական, ուղղագրական, հնչյունափոխական և բառային հատկանիշները,
2. կհասկանա գրաբար տեքստերը,

3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի հնչյունաբանական, բառապաշարային վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարը՝ որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: **Թեմա 3՝** Գրաբարի դերբայները: **Թեմա 4՝** Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներ: **Թեմա 5՝** Գրաբարի անկանոն բայերը: **Թեմա 6՝** Գրաբարի պակասավոր բայերը: Պատճառական բայեր. գրաբարի բաղադրյալ ժամանակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B03. «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (45 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1–ին, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ ժողովրդի բանահյուսությունը, բանահյուսական ստեղծագործությունների ժանրերը, նրանց առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բանահյուսության և գեղարվեստական գրականության ընդհանրություններն ու տարբերությունները,
2. կհասկանա բանահյուսական ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել բանահյուսական նյութերի ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ժողովրդական բանահյուսության առարկան և հատկանիշները: **Թեմա 2՝** Բանահյուսության սեռերն ու ժանրերը: **Թեմա 3.** Բանագիտական դպրոցները: **Թեմա 4.** Հայ բանագիտությունը: **Թեմա 5.** Առասպելի ժանրը. վիպականն ու պատմականը հայ հին առասպելներում: «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» վեպերը: **Թեմա 6.** Հայ ժողովրդական էպոսը. էպոսի ժանրային առանձնահատկությունները. էպոսի պատումները: **Թեմա 7.** Հայ ժողովրդական հեքիաթները. հրաշապատում և իրապատում հեքիաթներ. դրանց մշակման եղանակները: Ավանդազրույցներ: **Թեմա 8.** Առակ, առած, ասացվածք, հանելուկ: **Թեմա 9.** Հայկական վիպական երգեր: **Թեմա 10.** Հայ ժողովրդական քնարերգություն. հայ գուսանական երգեր:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B04. «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (15 ժամ դասախոսություն, 15 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 1–ին, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել խոսքի մշակույթի ձևերն ու հատկանիշները, գործառական տարբերակները, լեզվի կիրառական ու հաղորդակցային հնարավորությունները, գրական արևելահայերենի լեզվական հիմնական կանոնները, գործառական տարբերակները, խոսքի արժանիքները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվական նորմավորման չափանիշները,
2. կհասկանա խոսքի արժանիքները, լեզվական մակարդակները, գործառական տարբերակները,
3. կկարողանա կազմել գրագետ, տպավորիչ ու տրամաբանված գրավոր ու բանավոր խոսք:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայոց լեզու և խոսքի մշակույթ առարկան, նպատակը, խնդիրները: Կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 2.** Լեզվական նորմ: Հայոց լեզվի հիմնական նորմերը՝ արտասանական, բառապաշարային, քերականական: **Թեմա 3.** Հնչյունական մակարդակ: Ուղղախոսություն: Օտար բառերի արտասանության յուրահատկությունները: Հնչերանգ: Շեշտ: **Թեմա 4.** Խոսքի արժանիքներ: Արտահայտչական և պատկերավորման միջոցներ: **Թեմա 5.** Բառային մակարդակ: Հայոց լեզվի բառապաշարի շերտերը: Ձևաիմաստային խմբերը: **Թեմա 6.** Քերականական մակարդակ: Ձևաբանություն, ձևաբանական նորմեր: Խոսքի մասերի գործածության յուրահատկությունները: **Թեմա 7.** Շարահյուսություն: Շարահյուսական կապակցության միջոցներ ու եղանակներ: Նախադասություն: կառուցվածքային տեսակները: Ուղղակի և անուղղակի խոսք: Փոխակերպումներ: **Թեմա 8.** Խոսքի գործառական տարբերակները: Ոճեր: Գրագրության ձևեր:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B05. «ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրականագիտական հիմնական հարցերը, խնդիրները, գրականության զարգացման օրինաչափությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրականագիտական առարկաների փոխադարձ առնչությունները, գրականագիտական մտքի պատմական զարգացման օրինաչափությունները.
2. կհասկանա գրական ժանրերի, տաղաչափական համակարգերի առանձնահատկությունները, գրականության լեզվաարտահայտչական միջոցները.
3. կկարողանա կատարել գրականագիտական ուսումնասիրություններ, կողմնորոշվել գրականագիտական հարցերում և կատարել գրական տեքստերի վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրականագիտությունը և նրա բաժինները. գրականությունն արվեստների համակարգում: **Թեմա 2՝** Գեղարվեստական պատկեր: **Թեմա 3՝** Գրական երկի բովանդակության և ձևի միասնությունը: **Թեմա 4՝** Թեմա, թեմատիկա, կառուցվածք, սյուժե ֆաբուլա: **Թեմա 5՝** Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները: **Թեմա 6՝** Չափաձո երկի կառուցվածքը. տաղաչափական համակարգեր: **Թեմա 7՝** Գրական սեռեր և ժանրեր:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B06. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» -2 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (15 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի բառապաշարի հատկանիշները, բառերի ձևախմբաստային խմբերի դասակարգման սկզբունքները, բառակազմական օրինաչափությունները,
2. կիսականա բառերի ստուգաբանական իմաստները, բառիմաստի պատմական փոփոխությունները, դարձվածքների կազմությունն ու գործածության ոճական նպատակը,
3. կկարողանա կատարել բառակազմական վերլուծություններ, ճիշտ կկիրառի ձևախմբաստային տարբեր խմբերի բառերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառագիտություն. նրա ենթաբաժինները: **Թեմա 2՝** Բառային մենիմաստություն և բազմիմաստություն. բառիմաստի փոփոխություն. բառերի ձևախմբաստային խմբերը: **Թեմա 3՝** Բառապաշար. նրա հատկանիշները: Բառապաշարի շերտերը և դրանց դասակարգումը: **Թեմա 4՝** Բառակազմություն: Ձևային և նրա տեսակները: **Թեմա 5՝** Բարդություններ, նրանց տեսակները: **Թեմա 6՝** Դարձվածաբանություն. դարձվածային միավորների հատկանիշները և դասակարգումը: **Թեմա 7՝** Բառարանագրություն. բառարանների տիպերը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/ՅՕ7. «ԳՐԱԲԱՐ» -2(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի բառային և ձևաբանական իրողությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի բառային և ձևաբանական հատկանիշները,
2. կիսականա գրաբար տեքստերը,
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի բառապաշարային և ձևաբանական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարի անվանական հոլովումը: Հոլովները և նրանց կազմությունը. հոլովման համակարգի տարբերությունն աշխարհաբարի համեմատությամբ: **Թեմա 2՝** Պարզ հոլովումներ. Ա, Ե, Ի, Ո, ՈԻ, հոլովումներ: **Թեմա 3՝** Խառը հոլովումներ. Ի-Ա, Ո-Ա հոլովումներ: **Թեմա 4՝** Անկանոն հոլովումներ: **Թեմա 5՝**

Ածական անուն: Ածականների համեմատական աստիճանների կազմությունը:
Թվական անուն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

**0302/B08. «ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
(7 կրեդիտ)**

Շաբաթական՝ 7 ժամ (70 ժամ դասախոսություն, 35 ժամ սեմինար պարապ-
մունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ հին և միջնա-
դարյան գրավոր գրականությունն իր ծագման և զարգացման սկզբնական դարե-
րում (5–9-րդ դդ.), հայ գրականության պատմության մեջ առանձնացվող վերա-
ծննդի և ուշ միջնադարյան շրջանների (10–18-րդ դդ.) գրականությունների
առանձնահատկությունները, նրանց գաղափարական տարբերությունները, այդ
շրջանների հայտնի ստեղծագործողների կյանքը, ժամանակը, նրանց
ստեղծագործությունները և բացահայտել դրանց առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ հին և միջնադարյան գրականության ծագման և զարգացման
պատմությունը 5-9-րդ դդ., հայ միջնադարյան գրականության
պատմության մեջ առանձնացվող վերածննդի և ուշ միջնադարյան
շրջանների (10-18-րդ դդ.) գրականությունների
առանձնահատկությունները,
2. կհասկանա հայ հին և միջնադարյան գրավոր գրականության (5-9-րդ դդ.)
ազգային-պատմական, գրական-հասարակական դերն ու նշանակությու-
նը, վերածննդի հայ գրականության և ուշ միջնադարյան շրջանի գրողների
ստեղծագործությունների բովանդակության էությունը և վերջինս կապը
պատմական ժամանակաշրջանի աշխարհայեցողության հետ,
3. կկարողանա գնահատել հայ հին և միջնադարյան գրականության՝ 5-ից 9-
րդ դարերի շրջանը ապահովող ազգային-քաղաքական, կրոնական-մշա-
կութային խնդիրները, վերածննդի և ուշ միջնադարյան շրջանի հեղինակ-
ների գործերը, պայմանավորել յուրաքանչյուրի ու նրա
ստեղծագործության գաղափարական առնչությունը ժամանակաշրջանի
ազգային-հասարակական տրամադրությունների հետ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ մշակույթը մինչև 5-րդ դարը. Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծու-
մը. գրականության զարգացման հիմնական ուղղությունները: **Թեմա 2՝** Ազա-
թանգեղոս, Փ. Բուզանդ, Մ. Խորենացի, Եղիշե, Դ. Փարպեցի: **Թեմա 3՝** Հայ գրա-
կանությունը 6-9-րդ դդ.: Սեբեոս, Հ. Մամիկոնյան, Դ. Քերթոզ, Էկեղեցական

բանաստեղծություն: **Թեմա 4**՝ Հայ գրականությունը 10- 12-րդ դդ. Հ. Դրասխանակերտցի, Թ. Արծրունի, Գ. Նարեկացի, Գ. Մագիստրոս, Հ. Իմաստասեր, Ն. Շնորհալի, Մ. Գոշ: **Թեմա 5**՝ Հայ գրականությունը 13-16-րդ դդ. Վ. Այգեկցի, Ֆրիկ, Կ. Երզնկացի, Հ. Թլկուրանցի, Մ. Նաղաշ, Գ. Աղթամարցի, Ն. Քուչակ: **Թեմա 6**՝ Հայ գրականությունը 17-18-րդ դդ. Ն. Հովնաթան, Սայաթ-Նովա:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B10. «ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 2-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվաբանական ընդհանուր կարգերը, աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը լեզվաընտանիքներում:

Կրթական արդյունքներ.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվական ընդհանուր կարգերը.
2. կհասկանա ցեղակից և ոչ ցեղակից լեզուների նմանություններն ու տարբերությունները.
3. կկարողանա տարբերել տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը. լեզվի գոյության ձևերը: **Թեմա 2**՝ Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները. գրային համակարգեր: **Թեմա 3**՝ Լեզուների բառային համակարգերը: **Թեմա 4**՝ Լեզուների ձևաբանական համակարգերը: **Թեմա 5**՝ Լեզուների շարահյուսական համակարգերը: **Թեմա 6**՝ Լեզվի ծագումը: **Թեմա 7**՝ Աշխարհի լեզուների դասակարգումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B11. «19-ԸՂ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -1/5

կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (45 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման
նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարի հայ գրականության գրական ուղղությունները, հայ նոր գրականության ձևավորումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ ժողովրդի քաղաքական կացությունը 19-րդ դարի սկզբին. հայ լուսավորական շարժումը. Մխիթարյաններ. կլասիցիզմը հայ գրականության մեջ. հայ գրականության նոր շրջանի սկզբնավորումը: **Թեմա 2՝** Հ. Ալամդարյան, Մ. Թադիաղյան: **Թեմա 3՝** Խ. Աբովյան, Դ. Ալիշան: **Թեմա 4՝** Հայ գրականությունը 1850-60-ական թթ. Մ. Նալբանդյան: **Թեմա 5՝** Ռ. Պատկանյան, Ս. Շահագիզ: **Թեմա 6՝** Մ. Պեշիկթաշլյան, Պ. Դուրյան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B13. «ԳՐԱԲԱՐ» -3(3 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման
նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հին հայերենի՝ գրաբարի ձևաբանական և շարահյուսական իրողությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները,
2. կհասկանա գրաբար տեքստերը,
3. կկարողանա կատարել գրաբարյան բնագրերի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարի դերանվանական հոլովումը: Անձնական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 2՝** Յուզական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 3՝** Ստացական և փոխադարձ դերանուններ: **Թեմա 4՝** Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: **Թեմա 5՝** Մակբայների տեսակներն ու կազմությունը գրաբարում: Գրաբարի շաղկապները: **Թեմա 6՝** Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302 / B14. «ԱՆՏԻԿ ԵՎ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԱՐՏԱՄԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անտիկ և վերածննդի շրջանի արտասահմանյան գրականության սեռային և ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անտիկ և վերածննդի շրջանի գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անտիկ գրականության առարկան, համառոտ պատմական ակնարկ. նախահոմերոսյան Հունաստանը: **Թեմա 2՝** Հոմերոսյան հարցի պատմությունը. Հոմերոսի ստեղծագործությունը: **Թեմա 3՝** Անտիկ շրջանի պոեմները. բանաստեղծությունը. քնարերգության առաջացումը. հույներ և երգիծանք: **Թեմա 4՝** Թատրոնը և դրամայի ծագումը. ողբերգություններ և կատակերգություններ: **Թեմա 5՝** Անտիկ աշխարհի կործանումը. քրիստոնեական գրականության սկզբնավորումը: **Թեմա 6՝** Միջնադարյան մշակույթի առանձնահատկությունները. աստվածաբանական-փիլիսոփայական երկեր: **Թեմա 7՝** Լեգենդներ և վարքագրություններ. հոգևոր դրամա. էպիկական պոեմներ. ասպետական վեպ: **Թեմա 8՝** Դանթե. Պետրարկա. Բոկաչիո. Է. Ռոտերդամցի. Ֆ. Վիյոն. Ֆ. Ռաբլե:

Թեմա 9՝ Պիկարոյական վեպը, հովվերգական վեպ, պատմական ողբերգություններ, փիլիսոփայական պիեսներ, քնարերգություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B16. «ԺԱՄՄՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»-1

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (30 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը, գոյական, ածական, թվական, դերանուն խոսքի մասերի հատկանիշները, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշները,
2. կհասկանա խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, քերականական կարգերի տարբերակման չափանիշները,
3. կկարողանա կատարել ձևաբանական վերլուծություններ, ճիշտ կկիրառի քերականական գուգաձևությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ձևաբանությունը՝ որպես լեզվաբանության բաժին. քերականական կարգեր. քերականական ձև, իմաստ և պաշտոն: **Թեմա 2՝** Խոսքի մասերի դասակարգման հիմունքները. թեքվող և չթեքվող խոսքի մասեր: **Թեմա 3՝** Գոյական. գոյականի թվի, հոլովի, առկայացման կարգերը. իմաստային-քերականական խմբերը: **Թեմա 4՝** Ածական. տեսակները և նրանց հատկանիշները: **Թեմա 5՝** Թվական. տեսակները և կազմությունը: **Թեմա 6՝** Դերանուն. նրա տեսակները և դրանց քերականական հատկանիշները: **Թեմա 7՝** Բայ. Բայերի կազմությունը, բայահիմքեր, դերբայներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B17. «ԺԱՄՄՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»-2

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (30 ժամ դասախոսություն, 45 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը, բայ, մակբայ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերի հատկանիշները, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշները,
2. կհասկանա խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, քերականական կարգերի տարբերակման չափանիշները,
3. կկարողանա կատարել ձևաբանական վերլուծություններ, ճիշտ կկիրառի քերականական գուգաձևությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բայ. բայի քերականական կարգերը՝ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, կերպ, եղանակային ձևեր: **Թեմա 2՝** Մակբայ. նրա տեսակները և կազմությունը: **Թեմա 3՝** Կապ. նրա տեսակները. դասակարգման սկզբունքները: **Թեմա 4՝** Շաղկապ. նրա տեսակները: **Թեմա 5՝** Վերաբերական. նրա տեսակները: **Թեմա 6՝** Ձայնարկություն. նրա տեսակները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B18. «19-ԸՂ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -2

(7 կրեդիտ)

Շաբաթական՝ 7 ժամ (75 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարի հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.
2. կիսականա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը

Թեմա 1՝ Հայ հասարակական-քաղաքական կյանքը 19-րդ դարի 70-80-ական թթ. գրական հոսանքներ.: **Թեմա 2՝** Ռոմանտիզմը և ռեալիզմը հայ իրականության մեջ: **Թեմա 3՝** Պ. Պոռշյան, Ղ. Աղայան: **Թեմա 4՝** Գ. Սունդուկյան, Բաֆֆի: **Թեմա 5՝** Հ. Պարոնյան, Ծերենց: **Թեմա 6՝** Ս. Տյուսաբ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302 / B21. « 17-19-ԴԴ ԴԱՐԵՐԻ ԱՐՏԱՄԱՀՄԱՆՑԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏ-ՄՈՒԹՅՈՒՆ» (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ուսանողներին նշված շրջանների արտասահմանյան գրականության ընդհանուր պատկերը, զարգացման ընթացքը, հիմնական ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

2. կիմանա 17-19-րդ դարերի արտասահմանյան գրականության ուղղությունները, ժանրերը, զարգացման օրինաչափությունները, գաղափարական և գեղագիտական հիմքերն ու նվաճումները,
3. կիսականա գրական երկերի գաղափարական առանձնահատկությունները, դրանց պատմական-հասարակական դերը,
4. կկարողանա տալ նշված ժամանակաշրջանի հիմնական հեղինակների և նրանց ստեղծագործության նկարագիրը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կլասիցիզմի առաջացումը. կլասիցիզմի տեսությունը: **Թեմա 2՝** Անգլիական վեպի ձևավորումը և զարգացումը 18-րդ դարում: **Թեմա 3՝** Ֆրանսիական

լուսավորչական գրականություն. պայքար կլասիցիզմի դեմ: **Թեմա 4՝** Ռոմանտիզմի պատմական նախադրյալները. ռոմանտիզմի փիլիսոփայական ակունքները: **Թեմա 5՝** Անհատի նշանակության բարձրացումը Գյոթեի փիլիսոփայության մեջ: **Թեմա 6՝** Գրականության պատմականության տեսակետը: **Թեմա 7՝** Քաղաքական երգիծանքը գրականության մեջ: **Թեմա 8՝** Ռոմանտիկական քնարերգություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B19. «ԲԱՐԲԱՈՒԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (22 ժամ դասախոսություն, 8 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 3-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի բարբառները, դրանց դասակարգման սկզբունքները, բարբառների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները.
2. կհասկանա հայերենի բարբառների հնչյունական, բառային և քերականական հատկանիշները.
3. կկարողանա տարբերել բարբառը, ենթաբարբառը, խոսվածքը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բարբառագիտությունը՝ որպես գիտաճյուղ: **Թեմա 2՝** Բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները: **Թեմա 3՝** Բարբառների հնչյունական համակարգերը: **Թեմա 4՝** Բարբառների բառային համակարգերը: **Թեմա 5՝** Բարբառների ձևաբանական համակարգերի տարբերությունները. սահմանական ներկան՝ որպես բարբառների ճյուղերի տարբերակման հիմք. ՈՒՄ, ԿԸ, ԵԼ ճյուղերի բարբառներ: **Թեմա 6՝** Տարբեր ճյուղերի բարբառների ձևաբանական և շարահյուսական տարբերությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/Բ01. «13-18-ԸՆԴ ՂԱՐԵՐԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 13-18-րդ դարերի հայ քնարերգության առանձնահատկություններին և նրա հետագա ավանդներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 13-18-րդ դարերի հայ քնարերգության բովանդակային և տաղաչափական առանձնահատկությունները.
2. կհասկանա 13-18-րդ դարերի հայ քնարերգության յուրահատկությունները.
3. կկարողանա համադրել 13-18-րդ դարերի հայ քնարերգության և հետագա դարերի ստեղծագործությունները՝ մեկնաբանելով դրանց առնչությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համառոտ ակնարկ հայ հին քնարերգության վերաբերյալ: **Թեմա 2՝** Միջնադարյան հայ քնարերգության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 3՝** Միջնադարյան տաղերգուներ: **Թեմա 4՝** Ֆրիկ, Հ. Երզնկացի, Կ. Երզնկացի, Թլկուրանցի, Ն. Քուչակ և այլն: **Թեմա 5՝** 13-18-րդ դարերի հայ քնարերգության տաղաչափական համակարգերը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատուսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B01. «ՀԱՅ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել առասպելներին և նրանց առանձնահատկություններին, առասպելների արտացոլմանը գրականության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա առասպելների ծագումնաբանական և կառուցվածքային առանձնահատկությունները.
2. կհասկանա առասպելների զարգացումն ու տրանսֆորմացիայի ուղիները.
3. կկարողանա կատարել առասպելների ուսումնասիրություններ և վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դիցաբանական համակարգերի էությունը: Դիցաբանության տեսություն: **Թեմա 2՝** Դիցաբանական համակարգերի ուսումնասիրության մեթոդներն ու դպրոցները: **Թեմա 3՝** Դիցաբանական համակարգերի

կատեգորիաները: **Թեմա 4՝** Շումերաաքքադական կրոնական դիցաբանական համակարգերի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 5՝** Աշխարհի և մարդու ծագման շումերական առասպելները: **Թեմա 6՝** Աքքադական դիցաբանական համակարգը: **Թեմա 7՝** Իշտարի և Թամմուզի առասպելը: <<Գիլգամեշ>> էպոսը: **Թեմա 8՝** Եգիպտական դիցաբանական վաղ շերտի ձևավորումը: **Թեմա 9՝** Տեղական և համաեգիպտական աստվածների պաշտամունքը: **Թեմա 10՝** Եգիպտական դասական դիցաբանությունը: **Թեմա 11՝** Վաղ հունական դիցաբանական շերտը և նրա բարեշրջման փուլերը: **Թեմա 12՝** Նախաօլիմպիոսյան դիցաբանական թեոգոնիան: **Թեմա 13՝** Օլիմպիոսյան դիցարանը: **Թեմա 14՝** Վաղ Հռոմեական դիցաբանական շերտը: **Թեմա 15՝** Հռոմեական դասական դիցաբանությունը: **Թեմա 16՝** Հռոմեական կայսրության պետական կրոնը (գաղափարախոսությունը): **Թեմա 17՝** Հայկական դիցաբանության արիական շերտը: **Թեմա 18՝** Հայոց ազգային դիցարանը: **Թեմա 19՝** Զրադաշտականություն: **Թեմա 20՝** Ավեստայի կանոնականացումը: Խոսքով I Անուշիրվան (531-579): **Թեմա 21՝** Հնդկական դիցաբանության արիական շերտը: **Թեմա 22՝** Բրահմայական դիցարանը: **Թեմա 23՝** Հինդուիստական դիցարանը: **Թեմա 24՝** Կոնֆուցիականություն: **Թեմա 25՝** Դաոսականություն: **Թեմա 26՝** Սինտոիզմ (կամի նո միտի):

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B02. «ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գրաբարի և արդի արևելահայերենի հնչյունական, բառային և քերականական համակարգերի զուգադրական քննությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրաբարի և արդի արևելահայերենի հնչյունական, բառային և քերականական համակարգերի առանձնահատկությունները.
2. կհասկանա լեզվի պատմական զարգացման ընթացքը.
3. կկարողանա կատարել գրաբարի և արդի արևելահայերենի հնչյունական, բառային և քերականական համակարգերի զուգադրական քննություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրաբարի և արդի արևելահայերենի հնչյունական համակարգերի զուգադրական քննություն: **Թեմա 2՝** Բառապաշարի պատմական զարգացումը. իմաստափոխություն: **Թեմա 3՝** Բառակազմական կաղապարների փոփոխու-

թյուններ: **Թեմա 4՝** Գրաբարի ձևաբանական համակարգը արդի արևելահայերենի համակարգի զուգադրությամբ: **Թեմա 5՝** Գրաբարի և արդի արևելահայերենի շարահյուսական համակարգերի զուգադրական քննություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/Բ02. «ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 4-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայերենի բառապաշարի պատմական իմաստափոխությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բառիմաստափոխության հիմունքներ.
2. կհասկանա բառիմաստի պատմական զարգացման և փոփոխության օրինաչափությունները.
3. կկարողանա կատարել բառապաշարի իմաստափոխության ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառագիտությունը՝ որպես լեզվաբանության բաժին. իմաստաբանություն: **Թեմա 2՝** Բառիմաստի փոփոխության հիմունքները: **Թեմա 3՝** Բառիմաստի փոփոխության ճանապարհները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/Բ22. «19-20-Ը ԴԱՐԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ուսանողներին նշված շրջանների արտասահմանյան գրականության ընդհանուր պատկերը, զարգացման ընթացքը, հիմնական ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության ուղղությունները, ժանրերը, զարգացման օրինաչափությունները, գաղափարական և գեղագիտական հիմքերն ու նվաճումները,
2. կիսականա գրական երկերի գաղափարական առանձնահատկությունները, դրանց պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա տալ նշված ժամանակաշրջանի հիմնական հեղինակների և նրանց ստեղծագործության նկարագիրը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Անցում ռոմանտիզմից դեպի ռեալիզմ: **Թեմա 2՝** Նատուրալիզմի սիմվոլիզմի առաջացումը: **Թեմա 3՝** Երաժշտության և պոեզիայի հարաբերությունների հարցը սիմվոլիզմի տեսության մեջ: **Թեմա 4՝** Սյուրռեալիզմի դրսևորումը: **Թեմա 5՝** Հետպատերազմյան շրջանի գրականությունը: **Թեմա 6՝** Ֆրանսիական «աբսուրդի» թատրոնը: **Թեմա 7՝** Ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, իսպանական, լատինաամերիկյան գրականության զարգացման միտումները, ժանրային առանձնահատկությունները, հեղինակների նորարարությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B23. «19-ԸՂ ՂԱՐԱՎԵՐՁԻ ԵՎ 20-ԸՂ ՂԱՐԱՍԿՁԲԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-1 (6կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (70 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը, նրա գաղափարական և գեղագիտական տարրությունը, գրական վարպետության բարձր մակարդակը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական միտումներն ու ուղղությունները, հասարակական կյանքի պատմական զարգացման ընթացքի արտացոլումը գրականության մեջ,
2. կիսականա գրական ստեղծագործությունների գեղագիտական ու գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,

3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ հասարակական-քաղաքական կյանքը 19-րդ դարի 90-ական թթ. քննադատական ռեալիզմի զարգացումը: **Թեմա 2՝** Շիրվանզադե, Մուրացան: **Թեմա 3՝** Նար-Դոս, Հ. Հովհաննիսյան: **Թեմա 4՝** Ալ. Օստուրյան. 1890-ական թթ. գյուղագրությունը: **Թեմա 5՝** Վրթ. Փափագյան: **Թեմա 6՝** Ա. Արփիարյան, Տ. Կամսարական, Գ. Զոհրապ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B24. «ԺԱՄՄՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՇԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ» -1

(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգն իր հատկանիշներով, ուսուցանել բառերի կապակցման միջոցներն ու եղանակները, պարզ նախադասության հատկանիշները, կառուցվածքը, նախադասության գլխավոր ու երկրորդական անդամները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի բովանդակությունը
2. կհասկանա նախադասության դասակարգման հիմունքները, կառուցվածքային տեսակների առանձնահատկությունները. նախադասության անդամների տարբերակման շարահյուսական սկզբունքները:
3. կկարողանա ճիշտ կիրառել շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները, տարբերակել բառակապակցությունները, կատարել պարզ նախադասության շարահյուսական վերլուծություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Շարահյուսությունը՝ որպես լեզվաբանության բաժին. շարահյուսական կաղապարներ և շարահյուսական նվագագույն միավորներ: **Թեմա 2՝** Բառերի

շարահյուսական կապակցման միջոցները: **Թեմա 3՝** Բառերի շարահյուսական կապակցման եղանակները: **Թեմա 4՝** Բառակապակցություն. նրա դասակարգման սկզբունքները: **Թեմա 5՝** Նախադասությունը. նրա քերականական կարգերը: **Թեմա 5՝** Նախադասության կառուցվածքային տեսակները: **Թեմա 6՝** Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի: **Թեմա 7՝** Միակազմ նախադասություններ: **Թեմա 8՝** Պարզ նախադասության կառուցվածքը: Գլխավոր անդամներ: Ենթական և նրա արտահայտությունը: **Թեմա 9՝** Ստորոգյալի արտահայտությունը. տեսակները: **Թեմա 10՝** Գոյականական անդամի լրացումներ: **Թեմա 11՝** Բայական անդամի ինդիք լրացումներ: **Թեմա 12՝** Բայական անդամի պարագա լրացումներ: **Թեմա 13՝** Դերբայական դարձված: **Թեմա 14՝** Նախադասության տրոհվող և հարակից միավորներ: **Թեմա 15՝** Նախադասության անդամների բաշխումն ըստ հոլովների:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B25. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 5-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել լեզվաբանական ուղղությունները, լեզվաբանական դպրոցները, լեզվաբանության ուսումնասիրման մեթոդները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվաբանության ուսումնասիրման մեթոդներն ու ուղղությունները,
2. կհասկանա ուսումնասիրման տարբեր եղանակների դրական և բացասական կողմերը. լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները,
3. կարողանա տարբերել լեզվական կարգերը, կվերլուծի լեզվաբանական տարբեր ուսմունքներով կատարված ուսումնասիրությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզուների ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 2՝** Լեզվաբանական ուղղությունները: **Թեմա 3՝** Լեզվաբանական դպրոցները: **Թեմա 4՝** Ընդհանուր և մասնավոր լեզվաբանություն: **Թեմա 5՝** Պատմահամեմատական լեզվաբանություն: **Թեմա 6՝** Տիպաբանական լեզվաբանություն: **Թեմա 7՝** Կառուցվածքային լեզվաբանություն: **Թեմա 8՝** Ճանաչողական լեզվաբանություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B03. «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ «ՀԵԹԱՆՈՍ» ԱՎԱՆԴՆԵՐԸ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ գրականության կենսունակ ավանդներից մեկին՝ Գողթան երգերից մինչև Պարույր Սևակ ու Հր. Մաթևոսյան հարատևող կյանքի հեթանոս զգացողության դրսևորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա «հեթանոս» հազարամյա ավանդույթի գեղագիտական բնույթը.
2. կիմանա «հեթանոս» ավանդույթի ամենատարբեր դրսևորումների գեղարվեստական ու գաղափարական հետապնդումները.
3. կկարողանա մեկնաբանել գրական «հեթանոս» ավանդույթի գաղափարական ու գեղագիտական տարաբնույթ դրսևորումները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ «Գողթան երգերը» ժողովրդական հեթանոս ոգու արծարծումներ: 5-րդ դարի հայ պատմագրության աշխարհիկ ոգին հեթանոս ավանդույթների արտահայտություն: «Մասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի բնապաշտ ոգու գանձարան: **Թեմա 2՝** Դավթակ Քերթողի «Ողբի» աշխարհիկ-հեթանոսական ոգին: Գրիգոր Նարեկացու տաղերի վերածնական խորհուրդը: Բնության մեծարումն ու շնչավորումը որպես հեթանոս ավանդույթի դրսևորում: **Թեմա 3՝** Կոստանդին Երզնկացու սիրո ու զարնան տաղերի հեթանոս ոգին: Երզնկացին հայկական վերածննդի՝ հետնարեկացիական խոշորագույն դեմք: Հովհաննես Իմաստասերը և Գր. Մագիստրոսը ժամանակի նոր մտավորական դեմքեր: **Թեմա 4՝** Միջնադարյան տաղերգության աշխարհականացումը հեթանոս ավանդույթի դրսևորում (Հովհ. Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի, Նաղաշ Հովնաթան, Մայաթ-Նովա և ուրիշներ): **Թեմա 5՝** Բնապաշտ վարքի մեծարումը (խեղճության բարոյաբանության մերժումը) Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում: **Թեմա 6՝** «Հեթանոս» ոգու մեծարումը Բաֆֆու ծրագրային-քաղաքական վեպերում: «Հեթանոս մեծության» արծարծումները Բաֆֆու «Մամվել» և Ծերենցի «Երկունք Թ. դարու» վեպերում: **Թեմա 7՝** Գրական հեթանոսությունը Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակում: Զոհրապի սիրո նովելների ու Շանթի մի շարք երկերի հեթանոս լիցքերը: **Թեմա 8՝** Դանիել Վարուժանը և <գրական հեթանոսության> արտահայտումները 20-րդ դարասկզբի արևմտահայ գրականության մեջ: **Թեմա 9՝** Հեթանոս ավանդների ուրույն դրսևորումները Թումանյանի, Իսահակյանի և Տերյանի ստեղծագործությունների մեջ: **Թեմա 10՝** Հեթանոս ավանդույթի բազմազան դրսևորումները Չարենցի պոեզիայում («Տաղարան», «Էպիկական լուսաբաց», «Գիրք ճանապարհի» և այլն): **Թեմա 11՝**

Հովհ. Շիրազի գարնաներգության և սիրերգության «շամիրամյան» շերտերը՝ հեթանոս ավանդույթի տարբեր դրսևորումներ: **Թեմա 12՝** «Հայոց դարձի» արծարծումների և սիրո երգերի հեթանոս բնույթը Պ. Սևակի պոեզիայում: Հեթանոս ավանդույթը Հ. Սահյանի, Վ. Դավթյանի բնության, գինու և սիրո երգերում: Հեթանոս ոգու ուրույն դրսևորումը Հր. Մաթևոսյանի «Գոմեշը» վիպակում:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/Բ03. «ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրական երկի վերլուծության սկզբունքները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրական երկի վերլուծության սկզբունքները.
2. կհասկանա վերլուծման տարբեր եղանակների առանձնահատկությունները.
3. կկարողանա կատարել գրական ստեղծագործությունների վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գրական ստեղծագործության վերլուծման սկզբունքները: **Թեմա 2.** Վերլուծման համակողմանի մոտեցումներ: **Թեմա 3.** Գրական երկերի վերլուծման ժամանակակից եղանակները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/Բ04. «ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայերենի ուղղագրության պատմությանը, ուղղագրական փոփոխություններին, ժամանակակից հայերենի ուղղագրական և ուղղախոսական նորմերին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայերենի ուղղագրության հիմնական սկզբունքները և նրանց փոփոխությունները ժամանակի ընթացքում.
2. կհասկանա լեզվի պատմական զարգացման ընթացքում ուղղագրության փոփոխությունների անհրաժեշտությունը.
3. կկարողանա անսխալ ու գրագետ գրավոր խոսք կազմել, բացատրել ուղղագրական կանոնները

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մ. Մաշտոցը և հայոց գրերի ստեղծումը. ուղղագրության առաջին սկզբունքները: Հայերենի ուղղագրության վիճակը միջնադարում. փոփոխություններ այբուբենում և ուղղագրության մեջ: **Թեմա 2՝** 1922 և 1940 թթ. ուղղագրական բարեփոխումները: **Թեմա 3՝** Բաղաձայնների ուղղագրությունը: **Թեմա 4՝** Չայնավորների և երկինչյունների ուղղագրությունը: **Թեմա 5՝** Տողադարձ. համառոտագրություններ և հապավումներ. դրանց գրության ձևերը պատմական տարբեր շրջաններում: **Թեմա 6՝** Մեծատառեր և փոքրատառեր, հատուկ անունների ուղղագրությունը: **Թեմա 7՝** Բառակազմության և ուղղագրության առնչակցությունները: Ուղղագրության վերաբերյալ արդի բանավեճերը: **Թեմա 8՝** Տեքստերի ուղղագրական վերլուծություններ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/Բ04. «ԺԱՄՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 5-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի կետադրության համակարգը, տեսակները, գործածության դեպքերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կետադրության համակարգը գործածության բոլոր դեպքերը.
2. կհասկանա կետադրության ճիշտ գործածության դերն ու կարևորությունը գրավոր և բանավոր խոսքում.
3. կկարողանա անսխալ գործածել կետադրության բոլոր տեսակները կիրառության բոլոր բոլոր ոլորտներում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կետադրության ընդհանուր համակարգը, խոսքը կանոնավորող դերը, կիրառության ոլորտները: **Թեմա 2.** Հայերենի տրոհության նշանները և գործածության դեպքերը: ա/ Ստորակետի գործածությունը, բ/բութի գործածությունը, գ/ միջակետի գործածությունը: **Թեմա 3.** Առոգանության նշանները և նրանց գործածությունները /հարցական, բացականչական նշաններ,

շեշտ/։ Բառային և տրամաբանական շեշտի դերը գրավոր և բանավոր խոսքում։ **Թեմա 4.** Բացահայտության նշաններ /չակերտներ, անջատման գիծ, միության գիծ և ենթամնա, կետ, կախման կետ, բազմակետ, փակագիծ։ Նրանց գործածության դեպքերը։ **Թեմա 5.** Կետադրություն և գեղարվեստական ասմունք։ **Թեմա 6.** Խոսքի հետ քերականորեն չկապվող և անկախ գործածվող բառերի, բառակապակցությունների կետադրության գործածությունը և ուղղագրությունը, գործնական գրությունների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների էջերի ձևավորում, մեջբերումների, հղումների ու ծանոթագրությունների կետադրություն։

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր։

0302/B26. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՇԱՐԱՀԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ» -2

(5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգն իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բարդ նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները, բարդ նախադասության հատկանիշները։

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի հատկանիշները.
2. կհասկանա բարդ նախադասության կառուցվածքային տեսակների որոշման սկզբունքները, բաղադրիչ նախադասությունների շարահյուսական գործառույթները.
3. կկարողանա կատարել բարդ նախադասության շարահյուսական վերլուծություններ, որոշել ստորադաս նախադասությունների շարահյուսական գործառույթները (բնույթները)։

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բարդ նախադասությունը՝ որպես լեզվական միավոր. նրա բնութագիրը։ Համադասություն և ստորադասություն։ **Թեմա 2՝** Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները։ **Թեմա 3՝** Բարդ համադասական նախադասությունը՝ որպես լեզվական միավոր. նրա տեսակները։ Բաղիյուսական կապակցություն։ **Թեմա 4՝** Ներհակական կապակցություն։ **Թեմա 5՝** Բարդ ստորադասական նախադասություն, նրա դասակարգման հիմունքները։ **Թեմա 6՝** Ենթակա և ստորոգելի ստորադաս նախադասություններ։ **Թեմա 7՝** Գոյականական անդամի լրացում երկրորդական

նախադասություններ: **Թեմա 8՝** Բայական անդամի խնդիր լրացում երկրորդական նախադասություններ: **Թեմա 8՝** Բայական անդամի պարագա լրացում երկրորդական նախադասություններ: **Թեմա 9՝** Բարդ ստորադասական նախադասության պարզեցում: **Թեմա 11՝** Բազմաբաղադրիչ նախադասություններ: **Թեմա 12՝** Ուղղակի և անուղղակի խոսք: Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակի խոսքի:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B27. «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել գրականագիտական և գեղագիտական հիմնական խնդիրները, գրական ժանրերը, տաղաչափության հիմունքները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա գրականության և գեղագիտության փոխադարձ առնչությունները.
2. կհասկանա գրական ուղղությունները, գեղագիտական կատեգորիաները.
3. կկարողանա կատարել գրականագիտական ուսումնասիրություններ, գա-
նազանել գրական-գեղարվեստական ուղղությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գրականագիտություն և գեղագիտություն: **Թեմա 2՝** Գեղագիտական միտքը անտիկ շրջանում, միջնադարում, վերածննդի շրջանում: **Թեմա 3՝** Գեղագիտական կատեգորիաներ: **Թեմա 4՝** Գրականությունը՝ որպես արվեստի տեսակ. սեռեր և ժանրեր: **Թեմա 5՝** Գրական-գեղարվեստական ուղղություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0305/B28. «ՈՌԻՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (45 ժամ դասախոսություն, 15 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռուս գրականության սեռային և ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուս գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղղությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ռուս գրականության զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2՝** Ռուսական ժողովրդական բանավոր ստեղծագործությունը. բիլինաներ: **Թեմա 3՝** Պատմական էպիկական երգեր: **Թեմա 4՝** Ռուս հին գրականություն. «Ասք Իգորի ճակատամարտի մասին»: **Թեմա 5՝** 18-րդ դարի ռուսական պոեզիան և արձակը: **Թեմա 6՝** 19-րդ դարի ռուսական պոեզիան և արձակը: **Թեմա 7՝** 20-րդ դարի ռուսական պոեզիան և արձակը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B29. «19-ԴԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ 20-ԴԴ ԴԱՐԱՄԿՁԲԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -2 (6 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (60 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը, զարգացման միտումներն ու ուղղությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական միտումներն ու ուղղությունները, հասարակական կյանքի պատմական զարգացման ընթացքի արտացոլումը գրականության մեջ,
2. կիսականա գրական ստեղծագործությունների գեղագիտական ու գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ հասարակական-քաղաքական կյանքը 20-րդ դարի սկզբին. հայ պարբերական մամուլը: **Թեմա 2՝** Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան: **Թեմա 3՝** Լ. Շանթ, Ե. Օտյան, Մ. Մեծարենց: **Թեմա 4՝** Միամանթո, Դ. Վարուժան: **Թեմա 5՝** Շ. Կուրդիմյան, Վ. Տերյան:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B31. «ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆ» (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել արևմտահայերենի հնչյունական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, արևելահայերենի և արևմտահայերենի միջև եղած տարբերությունները և նմանությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արևմտահայերենի ձևավորումը, հնչյունական, բառային և քերականական հատկանիշները,
2. կիսականա արևմտահայերենի ու արևելահայերենի միջև եղած տարբերություններն ու նմանությունները,
3. կկարողանա հասկանալ և վերլուծել արևմտահայերեն տեքստեր, հաղորդակցվել արևմտահայերենով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայերենի զարգացման փուլերը. Աշխարհաբարի կազմավորումը, գրապայքար. արևմտահայերենի ձևավորումը: **Թեմա 2՝** Արևմտահայերենի հնչյունական համակարգը. ուղղագրություն. բաղաձայնական համակարգի արտասանական առանձնահատկությունները. հնչյունափոխություն: **Թեմա 3՝** Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային ընդհանրություններն ու տարբերությունները: Դարձվածային միավորներ: **Թեմա 4՝** Արևմտահայերենի և արևելահայերենի ձևաբանական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները: **Թեմա 5՝** Արևմտահայերենի և արևելահայերենի շարահյուսական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B30. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-1 (4 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (60 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի պատմությունը, լեզվի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հայերենի հնչյունական, բառային, համակարգերի պատմական զարգացումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հնչյունական և բառապաշարային համակարգերի պատմական զարգացումը.
2. կհասկանա ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը և պատմական զարգացումը.
3. կկարողանա պարզաբանել լեզվական շատ իրողությունների ծագումնաբանությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայոց լեզվի պատմությունը՝ որպես գիտաճյուղ. լեզվի ուսումնասիրության աղբյուրները: **Թեմա 2՝** Հայերենի պատմական զարգացման փուլերի ստորաբաժանումը և դրա վերաբերյալ կարծիքները: **Թեմա 3՝** Լեզուների ծագման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 4՝** Հայերենի հնչյունական համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 5՝** Հայերենի բառապաշարի պատմական զարգացումը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B05. «ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)
Կիսամյակը՝ 6-րդ, հանրագումարային քննություն
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ մատենագիտության նմուշներին և նրանց առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ մատենագիտության ընդհանուր զարգացումը.
2. կհասկանա հայ մատենագիտության յուրահատկությունները.
3. կկարողանա կատարել մատենագիտական ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ մատենագիտության մասին առաջին տեղեկությունները: Հայ մատենագիտությունը V-VIII դարերում: **Թեմա 2՝** Հայ մատենագիտությունը X-XVIII: **Թեմա 3՝** Հայ մատենագիտությունը XIX-XXI դարերում: **Թեմա 4՝** Հայ պարբերական մամուլի սկզբնավորումն ու մատենագիտությունը: **Թեմա 5՝** Հայ գրատպություն և հայ տպագրական մատենագիտություն:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/Բ05. «ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)
Կիսամյակ՝ 6-րդ, հանրագումարային քննություն
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայկական տաղաչափության առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տաղաչափական հիմնական օրինաչափությունները.
2. կհասկանա հայկական տաղաչափության առանձնահատկությունները.
3. կկարողանա կատարել տաղաչափական համակարգերի ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տաղաչափական համակարգերի տիպերը: **Թեմա 2՝** Տաղաչափության դերը չափածո ստեղծագործություններում: **Թեմա 3՝** Հայկական տաղաչափության ակունքները. գողթան երգերի տաղաչափական առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Հայ քնարերգության տաղաչափական համակարգերը: **Թեմա 5՝** Տաղաչափական համակարգերի լեզվական հիմքը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/Յ06. «ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ»

(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերին և նրանց հետագա զարգացմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի առանձնահատկությունները.
2. կհասկանա միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի կազմության օրինաչափությունները.
3. կկարողանա կատարել միջին հայերենի հոլովման և համակարգերի վերաբերյալ քերականական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր ակնարկ միջին հայերենի քերականության վերաբերյալ:

Թեմա 2՝ Գրաբարի և միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները: **Թեմա 3՝** Միջին հայերենի հոլովները: **Թեմա 4՝** Միջին հայերենի հոլովումները: **Թեմա 5՝** Բայը միջին հայերենում: Միջին հայերենի դերբայները, կրավորականի կազմությունը միջին հայերենում: **Թեմա 6՝** Միջին հայերենի բայական եղանակները և նրանց ժամանակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/Բ06. «ՌՈՒՄ-ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 6-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ռուս-հայերեն թարգմանության լեզվառճական խնդիրներին և դրանց հաղթահարման միջոցներին ու եղանակներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռուս-հայերեն թարգմանության ընթացքում ծագող խնդիրները.
2. կհասկանա դրանց հաղթահարման միջոցներն ու եղանակները.
3. կկարողանա կատարել ռուս-հայերեն թարգմանություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թարգմանության գործընթացի առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Ռուս-հայերեն թարգմանության հնչյունաբանական և վանկաշեշտային խնդիրներ: **Թեմա 3՝** Թարգմանության բառապաշարային խնդիրներ: **Թեմա 4՝** Թարգմանության ձևաբանական խնդիրներ: **Թեմա 5՝** Թարգմանության շարահյուսական խնդիրներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/Յ37. «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (10 կրեդիտ)

Շաբաթական՝ 8 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7–րդ, եզրափակիչ գնահատմամբ
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նորագույն շրջանի հայ գրականության կարևոր երկերը, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ,
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական-գեղարվեստական առանձնահատկությունները,
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ հասարակական-քաղաքական կյանքը 20-րդ դարի սկզբին. պատմական իրադարձությունները, գրական-գեղարվեստական ուղղությունները, հոսանքները, նորագույն գրականության սկզբնավորումն ու առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Ե. Չարենց: **Թեմա 3՝** Ակսել Բակունց: **Թեմա 4՝** Դ. Դեմիրճյան: **Թեմա 5՝** Ս. Զորյան: **Թեմա 6՝** Հայ նորագույն գրականությունը 20-րդ դարի 30-ական թվականներից հետո: Գ. Մահարի, Վ. Թոթովենց, Մ. Արմեն: **Թեմա 7՝** Պատերազմական շրջանի գրականության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 8՝** Ն. Զարյան, Հ. Շիրազ, Գ. Սարյան: **Թեմա 9՝** Սփյուռքահայ գրականության սկզբնավորումը: Գաղթօջախները և գրական ուժերը: **Թեմա 10՝** Կարոտի գրականություն. Համաստեղ և Հ. Մնձուրի: **Թեմա 11՝** Նահանջի թեման. Շ. Շահնուր, Կ. Զարյան: **Թեմա 12՝** Սփյուռքահայ գրականությունը հետպատերազմյան տարիներին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/B32. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» -2(4 կրեդիտ)

Շաբաթական՝ 3 ժամ (45 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի պատմությունը, լեզվի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հայերենի հնչյունական, ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1.կիմանա հայերենի ծագման վերաբերյալ եղած տեսությունները, ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացումը,
- 2.կհասկանա ժամանակակից հայերենի լեզվական տարբեր իրողությունների ծագումը և պատմական զարգացումը,
- 3.կկարողանա պարզաբանել ձևաբանական և շարահյուսական շատ իրողությունների ծագումնաբանությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայերենի հնչյունական համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 2՝** Հայերենի ձևաբանական համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 3՝** Հոլովման համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 4՝** Բայ. հայերենի դերբայները և նրանց պատմական զարգացումը: **Թեմա 5՝** Խոնարհման համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 6՝** Շարահյուսական համակարգի պատմական զարգացումը. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնություն. կառավարում /խնդրառություն/. առողություն. շարադասություն: **Թեմա 7՝** Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ. պարզ և բարդ նախադասություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B33. «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (22 ժամ դասախոսություն, 38 ժամ գործնական պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի ոճաբանական համակարգը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայոց լեզվի ոճական համակարգի առանձնահատկությունները, իրադրական ու գործառական ոճերը իրենց ենթատեսաներով.
2. կհասկանա հնչյունական, բառային և քերականական իրողությունների ոճական կիրառությունների առանձնահատկությունները.
3. կկարողանա կատարել ոճաբանական վերլուծություններ, բանավոր և գրավոր խոսքում կիրառել ոճական տարբեր հնարներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ոճագիտությունը որպես գիտաճյուղ. ոճույթի ըմբռնումը: **Թեմա 2՝** Իրադրական և գործառական ոճեր. նրանց տեսակները: **Թեմա 3՝** Հնչյունաբանական ոճագիտություն: **Թեմա 4՝** Բառագիտական ոճագիտություն: **Թեմա 5՝** Ձևաբանական ոճագիտություն: **Թեմա 6՝** Շարահյուսական ոճագիտություն: **Թեմա 7** Լեզվի պատկերավորման միջոցները: **Թեմա 8՝** Լեզվի արտահայտչական միջոցները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B34. «ՀԱՅ ԳՐԱՔՆԱՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 5 ժամ (55 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 7-րդ, եզրափակիչ գնահատմամբ

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրաքննադատական մտքի պատմությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայ գրաքննադատության պատմությունը, զարգացման հիմնական ուղղությունները,
2. կհասկանա գրաքննադատության առանձնահատկությունները, դերը և նպատակը,
3. կկարողանա կատարել գրաքննադատական վերլուծություններ և ուսումնասիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քննադատության առաջացումը հնագույն ժամանակներում. անջատումը գրականությունից, փիլիսոփայությունից և մյուս գիտություններից: **Թեմա 2՝** Հայ գրաքննադատության ձևավորումը, նախնական միաձուլվածությունը պատ-

մագրությանը: **Թեմա 3**՝ Մ. Խորենացի, Հ. Մանդակունի: **Թեմա 4**՝ Գ. Նարեկացի, Հովի. Սարկավազ Իմաստասեր: **Թեմա 5**՝ Լուսավորական քննադատություն. Մ. Թադիաղյան, Խ. Աբովյան, Գ. Ախվերդյան, Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան: **Թեմա 6**՝ Գրաքննադատությունը 1870-80-ական թթ.. Բաֆֆի, Հ. Պարոնյան, Գր. Արծրունի: **Թեմա 7**՝ Ստ. Պալասանյան, Ղ. Աղայան, Ա. Արփիարյան, Գ. Զոհրապ: **Թեմա 8**՝ Գրաքննադատությունը 19-րդ դարավերջին և 20-րդ դարակզբին. Ալ. Շիրվանզադե, Լ. Մանվելյան, Վրթ. Փափագյան, Մ. Մեծարենց, Ա. Հարությունյան, Ա. Չոպանյան: **Թեմա 9**՝ Լեո, Հ. Թումանյան, Ա. Տերտերյան, Դ. Վարուժան, Վ. Տերյան, Ստ. Շահումյան: **Թեմա 10**՝ Արդի հայ գրաքննադատությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0302/Բ07. «ՀԱՅՈՑ ՏԵՂԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայոց տեղանունների ստուգաբանական և բառակազմական քննությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հայոց տեղանունների բառակազմական և ստուգաբանական օրինաչափությունները.
2. կհասկանա տեղանունների ստեղծման օրինաչափությունները.
3. կկարողանա կատարել հայոց տեղանունների բառակազմական և ստուգաբանական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ընդհանուր ակնարկ տեղանվանագիտության մասին. Տեղանվանագիտության կապն այլ գիտաճյուղերին: **Թեմա 2**՝ Տեղանունների ուսումնասիրման լեզվական տեսանկյունը: **Թեմա 3**՝ Հայոց տեղանունների դասակարգումներն ու ուսումնասիրման եղանակները: **Թեմա 4**՝ Գործնական տեղանվանագիտություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/Բ07. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

(2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, առանց եզրափակիչ գնահատման
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ժամանակակից
հայերենի բառային նորաբանություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի նորաբանությունների հատկանիշները.
2. կհասկանա բառապաշարի փոփոխության և նոր բառերի ստեղծման
ընթացքը.
3. կկարողանա կատարել գիտական ուսումնասիրությունների վերլուծու-
թյուններ և մեկնաբանել նորաբանությունների ստեղծման բառակազմա-
կան օրինաչափությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բառապաշարի փոփոխությունները: **Թեմա 2՝** Արդի հայերենի նորաբա-
նությունները: **Թեմա 3՝** Նորաբանությունների բառակազմական կաղապարները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է
առավելագույնը 10 միավոր:

0302/Բ08. «ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քննադատության
տեսության հիմունքներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա քննադատության տեսության հիմնախնդիրները.
2. կհասկանա քննադատության տեղը և դերը գրականագիտության համա-
կարգում.
3. կկարողանա կատարել քննադատական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քննադատությունն իբրև հասարակության հոգևոր դաստիարակության
և գեղագիտական իդեալի արմատավորման միջոց, քննադատության ծագումն ու
զարգացման նախադրյալները: **Թեմա 2՝** Քննադատության տեղ գրականա-
գիտության համակարգում: **Թեմա 3՝** Քննադատության մեթոդները: **Թեմա 4՝**
Քննադատության ժանրերը պատմական զարգացման ընթացքում: **Թեմա 5՝** Գե-
ղարվեստական երկի գնահատության չափանիշները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/F08. «20-ԸԴ ԴԱՐԱՄԿԶԲԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (30 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 7-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 20-րդ դարասկզբի պատմական դեպքերի արտացոլմանը հայ նորագույն գրականության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 20-րդ դարասկզբի իրադարձությունների և գեղարվեստական գրականության կապը.
2. կհասկանա գրականության ազգապահպան գոյության անհրաժեշտությունը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և զուգահեռներ տանել պատմական իրադարձությունների և գեղարվեստական երկերի միջև:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական ժամանակաշրջանը. ցեղասպանության հանգամանքները և ընթացքը. ազգային-ազատագրական շարժումը: **Թեմա 2՝** 1930-ական թթ. Հասարակական-գաղափարական մտայնությունը. հակասությունները և դժվարությունները: **Թեմա 3՝** Ինքնակենսագրական վեպը՝ որպես ապրվածի արտահայտություն: **Թեմա 4՝** Անհատի պաշտամունքի տարիների սահմանափակումները, կաշկանդումները և դաժանությունները: **Թեմա 5՝** Հետագա անդրադարձները պատմական դեպքերին: Ցեղասպանության և պատմական հարակից դեպքերի արտացոլումը ժամանակակից գրականության մեջ:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B36. «ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 կրեդիտ)

Շաբաթական՝ 6 ժամ (40 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար պարապմունքներ)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել արդի հայ գրականությունը (1960–2000 թթ.), գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա արդի հայ գրականության ժանրերը, զարգացման հիմնական ուղի-
ությունները, պատմական դեպքերի արտացոլումը գրականության մեջ.
2. կհասկանա գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնա-
հատկությունները, գրական երկերի պատմական–հասարակական դերը.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ և ուսումնա-
սիրություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հետպատերազմյան շրջանի առաջին տասնամյակի հայ գրականու-
թյունը: Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո գրական նոր
շարժումը: **Թեմա 2՝** 1960-80-ականների ընդհանուր բնութագիրը. Հ. Քոչար, Ս.
Խանգադյան, Ս. Սարգսյան, Հ. Մաթևոսյան, Վ. Պետրոսյան, Խ. Դաշտենց, Ս.
Գալշոյան: **Թեմա 3՝** 1960-80-ականների հայ պոեզիայի ընդհանուր բնութագիրը.
Պ. Սևակ, Ս. Կապուտիկյան: Հ. Սահյան, Վ. Դավթյան: **Թեմա 4՝** Անկախության
շրջանի հայ գրականության առանձնահատկությունները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից,
որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0304/B35. «ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» (3 կրեդիտ)

Շաբաթական՝ 4 ժամ (32 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8–րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել տրամաբանության հիմնական
հասկացությունները, օրենքները և սկզբունքները: Ուսանողը ձեռք է բերում հըմ-
տություններ, որոնք նպաստում են մասնագիտական առարկաների տեսություն-
ների հիմնական հասկացությունների յուրացմանը, գիտահետազոտական աշ-
խատանքի կատարմանը և օգնում ինքնուրույն անալիտիկ մտածողությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենք-
ները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանո-
նավորությունը ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների
ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը.
2. կհասկանա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործա-
ռւյթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնա-
սիրությունների ժամանակ.
3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով
բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետա-
զոտությունների արդյունավետությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տրամաբանության առարկան և նշանակությունը: **Թեմա 2**՝ Լեզվի տրամաբանական վերլուծությունը: **Թեմա 3**՝ Հասկացությունը որպես տրամաբանական ձև և հասկացության ընդհանուր բնութագրությունը: **Թեմա 4**՝ Դատողություն: **Թեմա 5**՝ Մտածողության ձևական տրամաբանական հիմնական օրենքները: **Թեմա 6**՝ Դեդուկտիվ մտահանգում: Մտահանգման ընդհանուր բնութագիրը: **Թեմա 7**՝ Ինդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 8**՝ Փաստարկման տրամաբանական հիմունքներ: **Թեմա 9**՝ Տրամաբանական սխալներ:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/Բ09. «ԼԵԶՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (16 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել լեզվական տարբեր վերլուծությունների առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա լեզվական վերլուծություններ կատարելու առանձնահատկությունները.
2. կհասկանա վերլուծություններ կատարելու միջոցներն ու եղանակները.
3. կկարողանա կատարել հնչյունական, բառային և քերականական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզվական մակարդակներ: **Թեմա 2**՝ Հնչյունական վերլուծություններ: **Թեմա 3**՝ Բառապաշարի վերլուծություն: **Թեմա 4**՝ Ձևաբանական վերլուծություն: **Թեմա 5**՝ Շարահյուսական վերլուծություն:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/Բ09. «ԼԵԶՎԱՆԺԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (16 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նշանագիտական կարևորագույն ըմբռնումներին և տերմիններին, տալ գիտելիքներ նշանագիտական վերլուծության սկզբունքների մասին, մշակել նշանագիտական մոտեցումը լեզվի նկատմամբ կիրառելու կարողություններ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նշանագիտության հիմնական հասկացությունները և դրանց նշանակող տերմինները.
2. կհասկանա նշանի էությունը և լեզվի նշանային բնույթը.
3. կկարողանա զուգահեռներ անցկացնել լեզվաբանական և նշանագիտական հասկացությունների միջև:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Լեզուն՝ որպես նշանային համակարգ: Լեզվի և նշանային այլ համակարգերի նմանություններն ու տարբերությունները: **Թեմա 2՝** Լեզվի նկատմամբ նշանագիտական մոտեցում կիրառելու հնարավորությունները, սահմանները և սկզբունքները: **Թեմա 3՝** Լեզվական նշանների համապատասխանությունները նշանագիտության մեջ տարբերակվող նշանների տեսակներին: **Թեմա 4՝** Կառուցվածքային տարբեր մակարդակների լեզվական միավորների բնութագրումը նշանագիտական հայեցակետով: **Թեմա 5՝** Ավանդական լեզվաբանություն և լեզվանշանագիտություն:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/Բ10. «ՖՐԱՆՍԱԶԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1920-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (16 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 1920-60-ական թթ. ֆրանսահայ գրականության նշանավոր դեմքերի ստեղծագործություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա 1920-60-ական թթ. ֆրանսահայ գրականության նշանավոր երկերը.
2. կհասկանա 1920-60-ական թթ. ֆրանսահայ գրականության զարգացման առանձնահատկությունները.
3. կկարողանա կատարել գրականագիտական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ֆրանսահայ գաղթօջախի կազմավորումը, քաղաքական, տնտեսական և հոգևոր կառուցվածքը: **Թեմա 2՝** Գաղթօջախի զարգացման միտումները 1920-60-ական թթ.: **Թեմա 3՝** Ֆրանսահայ գրական մամուլը: **Թեմա 4՝** 1920-60-ական թթ. ֆրանսահայ բանաստեղծությունը: **Թեմա 5՝** 1920-60-ական թթ. ֆրանսահայ արձակը. 1970-ական թթ. ֆրանսահայ գրական նոր սերունդը:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/F10. «ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՊՈԵՄԸ» (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (16 ժամ դասախոսություն)

Կիսամյակը՝ 8-րդ, հանրագումարային քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել նորագույն շրջանի հայ պոեմի կարևոր նմուշներին, բացահայտել նրանց առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա նորագույն շրջանի հայ պոեմի առանձնահատկությունները.

2. կհասկանա նորագույն շրջանի հայ պոեմի կարևոր նմուշների գաղափարական շերտերը.

3. կկարողանա կատարել նորագույն շրջանի հայ գրականության պոեմների գրականագիտական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պոեմի ժանրի համառոտ բնութագիրը: **Թեմա 2՝** Պոեմի ժանրը հայ դասական գրականության մեջ: **Թեմա 3՝** Հայ պոեմը 1940-50-ական թթ.: **Թեմա 4՝** Պոեմի ժանրի վերելքը 1960-ական թթ. **Թեմա 5՝** Հայ պոեմը 1970-80-ական թթ.: Ժամանակակից զարգացումները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

4.3. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր

0302/B01. Մայրենի լեզու -1./3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն և 15 ժամ գործնական պարապմունք), 1-ին կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց
Նպատակը.

Ներկայացնել ժամանակակից հայերենի ծագումը, հնչյունական համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, լեզվում կատարվող հնչյունական հիմնական գործընթացները, ուղղագրական և ուղղախոսական կանոնները և սովորեցնել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի հնչյունական համակարգի հատկանիշները,

2. կկարողանա դասակարգել և ճիշտ արտաբերել հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, մեկ լեզվից մի այլ լեզվով կրկնօրինակել հնչյունական խոսքը,

3. կյուրացնի հայերենի ուղղագրության և ուղղախոսության կանոնները՝ գրագետ և անսխալ կառուցելով գրավոր և բանավոր խոսքը, կվերացնի արտաբերական-արտասանական թերությունները:

Բովանդակությունը.

Ներածություն. Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանության ուսումնասիրության առարկան: **Թեմա 1՝** Արտասանվածքի վերլուծություն: Վանկը, շեշտը հայերենում: **Թեմա 2՝** Հնչյուններ. դասակարգումը: **Թեմա 3՝** Հնչյունափոխություն. տեսակները: **Թեմա 4՝** Ուղղախոսություն: **Թեմա 5՝** Ուղղագրություն

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B02. Մանկավարժական գործունեության հիմունքներ /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն և 6 ժամ սեմինար պարապմունք), 1-ին կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Նպաստել ապագա մանկավարժի ինչպես ընդհանուր, այնպես էլ մանկավարժական աշխարհացքի ձևավորմանը, ապահովել մանկավարժին անհրաժեշտ տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը:

Կրթական արդյունքները.

գիտենա՝ Մանկավարժական գործունեության հիմնական մնութագրերը, հիմնական առաքելությունը, ուսուցչի մասնագիտական որակները, գործիմացության զարգացման ճանապարհները:

կարողանա՝ Օգտվել մասնագիտական զարգացման տեխնոլոգիաներից և ինքնազարգացման եղանակներից, ապահովել մասնագիտական աճը, լուծել

մանկավարժական կոնֆլիկտները:

սիրապետի՝ Մանկավարժական գործունեության հիմնական կոմպոնենտներին, կարողություններին և հմտություններին, մանկավարժական էթիկային, համագործակցության և մանկավարժական ներգործության հիմնական ձևերին:

Բովանդակություն.

Ուսուցչի մասնագիտության ներածություն: **Թեմա 1՝** Մանկավարժական գործունեության ծագումն ու զարգացումը: **Թեմա 2՝** Մանկավարժական գործունեության տեսակները: **Թեմա 3՝** Մասնագիտական գործունեության բնութագրերը **Թեմա 4՝** Մանկավարժական հիմնական գործունեությունը մարդու կենսագործունեության համակարգում **Թեմա 5՝** Ուսուցչի մասնագիտական գործի մացություն, զարգացման էությունը, համակարգը, լուսանկարությունը: **Թեմա 6՝** Մանկավարժական մասնագիտությունների զարգացման հեռանկարները նոր հասարակական, տնտեսական տեղեկատվական պայմաններում **Թեմա 7՝** Մանկավարժական գաղափարների, Մանկավարժական հաղորդակցման էությունը **Թեմա 8** Ուսուցչի մասնագիտական որակները, դրանց զարգացման և կատարելագործման ուղիները **Թեմա 9՝** Ընդհանուր և մանկավարժական կուլտուրա **Թեմա 10՝** Վարպետությունն ու տեխնիկան ուսուցչի մասնագիտության մեջ **Թեմա 11՝** Կրթությունը որպես հասարակության տնտեսական, սոցիալական, հոգևոր զարգացման արտացոլում **Թեմա 12՝** Մանկավարժական կրթության և կրթության համակարգի մասին **Թեմա 13՝** Մանկավարժական կրթության իրականացման եղանակները: **Թեմա 14՝** Ուսուցչի մասնագիտական կայացում **Թեմա 15՝** Մասնագիտական կայացման հակասություններն ու ձգնաժամերը **Թեմա 16՝** Մանկավարժի ինքնակրթության աղյուսակները **Թեմա 17՝** Հասկացություն անձնային մասնագիտական հեռանկարի մասին **Թեմա 18՝** Մանկավարժի մասնագիտական աճը

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0303/B03 Ընդհանուր հոգեբանություն /4 կրեդիտ/

Շաբաթական 4 ժամ (45 ժամ դասախոսություն և 15 ժամ գործնական պարապմունք), 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին:

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել ընկալման, ըմբռնման առանձնահատկություններին, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկություններին, անձի

հուզականային կողմին, անձի հոգեբանական անհատական առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտից հետո ուսանողը.

1. կիմանա ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները,

2. կտարբերակի հազեկանի ակտիվության մակարդակները,

3. կծանոթանա հոգեկան պարզագույն իմացական գործընթացներին և նրանց առանձնահատ-կություններին:

4. կծանոթանա հոգեկան իմացական բարձրագույն գործընթացներին և նրանց առանձնա-հատկություններին,

5. պատկերացում կունենա անձի հուզականային ոլորտի մասին,

6. կտարբերակի անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները,

7. կզարգացնի սեփական ընդունակությունները, կարողությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2՝** Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: **Թեմա 3՝** Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: **Թեմա 4՝** Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 5՝** Հոգեկանի և գիտակցության զարգացումը: **Թեմա 6՝** Անձի հոգե-բանական բնութագիրը: **Թեմա 7՝** Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: **Թեմա 8՝** Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: **Թեմա 9՝** Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: **Թեմա 10՝** Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: **Թեմա 11՝** Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: **Թեմա 12՝** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 13՝** Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: **Թեմա 14՝** Անձի հուզականային կողմը: **Թեմա 15՝** Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0105/B04 Մաթեմատիկա-C /Մաթեմատիկայի ներածություն՝ բազմությունների տեսության տարրերով/-1 /6 կրեդիտ/

Շաբաթական 6 ժամ (15 ժամ դասախոսություն և 75 ժամ գործնական

պարապմունք), 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին բազմությունների տեսության տարրերի հետ, նրանց կատարվող գործողություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բազմության, ենթաբազմության սահմանումները,
2. կկարողանա կատարել գործողություններ բազմությունների հետ,
3. կտիրապետի բազմությունների դեկարտյան արտադրյալին, նրանց միջև առնչությունների հատկություններին:

Բովանդակությունը.

Բազմությունների տեսության տարրեր

Թեմա 1 Բազմություն հասկացությունը: Բազմության տարր. պատկանում է առնչությունը: Վերջավոր, անվերջ բազմությունները (ինտուիտիվ մոտեցում):

Թեմա 2 Բազմության տրմանձևեր՝ թվարկումով, բնութագրիչ հատկությամբ: Բազմությունների հավասարությունը: Ենթաբազմություն է ե առնչությունը. ենթաբազմության տրումը բնութագրիչ հատկությամբ: Դատարկ բազմություն. դատարկ բազմությունների հավասարությունը, դատարկ բազմության միակությունը: Էյլերի-Վենի գծապատկերները: **Թեմա 3** Բազմությունների՝ հատում, միավորում, տարբերություն: Համապարփակ բազմություն, բազմության լրացում: Երկու, երեք վերջավոր բազմությունների միավորման տարրերի քանակը: **Թեմա 4** Բազմությունների հանրահաշիվ.

$$A \cup A = A, \quad A \cap A = A, \quad A \cup B = B \cup A,$$

$$A \cap B = B \cap A, \quad A \cup (B \cap C) = (A \cup B) \cap C,$$

$$A \cap (B \cap C) = (A \cap B) \cap C,$$

$$A \cap (B \cup C) = (A \cap B) \cup (A \cap C),$$

$$A \cup (B \cap C) = (A \cup B) \cap (A \cup C),$$

$$A \setminus B = A \cap \text{հավասարություններից}$$

յուրաքանչյուրի ապացուցումը: Այդ հատկությունների մեկնաբանումը Էյլերի-Վենի գծապատկերներով: **Թեմա 5**՝ Առնչություններ. Կարգավորյալ n -յակ. բազմությունների դեկարտյան արտադրյալ. դրա հատկություններ.

$$A \times (B \cup C) = (A \times B) \cup (A \times C),$$

$$A \times (B \cap C) = (A \times B) \cap (A \times C),$$

$$A \times (B \setminus C) = (A \times B) \setminus (A \times C)$$

հավասարություններից յուրաքանչյուրի ապացուցումը: Վերջավոր բազմությունների դեկարտյան արտադրյալի տարրերի քանակը: **Թեմա 6**՝ (Երկտեղ) առնչություններ երկու բազմությունների միջև. առնչություն բազմության վրա: Առնչության՝ որոշման տիրույթ, արժեքների տիրույթ: Առնչության տրման ձևեր, առնչության գրաֆ, գրաֆիկ: Գործողություններ առնչությունների նկատմամբ՝ միավորում, հատում, տարբերություն, լրացում: Բազմատեղ առնչություն (օրինակներ): **Թեմա 7**՝ Առնչության հակադարձ, երկու

առնչությունների համադրությո՞ւթ, Առնչությունների հատկություններ (տեսակներ)՝ անդրադարձելի, ոչանդրադարձելի, հակաանդրադարձելի, համաչափելի, ոչհամաչափելի, հակահամաչափելի, փոխանցելի. միավորման, հատման գործողություններ դրանցից յուրաքանչյուրի հետ. դրանցից յուրաքանչյուրի գրաֆի և գրաֆիկի առանձնահատկությունները:**Թեմա 8՝** Համարժեքության առնչություն. դրա գրաֆի և գրաֆիկի առանձնահատկությունները Բազմության տրոհումը ըստ մի քանի հատկանիշների: Բազմության տրոհումը՝ ըստ համարժեքության առնչության (անհրաժեշտ և բավարար պայմանի ապացուցումը):**Թեմա 9՝** Կարգի առնչություն (խիստ, ոչխիստ),դրագրաֆի և գրաֆիկի առանձնահատկությունները: Մասնակի կարգավորված բազմություն, գծորեն կարգավորված բազմություն. դրանցից յուրաքանչյուրի հապավված գրաֆը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0001/B05 Առաջին բուժօգնություն և երեխայի առողջության պահպանման հիմունքներ/3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (25 ժամ դասախոսություն և 20 ժամ գործնական պարապմունք), 1-ին կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին տալ գիտելիքներ հիվանդներին և տուժվածներին գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար , ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:

Կրթական արդյունքները.

•Կատարել վիրակապում, բեկակալի տեղադրում Կատարել ստամոքսի լվացում,հոգնա Ջերմաչափում, պուլսի որոշում, Ձ/ ճ չափում Այրվածքի մակերեսի և խորության որոշում

•Առաջին օգնության կազմակերպում ցրտահարված տուժածների մոտ Տուժածի տեղափոխում կատարել արյունահոսության ժամանակավոր դադարեցում

Բովանդակությունը

Թեմա 1՝ Հասկացություն հիվանդության մասին :Տուժածի քննության մեթոդները:**Թեմա 2՝** Վերակենդանացման միջոցառումներ: **Թեմա 3՝**

Թունավորումներ: **Թեմա 4՝** Վնասվածքներ : **Թեմա 5՝** Ջերմային խանգարումներ: **Թեմա 6՝** Արյունահոսություններ: **Թեմա 7՝** Վիրակապություններ: Վիրակապություններ: **Թեմա 8՝** ռոդ ապրելակերպի կանոնները: **Թեմա 9՝** Ինֆեկցիոն հիվանդություններ: **Թեմա 10՝** Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար, ուսանողների մոտ զարգացնել բժշկահիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

0303/B06 Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա (2 կրեդիտ)

Շաբաթական՝ 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 6 ժամ գործնական)

Կիսամյակը՝ 1-ին, առանց եզրափակիչ գնահատման

Նպատակը.

Ուսանողների մոտ ձևավորել պատկերացումներ մանկական օրգանիզմի զարգացման ֆիզիոլոգիական առանձնահատկությունների և օրինաչափությունների, օնտոգենեզի տարիքային տարբեր փուլերում կառուցվածքի և ֆունկցիաների փոխհարաբերությունների, առողջության պահպանման ժամանակակից մոտեցումների մասին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը.

կիմանա՝

- զարգացող օրգանիզմի տարիքային առանձնահատկությունները ,
- օնտոգենեզի տարբեր փուլերում աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունները,
- մանկական օրգանիզմի ձևավորման մեջ կարգավորիչ համակարգերի դերը,
- մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների առանձնահատկությունները,
- մարդու անհատական զարգացման տարբեր փուլերում հոգեֆիզիոլոգիական և անհատական տիպաբանական առանձնահատկությունները և դրանց հնարավոր փոփոխությունները,
- ուսումնա-դաստիարակչական գործընթացի, օրվա ռեժիմի կազմակերպումը,

կկարողանա՝

• կիրառել ստացած գիտելիքները անատոմիայի, ֆիզիոլոգիայի և երեխայի հիգիենայի վերաբերյալ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ,

•կատարել սոցիալական մանկավարժի արհեստավարժ գործունեության հիմնական տեսակները, լուծել հանրակրթական հաստատություններում տիպային արհեստավարժ խնդիրները,

•մանկավարժական ու ուսումնադատիարակչական խնդիրների լուծման ժամանակ կիրառել տարբերակված մոտեցում՝ կախված երեխաների օրգանիզմի անհատական առանձնահատկություններից, նրանց դպրոցական հասունության աստիճանից, առկա շեղումներից՝ երեխայի զարգացման ընթացքում,

կտիրապետի՝

- ժամանակակից տեղեկատվական կրթական տեխնոլոգիաները,
- հմտությունների և սոցիալ- մանկավարժական, ուսումնադատիարակչական, զարգացնող, մշակութա-լուսավորչական, գիտա-մեթոդական, կազմակերպչական-կառավարչական գործունեության մեթոդների:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկական օրգանիզմի աճի և զարգացման օրինաչափությունները: Տարիքային փուլեր: Օրացուցային և կենսաբանական տարիքը, նրանց հարաբերակցությունը օնտոգենեզի տարբեր փուլերում՝ կենսաբանական տարիքի սահմանման չափանիշները: Երեխայի զարգացման կրիտիկական շրջանները: **Թեմա 2՝** Ժառանգականությունը և միջավայրը, նրանց ազդեցությունը մանկական օրգանիզմի զարգացման վրա: **Թեմա 3՝** Կարգավորիչ համակարգերի զարգացում /հումորալ և նյարդային/: **Թեմա 4՝** Տարբեր տարիքային փուլերում ընդերային, շարժողական և զգայական համակարգերի ֆունկցիոնալ փոփոխություն: **Թեմա 5՝** Ջերմակարգավորման և էներգիայի փոխանակման տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 6՝** Հենաշարժիչ ապարատի օնտոգենետիկական օրինաչափությունները: **Թեմա 7՝** Ուղեղի հասունացման անատոմա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 8՝** Երեխայի վարքագծի հոգեֆիզիոլոգիական ասպեկտները, հաղորդակցման վարքագծի ձևավորումը: Խոսք: **Թեմա 9՝** Երեխայի անհատական տիպաբանական առանձնահատկությունները: **Թեմա 10՝** Երեխայի ֆունկցիոնալ զարգացման մակարդակի ամբողջական ախտորոշում: Պատրաստականություն ուսուցման նկատմամբ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0105/B07 Մաթեմատիկա-B/Մաթեմատիկայի ներածություն՝ բազմությունների տեսության տարրերով/-2 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (15 ժամ դասախոսություն և 45 ժամ գործնական պարապմունք), 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին ֆունկցիաների, նրանց հետ կատարվող գործողություններին և ասույթների հաշվին:

Կրթական արդյունքները. Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ֆունկցիայի գաղափարը, ասույթ հասկացությունը, նրանց տեսակները,

2. կկարողանա կատարել գործողություններ թվային ֆունկցիաների, ասույթների հետ, գծել որոշ ֆունկցիաների գրաֆիկներ,

3. կտիրապետի ֆունկցիայի տրման եղանակներին, արտածման կանոններին:

Բովանդակությունը.

Ֆունկցիոնալ առնչություն* ֆունկցիա

Թեմա 1 Ֆունկցիան՝ որպես առնչություն, որպես համապատասխանություն, որպես երկու

փոփոխական մեծությունների միջև կապ: Ֆունկցիայի՝ որոշման տիրույթ,

արժեքների տիրույթ: **Թեմա 2** Արտապատկերումներ (պատկեր նախապատկեր հասկացությունները), դրանց տեսակներ՝ վրադրում, տարադրում, միջադրում,

փոխմիարժեք: Հավասարագոր բազմություններ, վերջավոր, անվերջ բազմություններ: **Թեմա 3** Թվային ֆունկցիաներ: Գործողություններ թվային

ֆունկցիաների նկատմամբ՝ գումար (տարբերություն), արտադրյալ (քանորդ), համադրույթ, հակադարձ. հակադարձի գոյության անհրաժեշտ և բավարար

պայման: **Թեմա 4** Թվային ֆունկցիաների տեսակներ՝ զույգ, կենտ, պարբերական, աճող, նվազող մոնոտոն: **Թեմա 5** Ուղիղ համեմատականություն,

հակադարձ համեմատականություն. դրանցից յուրաքանչյուրը ներկայացնող ֆունկցիայի հատկությունները, գրաֆիկը: Քառակուսային ֆունկցիա, դրա

հատկությունները, գրաֆիկը: Մաթեմատիկական տրամաբանության տարրեր ա) Ասույթների հաշիվ **Թեմա 6** Ասույթ հասկացությունը. պարզ, բարդ ասույթներ:

Հիմնական տրամաբանական կապեր. դրանցով արտահայտող բարդ ասույթների ճշմարտային արժեքների «հիմնավորումը»: **Թեմա 7** Ասույթի ժխտում:

Ասույթների կոնուկցիա, դիզյունկցիա իմպլիկացիա, էկվիվալենցիա դրանցից յուրաքանչյուրի սահմանումը: Ասույթների նկատմամբ կատարվող

գործողությունների հիմնական հատկությունները (ապացուցումը): **Թեմա 8** Ասույթների հաշվի բանաձևեր, նույնաբար ճշմարիտ հիմնական բանաձևեր:

Ասույթների հաշվի բանաձևերի նույնարժեքությունը: Թեորեմ նույնարժեք բանաձևերի էկվիվալենցիայի համանշանակության մասին: Տեղադրման կանոնը:

Նույնարժեք հիմնական բանաձևեր և տաֆտալոգիաներ: **Թեմա 9** Տրամաբանական հետևության առնչությունը ասույթների բազմության վրա:

Թեորեմ երկու բանաձևերի տրամաբանական հետևության և դրանց իմպլիկացիայի մասին: Թեորեմներ տրամաբանական հետևության մասին.

ա) եթե $E_1, E_2, E_3, \dots, E_n \models E$, ապա $(E_1 \wedge E_2 \wedge E_3 \wedge \dots \wedge E_n) \models E$:

բ) եթե $E_1, E_2, E_3, \dots, E_n \models E$, ապա $(E_1, E_2, E_3, \dots, E_n - 1) \models (E_n \rightarrow E)$:

Թեմա 10 Արտածման կանոններ՝ տեղադրման եզրակացման. օժանդակ արտածում: Դեդուկցիա, արտածման կանոններ սիլոգիզմի, նախադրյալի

տեղափոխման (միացման, անջատման): Արտածման մի քանի պարզագույն կանոններ. հաստատող մոդուս, բացատող մոդուս, բացառող – հաստատող

մոդուս, հաստատող – բացառող մոդուս, սիլոգիզմի կանոնը. կոնտրապոզիայի

կանոնը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B08 Մանկավարժության տեսություն /4 կրեդիտ/

Շաբաթական 4 ժամ (45 ժամ դասախոսություն և 15 ժամ սեմինար պարապմունք), 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Ներկայացնել առարկայի օրինաչափությունների հիմնադրույթների օրինաչափությանի, հիմնադրույթների մեթոդաբանությունը պատմական մանկավարժական և գիտատեսական աղբյուրները: Յուրացրած գիտելիքները կիրառել հետազոտական և պրակտիկ գործունեության մեջ: Մասնագիտական գիտական և պրակտիկ գործունեության կազմակերպման մեթոդներին, գիտելիքներին, կարողանա դրանք հարմարեցնել արդի պահանջներին և հայեցակարգերին:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Կրթական արդյունքները.

• կարևորել դաստիարակության նպատակի պարզաբանման արդիականությունը,

• պատկերացում տալ անձնավորության ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնների մասին,

• ընդգծել տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման կարևորությունը:

Բովանդակությունը.

Բաժին 1. Մանկավարժության ընդհանուր հիմունքները: **Թեմա 1՝** Մանկավարժությունը որպես գիտություն: Մանկավարժության ուսումնասիրության առարկան, խնդիրները և գործառույթները: **Թեմա 2՝** Մանկավարժության մեթոդաբանությունը և գիտահետազոտական մեթոդները: **Թեմա 3՝** Անձի սոցիալականացման գործընթացը: **Թեմա 4՝** Մանկավարժական գործընթացը որպես համակարգ և ամբողջական երևույթ:

Բաժին 2. Դիդակտիկա: Թեմա 5՝ Դիդակտիկան որպես մանկավարժական տեսություն: **Թեմա 6՝** Ուսուցման գործընթացը որպես ամբողջական համակարգ: **Թեմա 7՝** Ուսուցման օրինաչափությունները, սկզբունքները, և դրանց դասակարգումը: **Թեմա 8՝** Ուսուցման մեթոդներն ու միջոցները: **Թեմա 9՝** Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները: **Թեմա 10՝** Ուսուցման կազմակերպման ձևերը: **Թեմա 11՝** Ուսուցման գործունեության արդյունքների ստուգումն ու գնահատումը: **Բաժին 3՝** Դաստիարակության տեսություն: **Թեմա 12՝** Դաստիարակության գործընթացի էությունը և բովանդակությունը: **Թեմա**

13՝ Դաստիարակության սկզբունքները: **Թեմա 14՝** Դաստիարակության մեթոդները, միջոցներն ու ձևերը: **Թեմա 15՝** Անձի դաստիարակությունը կոլեկտիվում և ընտանիքում: **Թեմա 16՝** Մտավոր դաստիարակություն: Սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորումը: **Թեմա 17՝** Բարոյական դաստիարակություն: **Թեմա 18՝** Իրավական դաստիարակություն: **Թեմա 19՝** Գեղագիտական դաստիարակություն: **Թեմա 20՝** Քաղաքացիական դաստիարակություն: **Թեմա 21՝** Աշխատանքային դաստիարակություն: Սովորողների մասնագիտական կողմնորոշում: **Թեմա 22՝** Ֆիզիկական դաստիարակություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B09 Երաժշտություն և տարրական դպրոցում երաժշտության ուսուցման մեթոդիկա-1 /2 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (15 ժամ դասախոսություն և 15 ժամ գործնական և 15 ժամ սեմինար պարապմունք), 2-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Գործնական աշխատանքների միջոցով զարգացնել երաժշտական կրթություն չունեցող ուսանողների երաժշտական մտածողությունը, դիթմի և լադի աստիճանների զգացողությունը, ապահովել ուսանողների գեղագիտական դաստիարակությունը, ուսանողին զինել տարրական դասարաններում երգ և երաժշտություն առարկայի դասավանդման համար անհրաժեշտ տեսական գիտելիքներով և կարողություններով:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

գիտենա՝

Երաժշտական գործունեության դերն ու նշանակությունը, երաժշտական գործիք առարկայի ծրագրի բովանդակությունը, նպատակն ու խնդիրները: Արտասահմանյան երկրների երաժշտական գործիքների առանձնահատկությունները: Երաժշտական դիթմի հասկացություն: Երաժշտական ստեղծագործությունների ունկնդրման կազմակերպման ձևեր: Երաժշտական տարրական գիտելիքներ:

կարողանա՝

Կոսլմնորոշվել արտասահմանյան երկրների նվագարանների առանձնահատկությունների հարցում: Ներկայացնել երաժշտական տարբեր տեսակներ, ժանրերի ստեղծագործությունները: Կազմակերպել հանդիսություններ, զվարճանքներ: Դասավանդել ինչպես լսարանում, այնպես էլ պրակտիկայի ընթացքում:

տիրապետի՝

Երաժշտական տարբեր նվագարաններին, կատարման առանձնահատկություններին: Երաժշտական միջոցառումների կազմակերպմանը, աշակերտների տարիքային առանձնահատկությունների մանկավարժական հիմքուններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կրտսեր դպրոցականի երաժշտական գործունեության հիմնական ձևերը: **Թեմա 2՝** Երաժշտական դաստիարակությունը արտադասարանային աշխատանքների ընթացքում: **Թեմա 3՝** Երաժշտական խմբակային աշխատանքների կազմակերպման ձևեր: **Թեմա 4՝** Մանկական երաժշտական նվագարանների իմացություն: **Թեմա 5՝** Ծանոթություն երաժշտական այբուբենին, նվագելու կարողություն: **Թեմա 6՝** Բազմակողմնալի երաժշտական կրթությամբ զարգացած անձնավորություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B10. Մայրենի լեզու -2 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (15 ժամ դասախոսություն և 30 ժամ գործնական պարապմունք), 2-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժամանակակից հայերենի բառային համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, նպաստել ուսանողների բառապաշարի հարստացմանը և ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի բառապաշարի հատկանիշները, բառերի ձևաիմաստային խմբերի դասակարգման սկզբունքները, բառակազմական օրինաչափությունները,

2. կկարողանա կատարել բառակազմական վերլուծություններ, ճիշտ և տեղին կկիրառի ձևա-իմաստային տարբեր խմբերի բառերը,

3. կտիրապետի գրական հայերենին բնորոշ բառակազմական և իմաստային նրբություններին՝ զերծ մնալով բառագործածության սխալներից

Բովանդակությունը.

Ներածություն. Բառագիտություն. ուսումնասիրության առարկան: Բառ. բառի հատկանիշները: **Թեմա 1՝** Բառիմաստի տեսակները, բառի մենիմաստությունն ու բազմիմաստությունը: Բառիմաստի փոփոխություն: Բառերի ձևաիմաստային խմբերը: **Թեմա 2՝** Բառապաշար: Բառապաշարի շերտերն ու դասակարգումը: **Թեմա 3՝** Բառակազմություն: Ձևույթ և նրա տեսակները: **Թեմա 4՝** Բարդություններ. տեսակները: **Թեմա 5՝** Դարձվածաբանություն. դասակարգումը:

Թեմա 6՝ Բառարանագրություն. բառա-բանների տիպերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B11. Տարիքային հոգեբանություն /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն և 6 ժամ սեմինար պարապմունք), 2-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողներին կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման առանձնահատկությունների, անձնային ուղղվածության, կրտսեր դպրոցականի հույզերի, զգացմունքների, հոգեկան գործընթացների զարգացման նորմերի մասին:

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել կրտսեր դպրոցականի հուզականային ոլորտին, բնավարությանը, խառնվածքի ձևավորմանը, խոսքի զարգացմանը, միջանձնային փախհարաբերություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կիմանա կրտսեր դպրոցական տարիքի հոգեկան զարգացման առանձնահատկությունները, 2.պատկերացում կկազմի կրտսեր դպրոցականի իմացական գործընթացների զարգացման նոր-մերը:

1.պատկերացում կկազմի կրտսեր դպրոցական տարիքի հուզականային ոլորտի մասին,

2.կիմանա կրտսեր դպրոցականի միջանձնային փոխհարաբերությունները,

3. կկարողանա հասկանալ խողի նշանակությունը կրտսեր դպրոցականի կյանքում:

Բովանդակությունը.

Ներածություն. Կրտսեր դպրոցականի հոգեբանության առարկան, նպատակը, մեթոդները: **Թեմա 1՝** Կրտսեր դպրոցականի անատոմիան ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Դպրոցական կյանքին երեխայի սկզբնական հարմարման առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Կրտսեր դպրոցականի մոտ հոգեբանական նորագոյացությունները: **Թեմա 4՝** Խաղը կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 5՝** Ուսումը որպես կրտսեր դպրոցականի առաջատար գործունեության ձև: **Թեմա 6՝** Կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը: **Թեմա 7՝** Կրտսեր դպրոցականի միջանձնային փոխհարաբերությունները: **Թեմա 8՝** Կրտսեր դպրոցականների մոտ իմացական գործընթացների զարգացումը: **Թեմա 9՝** Կրտսեր դպրոցականների ուշադրության առանձնա-հատկությունները: **Թեմա 10՝** Հիշողության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 11՝** Մտածողության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական

տարիքում: **Թեմա 12**՝ Երևակայության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 13**՝ Կրտսեր դպրոցականի զգացմունքները, հույզերը: **Թեմա 14**՝ Կրտսեր դպրոցականի կամային որակները: **Թեմա 15**՝ Կրտսեր դպրոցականի բնավորության ձևավորումը: **Թեմա 16**՝ Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացումը: **Թեմա 17**՝ Ուսուցչի դերը կրտսեր դպրոցականի ուսուցման և դաստիարակության գործում: **Թեմա 18**՝ Երեխայի ներաշխարհի ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 19**՝ Երեխաների հոգեբանությանը վերաբերող տեսություններ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0001/B12. Շախմատի տեսություն և պրակտիկա-1 /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (15 ժամ դասախոսություն և 15 ժամ գործնական պարապմունք), 2-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան մանկավարժական գործընթացում առաջացած խնդիրներին տալ շախմատ առարկայի լուծումներ: Ուսուցչի մասնագետ պատրաստելու բակալավրի ծրագրով նախատեսված է ուսումնասիրել «Շախմատի դասավանդումը դպրոցում» առարկան, որը խիստ կարևոր է և մասնագիտական է: Առարկայի նպատակն է ուսանողներին զինել շախմատին հատուկ գիտելիքներով, շախմատի ծագումնաբանությամբ, խաղաքարերին, շախմատային հասկացություններին, խաղի վարման կարգին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը.

- Կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
- Տիրապետի շախմատ առարկային, հետազոտության մեթոդներին,
- Կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակություն.

Թեմա 1՝ Նախնական շախմատային պատկերացումների և հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 2**՝ Խաղատախտակի և խաղաքարերի շարժման, ինչպես նաև խաղաքար վերցնելու վերաբերյալ պատկերացումների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 3**՝ Արքայի, քայլի հասկացության իմաստի, շախմատում հերթական քայլի, արքային վերաբերվող կանոնների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 4**՝ Թագուհի խաղաքարի, նրա շարժման, թագուհով խաղաքար վերցնելու, հարվածի տակ գտնվող դաշտերի և այլ հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 5**՝ Շախ և մատ: Մատի իմաստը, արքային վերաբերվող կանոնների, պատկերացումների, հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 6**՝ Պատ: Շախմատի խաղի հնարավոր արդյունքների, պատի իմաստի ուսուցանման մեթոդիկա: **Թեմա 7**՝ Նավակ և փիղ խաղաքարերի շարժման

ձևերը, նախ և փիղ խաղաքարերով մատերի ուսուցման մեթոդիկա: **Թեմա 8՝** Ձի խաղաքարը, ձիով մատերի և «պատառաքաղ» հասկացության ուսուցման մեթոդիկան: **Թեմա 9՝** Ձինվոր: Ձինվորների սկզբնական դասավորությունը: Ձինվորի շարժումը, հարվածի դաշտերը, զինվորով խաղաքար վերցնելը, շախ և մատ հայտարարելը, զինվորով կողանցիկ վերցնելու մեթոդիկան: **Թեմա 10՝** Քայլի գրանցում: Պայմանական նշանները շախմատում: Խաղի /պարտիայի/ գրանցումը: Ընդարձակ և համառոտ գրանցման մեթոդիկան: **Թեմա 11՝** Հավերժական շախ: Հավերժական շախը որպես ոչ-ոքիի հասնելու միջոցի ուսուցման մեթոդ: **Թեմա 12՝** Մատ թագուհիով: Միայնակ թագուհիով մատի տեխնիկայի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 13՝** Մատ մեկ և երկու նավակով: Մատ թագուհիով և մեկ նավակով վերջնախաղերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 14՝** Մատ վերջին հորիզոնականում: Վերջին հորիզոնականում մատի տիպային դիրքերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 15՝** Մանկական մատ: f 2 և f 7 դաշտերի թուլությունը խաղի սկզբում: Մանկական մատի տիպային դիրքերի և այլ տիպի մատերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 16՝** Պաշտպանություն: Պաշտպանական տիպային դիրքեր, անպաշտպան խաղաքար, կրկնակի հարձակումը որպես տակտիկական գեղնի ուսուցման մեթոդիկա:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0105/B13 Մաթեմատիկա-В/Տարրական դպրոցի մաթեմատիկայի բովանդակային ուղղության տեսական հիմունքները/ -3 /4 կրեդիտ/

Շաբաթական 4 ժամ (15 ժամ դասախոսություն և 45 ժամ գործնական պարապմունք), 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին բազմությունների, միացությունների տեսության և հարաբերությունների տեսության հիմնական հարցերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մաթեմատիկական հիմնական ու ածանցյալ հասկացությունները և նրանց սահմանումները,

2. կկարողանա ինքնուրույն կատարել պրեդիկատների հետ տրամաբանական գործողություններ,

3. կտիրապետի պրեդիկատային հաշվի էլեմենտները տրամաբանական խնդիրների լուծման մեջ կիրառելու հմտություններին:

Բովանդակությունը.

Պրեդիկատների հաշիվ

Թեմա 1՝ Ասույթների հաշվի «սահմանափակությունը»: «Պրեդիկատե հասկացությունը՝ մեկտեղանի, բազմատեղ: Պրեդիկատի և առնչության կապը: Պրեդիկատների կոնյուկցիա, դիզյունկցիա, իմպլիկացիա,

Էկվիվալենցիա. դրանցից յուրաքանչյուրի ճշմարտացիության բազմությունը: **Թեմա 2՝** Քվանտորներ՝ գոյության, ընդհանրության, ազատ և կապված փոփոխականներ: **Թեմա 3՝** Պրեդիկատների հաշվի բանաձևեր. դրանց համագործությունը: Համանշանական բանաձևեր: **Թեմա 4՝** Դատողությունների արտահայտումը պրեդիկատների միջոցով: Տրամաբանական հետևության և համարժեքության առնչությունը պրեդիկատների բազմության վրա: **Թեմա 5՝** Դատողությունները և սիլոգիզմները. դրանց արտահայտումը պրեդիկատային բանաձևերով:

Սահմանումներ, հասկացություններ, թեորեմներ

Թեմա 6՝ Սահմանում. դրա առանձնահատկությունները: Սահմանման կանոններ՝ համաչափություն. կրկնաբանության և շրջապատույտի բացառում, հստակություն, հակիրճություն: Իրական և անվանական (նոմինալ) սահմանումներ: **Թեմա 7՝** Հասկացություն. դրա ծավալ և բովանդակություն: Հասկացությունների հարաբերությունը՝ ըստ ծավալի: Հասկացության ընդհանրացում և սահմանափակում. սեռային և տեսակային հասկացություններ: **Թեմա 8՝** Թեորեմ, դրա կառուցվածքը: Անհրաժեշտ և (կամ) բավարար պայմաններ: Թեորեմի ապացուցման ձևեր: Ճիշտ և սխալ դատողություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B14. Տարրական կրթության մանկավարժություն/4 կրեդիտ/

Շաբաթական 4 ժամ (45 ժամ դասախոսություն և 15 ժամ սեմինար պարապմունք), 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել տարրական դպրոցի մանկավարժության հիմունքները, մանկավարժության գիտությունների համակարգը, գիտամանկավարժական հետազոտության մեթոդները, ուսուցման տեսության, ուսուցման գործընթացների առանձնահատկություններն ու օրինաչափությունները, շարժիչ ուժերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա տարրական դպրոցի մանկավարժության գործընթացի օրինաչափություններն ու առանձնահատկությունները, տարրական դպրոցի մանկավարժության կապն այլ գիտությունների հետ, մանկավարժության ճյուղերը, ուսուցման տեսության կարևորությունը մանկավարժական գիտությունների ենթատեքստում,

2. կհասկանա մանկավարժության տեսությանը վերաբերող հիմնահարցերը,

3.կկարողանա տեսական գիտելիքները կիրառել մանկավարժության մյուս դասընթացներում և կիրառել գործնականում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տարրական դպրոցի մանկավարժության ընդհանուր հիմունքները:
Թեմա 2՝ Տարրական դպրոցի մանկավարժության գիտությունների համակարգը:
Թեմա 3՝ Կրթության բովանդակությունը, կրթական նոր հարացույցերը: **Թեմա 4՝** Անձի ձևավորում և սոցիալականացում: **Թեմա 5՝** Ուսուցման տեսության ժամանանակից տեսությունները: **Թեմա 6՝** Ուսուցումը որպես իրականության արտացոլում: **Թեմա 7՝** Իմացության մեջ զգայական իմացության և տրամաբանական իմացության փոխկապակցումը: **Թեմա 8՝** Կրտսեր դպրոցականի տարիքային առաձնահատկությունները: **Թեմա 9՝** Ուսուցման սկզբունքները: **Թեմա 10՝** Ուսուցման մեթոդները, նորագույն մեթոդները աշակերտակենտրոն ուսուցման ընթացքում: **Թեմա 11՝** Ուսուցման կազմակերպման ձևերն ու եղանակները: **Թեմա 12՝** Կոլեկտիվ ուսուցման առավելություններն ու թերությունները: **Թեմա 13՝** Դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև, ուսուցման կազմակերպման այլ ձևեր: **Թեմա 14՝** Ուսուցման կազմակերպման նորագույն եղանակները: **Թեմա 15՝** Պրոբլեմային ուսուցում: **Թեմա 16՝** Ծրագրավորված ուսուցում: **Թեմա 17՝** Սովորողների իմացական գիտելիքների, կարողությունների, հմտությունների հաշվառումը և գնահատումը: **Թեմա 18՝** Ուսուցչի դերը սովորողների ուսումնափմացական գործունեության կառավարման, կազմակերպման գործում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B15. Երաժշտություն և տարրական դպրոցում երաժշտության ուսուցման մեթոդիկա-2/3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (15 ժամ դասախոսություն և 15 ժամ գործնական և 15 սեմինար պարապմունք), 3-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դաստիարակել ուսանողների մոտ սեր դեպի երգչախմբային արվեստը, զարգացնել նրանց մոտ վոկալ-խմբերգային և խմբավարական-կատարողական հմտություններ և կարողություններ, տարրական դպրոցի «Երաժշտություն» առարկայի երգերի ծրագրային նյութի յուրացում:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտենա՝

Երաժշտական գործունեության դերն ու նշանակությունը , Երաժշտության դասվանդման մեթոդիկա ծրագրի բովանդակությունը, նպատակն ու խնդիրները:

Արտասահմանյան երկրների երաժշտական մշակույթի առանձնահատկությունները: Երաժշտական ստեղծագործությունների ունկնդրում: Երաժշտության տեսակները, ժանրերը: Երաժշտական գործունեության մանակավարժական հիմունքները: Երաժշտության զարգացնող դերը դպրոցականի կրթադաստիարակչական հարցում: Երաժշտական տարրական գիտելիքներ:

Կարողանա՝

Կողմնորոշվել արտասահմանյան երկրների երաժշտական մշակութային առանձնահատկությունների հարցում: Ներկայացնել երաժշտական տարբեր տեսակների, ժանրերի ստեղծագործությունները: Դասավանդել ինչպես լսարանում, այնպես էլ պրակտիկայի ընթացքում:

Տիրապետի՝

Երաժշտական տարրական գիտելիքներին, երաժշտության դասավանդման մեթոդներին, ձևերին: Երաժշտական գործունեության մանակավարժական հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Երեխաների երաժշտական դաստիարակության պատմություն: **Թեմա 2՝** Երաժշտության դասը և դրա տեսակները: **Թեմա 3՝** Տարրական դասարաններում երաժշտության դասավանդման մեթոդիկա: **Թեմա 4՝** Տարրական դպրոցում երաժշտական դաստիարակության գիտական հիմունքները և մեթոդոլոգիական սկզբունքները: **Թեմա 5՝** Կրտսեր դպրոցականների երաժշտական գործունեության հիմնական տիպերը: **Թեմա 6՝** Երաժշտական քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները: **Թեմա 7՝** Երաժշտական հանգստի կազմակերպման զանգվածային և խմբակային ձևերը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B16. Կերպարվեստ և տարրական դպրոցում կերպարվեստի ուսուցման մեթոդիկա-1./ 3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (15 ժամ դասախոսություն և 15 ժամ գործնական և 15 սեմինար պարապմունք), 3-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին ներկայացնել կենպարվեստի ուսումնասիրության ոլորտը , նրա բաղադրիչները,կերպարվեստի ուսումնասիրության առարկան և մեթոդները:Բացատրել կերպարվեստի հիմնական հասկացությունների,հիմնահարցերի էությունը:Տալ կերպարվեստի կապը մյուս բնագավառների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

1. կունենա ընդհանուր պատկերացում կերպարվեստի, նրա ուսումնասիրության ոլորտների մասին,
2. կտարբերակի կերպարվեստի առանձին ոլորտների ուսումնասիրության առանձնահատկություններին,
3. կըմբռնի կերպարվեստի համընդհանուր բնույթը անձի ձևավորման գործում,
4. կկարողանա ըմբռնել և հասկանալ կերպարվեստի ուղղությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կերպարվեստի առաջացումը: **Թեմա 2՝** Կերպարվեստի զարգացման հիմնական ուղղությունները: **Թեմա 3՝** Մարդը և բնությունը որպես կերպարվեստի ուսումնասիրության բնորոշիչ մաս: **Թեմա 4՝** Զգայականի և հոգեկանի դերը կերպարվեստում: **Թեմա 5՝** Կերպարվեստի կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 6՝** Կերպարվեստի դասավանդման առանձնահատկությունները: **Թեմա 7՝** Անձի անհատական ընդունակությունների զարգացումը կերպարվեստի օգնությամբ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B17. Մայրենի լեզու-3 /4 կրեդիտ/ Շաբաթական 4 ժամ (15 ժամ դասախոսություն և 45 ժամ գործնական պարապմունք), 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համա-կարգը՝ քննության առնելով գոյական, ածական, թվական խոսքի մասերի որոշման հիմունքները, բնորոշ հատկանիշները, քերականական կարգերը և ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները. Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշները,
2. կգիտակցի հայերենի ձևաբանական փոփոխությունների օրինաչափությունները՝ լիարժեք տիրապետելով բառերի ճիշտ ձևափոխման և կապակցման կարողություններին՝ գրավոր և բանավոր խոսքում լեզվական վթարներից խուսափելու համար,
3. կկարողանա կատարել ձևաբանական վերլուծություններ, ճիշտ կկիրառի քերականական գուգաձևությունները:

Բովանդակությունը.

Ներածություն. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության ուսումնասիրության առարկան: Քերականական կարգեր: **Թեմա 1՝** Խոսքի մասերը ժամանակակից հայերենում, դրանց որոշման հիմունքները:

Փոխանություն: **Թեմա 2՝** Գոյական. քերականական կարգերը (թվի, հոլովի, առկայացման, անձի և ոչ անձի), իմաստային-քերականական խմբերը: **Թեմա 3՝** Ածական. տեսակները և նրանց հատկանիշները: **Թեմա 4՝** Թվական, տեսակները, կազմությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ընթացիկ քննություններ

Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0303/B18. Մանկավարժական հոգեբանություն /2 կրեդիտ/ Շաբաթական 2 ժամ (15 ժամ դասախոսություն և 15 ժամ գործնական պարապմունք), 3-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Ուսանողին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

▪ ծանոթ կլինի մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմներին և օրինաչափություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2՝** Ուսումնական գործունեության կառուցվածքը: **Թեմա 3՝** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: **Թեմա 4՝** Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: **Թեմա 5՝** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: **Թեմա 6՝** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: **Թեմա 7՝** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: **Թեմա 8՝** Դաստիարակության հոգեբանություն: **Թեմա 9՝** Կրթության հոգեբանություն: **Թեմա 10՝** Ուսուցման հոգեբանություն: **Թեմա 11՝** Ուսուցչի անձի հոգեբանություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

0001/B19. Շախմատի տեսություն և պրակտիկա-2. /2 կրեդիտ/, Շաբաթական 2 ժամ (15 ժամ սեմինար և 15 ժամ գործնական պարապմունք), 3-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան մանկավարժական գործընթացում առաջացած խնդիրներին տալ շախմատ առարկայի լուծումներ: Ուսուցչի մասնագետ պատրաստելու բակալավրի ծրագրով նախատեսված է ուսումնասիրել «Շախմատի դասավանդումը դպրոցում» առարկան, որը խիստ կարևոր է և մասնագիտական է: Առարկայի նպատակն է ուսանողներին զինել շախմատին հատուկ գիտելիքներով, շախմատի ծագումնաբանությամբ, խաղաքարերին, շախմատային հասկացություններին, խաղի վարման կարգին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը.

- Կարողանան ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում:
- Տիրապետի շախմատ առարկային, հետազոտության մեթոդներին:
- Կարողանան որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Թագուհի խաղաքարի, նրա շարժման, թագուհով խաղաքար վերցնելու, հարվածի տակ գտնվող դաշտերի և այլ հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 2՝** Շախ և մատ: Մատի իմաստը, արքային վերաբերվող կանոնների, պատկերացումների, հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 3՝** Պատ: Շախմատի խաղի հնարավոր արդյունքների, պատի իմաստի ուսուցանման մեթոդիկա: **Թեմա 4՝** Նավակ և փիղ խաղաքարերի շարժման ձևերը, նավակ և փիղ խաղաքարերով մատերի ուսուցման մեթոդիկա: **Թեմա 5՝** Ձի խաղաքարը, ձիով մատերի և «պատառաքաղ» հասկացության ուսուցման մեթոդիկան: **Թեմա 6՝** Ձինվոր: Ձինվորների սկզբնական դասավորությունը: Ձինվորի շարժումը, հարվածի դաշտերը, զինվորով խաղաքար վերցնելը, շախ և մատ հայտարարելը, զինվորով կողանցիկ վերցնելու մեթոդիկան: **Թեմա 7՝** Քայլի գրանցում: Պայմանական նշանները շախմատում: Խաղի /պարտիայի/ գրանցումը: Ընդարձակ և համառոտ գրանցման մեթոդիկան: **Թեմա 8՝** Հավերժական շախ: Հավերժական շախը որպես ոչ-ոքիի հասնելու միջոցի ուսուցման մեթոդ: **Թեմա 9՝** Մատ թագուհիով: Միայնակ թագուհիով մատի տեխնիկայի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 10՝** Մատ մեկ և երկու նավակով: Մատ թագուհիով և մեկ նավակով վերջնախաղերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 11՝** Մատ վերջին հորիզոնականում: Վերջին հորիզոնականում մատի տիպային դիրքերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 12՝** Մանկական մատ: f 2 և f 7 դաշտերի թուլությունը խաղի սկզբում: Մանկական մատի տիպային դիրքերի և այլ տիպի մատերի տիպային մեթոդիկան: **Թեմա 13՝** Պաշտպանություն: Պաշտպանական տիպային դիրքեր, անպաշտպան խաղաքար, կրկնակի հարձակումը որպես տակտիկական զենքի ուսուցման մեթոդիկա: **Թեմա 14՝** Կապ: Կապի տեսակների ուսուցման մեթոդիկան: **Թեմա 15՝** Բաց հարձակում, բաց հարձակման տեսակները: **Թեմա 16՝** Ընթացիկ պլան: Կանխարգելում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0105/B20. Մաթեմատիկա-B /Տարրական դպրոցի մաթեմատիկայի բովանդակային ուղղության տեսական հիմունքները/-4 /3 կրեդիտ/ Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

4-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հանրաշխարհային գործողությունների հատկությունները, խումբ, օղակ, դաշտ հասկացությունները, միացությունների տեսության տարրերը,
2. կկարողանա կատարել գործողություններ օղակի, դաշտի տարրերի հետ, լուծել կոմբինատորիկայի խնդիրներ,
3. կտիրապետի օղակի, դաշտի հիմնական հատկություններին, կիրառել միացությունների տեսության տարրերը խնդիրների լուծման մեջ:

Բովանդակությունը.

Հանրահաշխարհային համակարգեր.

Թեմա 1`** Հանրահաշխարհային գործողություն հասկացությունը: Հանրահաշխարհային գործողությունների հատկություններ (տեսակներ)՝ տեղափոխելի, գուցորդելի, բաշխական: **Թեմա 2` Կրճատելի հանրահաշխարհային գործողություն: Չեզոք (միավոր, զրոյական) տարր, կլանող տարր: Տարրի՝ համաչափ (հակադարձ, հակադիր): Հակադարձելի հանրահաշխարհային գործողություն: **Թեմա 3`** Խումբ հասկացությունը. միավորի միակությունը: Երկրաչափական ձևափոխությունների խմբեր: **Թեմա 4`** Օղակ հասկացությունը: Չեզոք (զրոյական) տարրի գոյությունը և միակությունը: Համաչափ (հակադիր) տարրի գոյությունը և միակությունը: Հանումը (երկու տարրերի տարբերությունը) օղակում. հիմնական հատկություններ՝ $a \cdot (-b) = -ab$, $(-a) \cdot (-b) = ab$, $a \cdot (b - c) = ab - ac$, $(a - b) - (c - d) = (a + d) - (b + c)$, $(a - b)(c - d) = (ac + bd) - (ad + bc)$: **Թեմա 5`** Դաշտ հասկացությունը. միավորի գոյությունը և միակությունը, հակադարձի գոյությունը և միակությունը: Բաժանումը դաշտում. հիմնական հատկություններ՝ $a/b = c/d \Leftrightarrow ad = bc$, $a/b + c/d = (ad + bc)/bd$, $a/b \cdot -c/d = -ac/bd$, $a/d : b/c = ac/db$: Միացությունների տեսության տարրեր **Թեմա 6`** Կոմբինատորիկայի խնդիրներ: Գումարի, արտադրյալի կանոնը: **Թեմա 7`** Առանց կրկնությունների տեղափոխություններ, տեղադրություններ, միացություններ. դրանց հատկությունները: **Թեմա 8`** Կրկնություններով տեղափոխություններ, տեղադրություններ, միացություններ. դրանց հատկությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B21. Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա-1 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

4-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարրական դպրոցում ՄԴՄ-ի առարկայի, մաթեմատիկայի դասավանդման մեթոդների, մաթեմատիկայի ուսուցման կազմակերպման, ուսուցման միջոցների և առանձնահատկությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մաթեմատիկայի տարրական դասընթացի նպատակներն ու խնդիրները, բովանդակությունը և կառուցվածքը, առանձնահատկությունները,
2. կյուրացնի մաթեմատիկայի ուսուցման հիմնական միջոցները, ուսուցման մեթոդները և գնա-հատման նորմերը,
3. կտիրապետի ուսումնական պրոցեսի կազմակերպման հիմնական ձևերին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ՄԴՄ-ն որպես գիտություն և ՄՏԴ-ն որպես ուսումնական առարկա տարրական դպրոցում: **Թեմա 2՝** Մաթեմատիկայի դասավանդման մեթոդները տարրական դպրոցում: **Թեմա 3՝** Մաթեմատիկայի ուսուցման կազմակերպումը տարրական դպրոցում: Մաթեմատիկայի դասը և նրա առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Մաթեմատիկայի ուսուցման միջոցները: Ուսումնական պրոցեսի կազմա-կերպումը տարրական դպրոցում: **Թեմա 5՝** Մաթեմատիկայի դասավանդման առանձնահատկությունները սակավակոմպլեկտ դպրոցում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B22. Մանկավարժության պատմություն /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (12 ժամ դասախոսություն և 12 ժամ սեմինար պարապմունք),

4-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել համաշխարհային մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, հայ մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, կրթության բովանդակությանը, ուսուցման հիմնական օրենքների, օրինաչափությունների, մեթոդների, սկզբունքների զարգացման պատմությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա մանկավարժական մտքի զարգացման պատմությունը արտասահմանյան երկրներում,
- կհասկանա հայ մանկավարժական մտքի զարգացման պատմության առանձնահատկությունները,
- կկարողանա տարբերակել արտասահմանյան և հայ մանկավարժության պատմության տարբերություններն ու նմանությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ներածություն: Դաստիարակության ծագումը: **Թեմա 2՝** Դաստիարակությունը Հին Հռոմում: **Թեմա 3՝** Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: **Թեմա 4՝** Վերածննդի դարաշրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 5՝** Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 6՝** Նորագույն շրջանի արևմտավրոպական դպրոցն ու մանկավարժական միտքը: Նոր շրջանի ամերիկյան դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 7** Խորհրդային դպրոցի ձևավորումն ու զարգացումը, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգի ձևավորումը: **Թեմա 8՝** Ժամանակակից հայ մանկավարժներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0303/B23 Տեխնոլոգիա և տարրական դպրոցում տեխնոլոգիայի ուսուցման մեթոդիկա-1 /4 կրեդիտ/ Շաբաթական 4 ժամ (12 ժամ դասախոսություն և 24 ժամ գործնական պարապմունք, 12 սեմինար պարապմունք),

4-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց:

Նպատակը.

Դասընթացը ենթադրում է ուսանողին զինել նախնական գիտելիքներով, ծանոթացնել թղթի տեսակներին, դրանց օգտագործման բնագավառներին, մկրատից օգտվելու անվտանգության կանոններին, գույների պարզ համադրությունից առաջացած պատկերներին և աշխատանքային դաստիարակությանը: Դասընթացի նպատակն է դաստիարակել աշխատասիրություն, զարգացնել էսթե-տիկական ճաշակ, ստեղծագործական երևակայություն և ֆանտազիա:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա աշխատանքի ուսուցման դասընթացի դերը տարրական դասարաններում, դասի կառուցվածքը և բովանդակությունը.
2. կկարողանա աշխատել թղթով, սովարաթղթով, մատիտներով, մկրատով, քանոնով, բնական և արհեստական նյութերով (տերևներով, քարերով, կտրգներով, սերմերով, կաղիններով, կոնե-րով և այլն).

3. կտիրապետի մասնագիտական հմտություններին

Բովանդակությունը.

Ներածություն. Ծանոթություն շխատանքի ուսուցում առարկայի հետ: **Թեմա 1՝** Աշխատանքի ուսուցումը տարրական դասարաններում: **Թեմա 2՝** Թղթի դերը մեր կյանքում: **Թեմա 3՝** Թղթով կատարվող գործողություններ (պատրաստել բաժակ, փխիկ, շնիկ): **Թեմա 4՝** Թղթի ծալման և կտրման գործողություններ (դետալներ, տրաֆարետներ, գծանմուշներ): **Թեմա 5՝** Սովարաթուղթ, սովարաթղթից տարբեր առարկաների պարտրաստում, հասկացություններ (սիմետրիկ՝ և ասիմետրիկ՝ մասին: **Թեմա 6՝** Աշխատանքի ուսուցման դասի կառուցվածքը և բովանդակությունը: **Թեմա 7՝** Հասկացություն ապլիկացիայի մասին, ապլիկացիան տարրական դասարաններում: **Թեմա 8՝** Երկրաչափական պատկերներով ապլիկացիա, (Զարդանախշեր: **Թեմա 9՝** Կառուցումներ երկրաչափական պատկերներով: **Թեմա 10՝** Թղթով ապլիկացոն աշխատանքներ, հարթ տիպի ապլիկացիա: **Թեմա 11՝** Ծավալային ապլիկացիա: **Թեմա 12՝** Թղթի ծավալային խաղալիքներ, բնական տերևներով ապլիկացիա: **Թեմա 13՝** Ստեղծագործական ապլիկացիաներ: **Թեմա 14՝** Փափուկ խաղալիքների պատրաստում: **Թեմա 15՝** Հասկացություն խճանկարի մասին, խճանկարի պատրաստում: **Թեմա 16՝** Թղթով խճանկար, միագույն, երկգույն, բազմագույն խճանկար (մրգեր, բանջարեղեններ):

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B24. Կերպարվեստ և տարրական դպրոցում կերպարվեստի ուսուցման մեթոդիկա-2 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

4-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Սովորողներին ուսուցանել կերպարվեստի ուսուցման արդյունավետ ձևերն ու մեթոդները, հանրակրթական դպրոցում ստեղծագործաբար մոտենալ դասավանդման հարցերին, կերպարվեստի դասավանդման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կերպարվեստի դասավանդման մեթոդիկական տարրական դպրոցում: **Թեմա 2՝** Կերպարվեստի կրթադաստիարակչական դերն ու նշանակությունը: **Թեմա 3՝** Կրտսեր դպրոցականի կերպարվեստային գործունեության հոգեբանամանկավարժական հիմունքները: **Թեմա 4՝** Գեղագիտական վերաբերմունքի ձևավորում և զարգացում: **Թեմա 5՝** Արվեստի և կերպարվեստի տեսակների իմացություն, ծանոթացում դեկորատիվ կիրառական արվեստի ձևերին, առանձնահատկություններին, կատարման միջոցներին: **Թեմա 6՝** Արվեստի թեմաներով զրույցների կազմակերպում: **Թեմա 7՝** Կերպարվեստի ժանրերի իմացություն: **Թեմա 8՝** Կերպարվեստային ակտիվության տարբեր

տեսակների արտահայտչամիջոցների, տեսակներին համապատասխան նյութերի կիրառման իմացություն: **Թեմա 9՝** Կերպարվեստային գործունեության միջոցով ինքնիրացման գործընթացի իրականացում: **Թեմա 10՝** Կերպարվեստի այլընտրանքային ծարագերը տարրական դպրոցում: **Թեմա 11՝** Ժամանակակից դասավանդման մեթոդների կիրառում: **Թեմա 12՝** Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխայի ինքնուրույնության ձևավորում և զարգացում: **Թեմա 13՝** Անհատական և խմբակային աշխատանքների կազմակերպում: **Թեմա 14՝** Անհատական մոտեցման ցուցաբերում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B25 Մայրենի լեզու -4 /3 կրեդիտ/ Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

4-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը, դերանուն, բայ, մակբայ խոսքի մասերին բնորոշ հատկանիշները՝ հատուկ ուշադրություն դարձնելով բայի ուսուցմանը, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշները,

2. կտիրապետի բայի խոնարհման համակարգի բոլոր նրբություններին և կկարողանա քերականական կանոններին համապատասխան ձևակերպել մտքերը՝ խուսափելով հնարավոր սխալ-ներից,

3. կտիրապետի խոսքի կառուցման հմտություններին՝ կգործածի միայն գրագետ և ճիշտ կա-ռուցված խոսք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դերանուն. տեսակները և դրանց քերականական հատկանիշները:

Թեմա 2՝ Բայ. կազմությունը, տեսակները, քերականական կարգերը՝ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, կերպ: **Թեմա 3՝** Մակբայ. տեսակները և կազմությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B26 Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկա-1 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

4-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին գրաճանաչության ուսուցման ժամանակակից մեթոդներին, առաջին դասարանցիների բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման միջոցներին, այբբենարանին և նրանով աշխատելու հնարներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի գրաճանաչության ուսուցման ժամանակակից մեթոդներին,
2. կլուծի կրտսեր դպրոցականի լեզվական ու կրթադաստիարակչական խնդիրները,
3. կծանոթանա այբբենարանին ու նրա դասավանդման մեթոդներին:

Բովանդակությունը.

Ներածություն. Հայոց լեզվի տարրական դասընթացը: Հայոց լեզվի մեթոդիկայի պատմական զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 1.** Հայոց լեզվի մեթոդիկան որպես գիտություն, կապը այլ գիտություն-ների հետ: **Թեմա 2.** Հայոց լեզվի մեթոդիկայի բաժինները: Ծրագիր, դասագիրք, մեթոդիկա: **Թեմա 3.** Գիրը և քաղաքակրթության զարգացումը: Գրաճանաչության ուսուցման մեթոդները և դրանց դասակարգման սկզբունքները հայ դպրոցում: **Թեմա 4.** Գրաճանաչության ուսուցման ժամանակակից մեթոդները: **Թեմա 5.** Նախաայբբենական, այբբենական, հետայբբենական շրջաններ, խնդիրներն ու նպատակները: **Թեմա 6.** Գրաճանաչության ուսուցման դասերի տիպերը: Հնչյուն-տառի ուսուցում: **Թեմա 7.** Այբբենարանը որպես դասագիրք:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0105/B27 Մաթեմատիկա-B /Տարրական դպրոցի մաթեմատիկայի բովանդակային ուղղության տեսական հիմունքները/-5 /3 կրեդիտ/

Շաբաթական 4 ժամ (11 ժամ դասախոսություն և 37 ժամ գործնական պարապմունք),

5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին բնական շարի կառուցման Պեանոյի համակարգի և տեսաբազմային մոդելի հետ:

Կրթական արդյունքները. Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնական շարի կառուցման Պեանոյի համակարգի և տեսաբազմային մոդելի մասին,
2. կկարողանա պարզել աքսիոմների համակարգի անհակասելիությունը,

լրիվությունը, տալ Z_0 -ի տեսաբազմային մեկնաբանությունը,

3. կտիրապետի գումարի և արտադրյալի գոյության և միակության թեորեմի ապացույցին, մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդին:

Բովանդակությունը.

Բնական թվերի շարքի կառուցման աքսիոմային համակարգը (Պեանո) Թեմա 1՝ Աքսիոմային մեթոդը մաթեմատիկայում. ոչ սահմանելի հասկացություններ, առնչություններ, աքսիոմներ: Աքսիոմների համակարգի անհակասելիություն, անկախություն, լրիվություն: **Թեմա 2՝** Բնական թվերի շարքի Պեանոյի աքսիոմների համակարգը. մաթեմատիկական ինդուկցիայի աքսիոմը: Գումարի աքսիոմային սահմանումը. գումարի գոյության թեորեմը (նկարագրություն). միակության թեորեմի ապացուցումը: Գումարի հատկություններ՝ տեղափոխականություն: Գումարման աղյուսակ: **Թեմա 3՝** Արտադրյալի աքսիոմային սահմանումը, արտադրյալի՝ գոյության թեորեմը (նկարագրություն). միակության ապացուցումը: Արտադրյալի հատկությունների՝ տեղափոխականություն, զուգորդականություն: Բազմապատկման աղյուսակ: **Թեմա 4՝** Ջրո թիվը: Կարգի առնչությունը Z_0 -ում. դրա հատկությունների ապացուցումը: Գումարի և արտադրյալի մոնոտոնությունը: Տարբերության, քանորդի սահմանումը Z_0 -ում: Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը: Բնական թվերի շարքի կառուցման տեսաբազմային (SF) մոդելը՝ Z_0 -ի տեսաբազմային մեկնաբանումը **Թեմա 5՝** «Երկու բազմությունների համագործակցություն առնչությունը որպես համարժեքություն. համարժեքության դասերը որպես բնական թվերի SF մեկնաբանում: **Թեմա 6՝** Համբանք: Կարգային, քանակական բնական թվեր: Բնական հատված. թեորեմներ դրա վերաբերյալ: Կարգի առնչության SF եկնաբանումը (թեորեմ՝ վերջավոր բազմության ենթաբազմության վերջավոր լինելու մասին): **Թեմա 7՝** Ոչ բացասական ամբողջ թվերի գումար հասկացության SF սահմանումը, դրա կոռեկտությունը, գոյությունն ու միակությունը: Գումարի հատկություններ: «Ոչ բացասական ամբողջ թվերի տարբերություն հասկացությունը. դրա կոռեկտությունը, գոյությունն ու միակությունը: Տարբերության (և գումարի) հատկություններ: **Թեմա 8.** «Ոչ բացասական ամբողջ թվերի արտադրյալ՝ հասկացության SF սահմանումը, դրա կոռեկտությունը, գոյությունն ու միակությունը: «Ոչ բացասական ամբողջ թվերի քանորդ՝ հասկացությունը. դրա կոռեկտությունը, գոյությունն ու միակությունը. արտադրյալի (և քանորդի) հատկություններ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0105/B28 Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա-2 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ոչ բացասական ամբողջ թվերի թվարկության և թվաբանական գործողությունների ուսումնասիրման մեթոդիկաներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա բնական թվի և գրոյի գաղափարների ներմուծման և ձևավորման հետ կապված հարցերը, թվարկության տասնորդական դիրքային համակարգի առանձնահատկությունները,

2. կկարողանա գիտակցաբար շարադրել թվաբանական գործողությունների ներմուծման ուսուցման և նրանց որոշ հատկությունների հետ կապված հարցերը, ինչպես նաև թվաբանական գործողությունների ստուգման և թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև եղած կապի ուսուցումը,

3. կտիրապետի մաթեմատիկական արտահայտությունների արժեքները անսխալ հաշվելու և այդ հարցերի հետ կապված ուսուցման մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ոչ բացասական ամբողջ թվերի թվարկության ուսումնասիրման մեթոդիկան: **Թեմա 2՝** Ըստ համակենտրոնների թվերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 3՝** Թվարկության տասնորդական դիրքային համակարգի առանձնահատկությունները: **Թեմա 4՝** Թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան: **Թեմա 5՝** Թվաբանական գործողությունների ուսուցումը ըստ համակենտրոնների:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B29 Տեխնոլոգիա և տարրական դպրոցում տեխնոլոգիայի ուսուցման մեթոդիկա-2 /3 կրեդիտ/ Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացը ենթադրում է ուսանողին զինել տեսական գիտելիքներով, գործնական կարողություններով, ձեռքի աշխատանքի հմտություններով, որոնք հետագայում կկիրառի տարրական դպրոցում: Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել աշխատանքի ուսուցման կազմակերպման ձևերին և տեսակներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա դասի կառուցվածքը և բովանդակությունը.

2. կկարողանա աշխատել արհեստական նյութերով, աճեցնել և խնամել

սենյակային և դեկորատիվ բույսեր, սերմեր (ծաղիկներ, ծառեր, լոբու, ցորենի հատիկներ)։

3. կտիրապետի ուսուցչի մասնագիտական հմտություններին։

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումը։ **Թեմա 2՝** Բնական և արհեստական նյութեր, աշխատանք այդ նյութերով։ **Թեմա 3՝** Աշխատանք բնականա նյութերով, դրանց մշակումն ու նախապատրաստումը աշխատանքի համար։ **Թեմա 4՝** Արհեստական նյութերի օգտագործումը, դրանց կտրելու, միացնելու ձևերն ու եղանակները։ **Թեմա 5՝** Ծանոթացում մետաղալարի հատկություններին. աշխատանք մետաղալարով (հյուսք)։ **Թեմա 6՝** Ծանոթացում փայլաթիթեղի հատկություններին, աշխատանք փայլաթիթեղով։ **Թեմա 7՝** Դասի տեսակները, էքսկուրսիա։ **Թեմա 8՝** Սենյակային բույսերի խնամքը։ **Թեմա 9՝** Աշխատանք սերմերով։ **Թեմա 10՝** Օրվա դասի պլան կոնսպեկտ։ **Թեմա 11՝** Աշխատանք մասնագործական նյութերով։ **Թեմա 12՝** Կար։ Բլանդակար։ Խաչկար։ **Թեմա 13՝** Գործվածքների և թելերի հավաքածուի կազմում։ **Թեմա 14՝** Ուղղանկյունաձև ձևածքների պատրաստումը ձևանմուշով։ Գծանմուշներ գործվածքի վրա։

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր։

0303/B30 «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսուցման մեթոդիկա -1/3 կրեդիտ/ Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

5-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Կրթական արդյունքները. Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է՝
գիտենա՝

Ներառական դպրոցներում դասավանդվող առարկայի ծրագիրը, ուսումնասիրվող նյութի բովանդակությունը, դրա դասավանդման մեթոդները։ Առարկայի դասավանդման շտկողական-դաստիարակչական և մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական / ներառական / դպրոցում։

կարողանա՝

Ճիշտ հասկանալ «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դերը կրտսեր դպրոցականի և հատկապես կրթական հատուկ կարիքներով երեխաների կրթադաստիարակչական և շտկող զարգացնող աշխատանքներում։ Պատրաստվել դասին, կառուցել և հաշվի առնելով ներառական դպրոցի առանձնահատկությունները՝ իրականացնել դաս, լաբորատոր պարապմունքներ, էքսկուրսիաներ բնության գրկում, թանգարաններում և ցուցահանդեսներում, այգիներում։

տիրապետի՝

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դասավանդման մեթոդներին ու հնարներին, արտադասարանական միջոցառումներ կազմակերպելու և

անցկացնելու հմտություններին, ինչպես նաև ներառական կրթական հիմնական սկզբունքներին, նպատակներին ու խնդիրներին, ուսումնական գործընթացում հավասար պայմանների և կրթական համապատասխան միջավայրի ստեղծմանը՝ սահմանափակ կարողություններով երեխաների առանձնահատկությունները դիտելով ոչ թե որպես խնդիր, այլ որպես ուսուցման ռոբոթթացի զարգացման հնարավորություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բնությունը և հասարակությունը որպես շրջապատող աշխարհի բաղկացուցիչ մասեր: **Թեմա 2՝** Մարդը որպես բնության և հասարակության անդամ: **Թեմա 3՝** Շրջապատող աշխարհը ճանաչելու եղանակները, դպրոցականի օրվա ռեժիմը, անձնական հիգիենան, ֆիզիկական կուլտուրա, առաջին բուժօնություն: **Թեմա 4՝** Կենդանի և անկենդան բնություն, տարվա եղանակները և դրանց միջև կապը: **Թեմա 5՝** Մթնոլորտ, ջրոլորտ: **Թեմա 6՝** Մակերևույթի ձևերը, օգտակար հանածոներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատուսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B31 Մայրենի լեզու -5 /3 կրեդիտ/ Շաբաթական 3 ժամ (11 ժամ դասախոսություն և 25 ժամ գործնական պարապմունք),

5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համա-կարգը՝ քննության առնելով կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերի որոշման հիմունքները, բնորոշ հատկանիշները, քերականական կարգերը և ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգի հատկանիշները,
2. կհասկանա կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերի դասակարգման սկզբունքները,
3. կկարողանա կատարել ձևաբանական վերլուծություններ, ճիշտ կկիրառի քերականական գույքաձևությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կապ. տեսակները, դասակարգման սկզբունքները, հոլովառությունը: **Թեմա 2՝** Շաղկապ. տեսակները: **Թեմա 3՝** Վերաբերական. տեսակները: **Թեմա 4՝** Ձայնարկություն. Տեսակները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B32 Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկա-2 /4 կրեդիտ/

Շաբաթական 4 ժամ (11 ժամ դասախոսություն և 37 ժամ գործնական պարապմունք),

5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին կրտսեր դպրոցականի կարդալու ուսուցման մեթոդներին, բացատրական ընթերցանության բաղադրամասերին, գեղարվեստական ու գիտահանրամատչելի նյութերի ավանդմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի կարդալու որակական հատկանիշների ուսուցմանը,
2. կլուծի կրտսեր դպրոցականի անձի ձևավորման, աշխարհաճանաչողական խնդիրները,
3. կծանոթանա կրտսեր դպրոցականի գեղարվեստական ու գիտահանրամատչելի նյութերին ծանոթանալու հնարներին:

Բովանդակությունը.

Ներածություն. Բացատրական ընթերցանության հիմնական խնդիրներն ու նպատակները: **Թեմա 1՝** Մեթոդի բաղադրամասերը. զրույց, բնագրի ընթերցում, տեսակները, ուսուցումը, բառային աշխատանք, բովանդակության վերարտադրում կամ պատմում, ամփոփում: **Թեմա 2՝** Գեղարվեստական և գիտահանրամատչելի նյութերի ուսուցում: **Թեմա 3՝** Կարդալու հմտությունների զարգացում: Արտահայտիչ կարդալու կարողությունների ձևավորում: **Թեմա 4՝** Արտադասարանային ընթերցանություն կազմակերպման ձևերը, գնահատման նորմերը: **Թեմա 5՝** Մայրենի լեզվի ընթերցարանների վերլուծություն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B33. Կրտսեր դպրոցականի հոգեկանի զարգացման հիմնախնդիրները /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (12 ժամ դասախոսություն և 12 ժամ գործնական պարապմունք), 5-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողներին կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման առանձնահատկություններին, անձնային ուղղվածության, կրտսեր դպրոցականի հույզերի, զգացմունքների,

հոգեկան գործընթացների զարգացման նորմերի մասին:

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել կրտսեր դպրոցականի հուզականային ոլորտին, բնավարությանը, խառնվածքի ձևավորմանը, խոսքի զարգացմանը, միջանձնային փոխհարաբերություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կրտսեր դպրոցական տարիքի հոգեկան զարգացման առանձնահատկությունները,
2. պատկերացում կկազմի կրտսեր դպրոցականի իմացական գործընթացների զարգացման նորերը:
3. պատկերացում կկազմի կրտսեր դպրոցական տարիքի հուզականային ոլորտի մասին,
4. կիմանա կրտսեր դպրոցականի միջանձնային փոխհարաբերությունները,
5. կկարողանա հասկանալ խողի նշանակությունը կրտսեր դպրոցականի կյանքում:

Բովանդակությունը.

Ներածություն. Կրտսեր դպրոցականի հոգեբանության առարկան, նպատակը, մեթոդները: **Թեմա 1՝** Կրտսեր դպրոցականի անատոմիան ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 2՝** Դպրոցական կյանքին երեխայի սկզբնական հարմարման առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Կրտսեր դպրոցականի մոտ հոգեբանական նորագոյացությունները: **Թեմա 4՝** Խաղը կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 5՝** Ուսումը որպես կրտսեր դպրոցականի առաջատար գործունեության ձև: **Թեմա 6՝** Կրտսեր դպրոցականի անձի ձևավորումը: **Թեմա 7՝** Կրտսեր դպրոցականի միջանձնային փոխհարաբերությունները: **Թեմա 8՝** Կրտսեր դպրոցականների մոտ իմացական գործընթացների զարգացումը: **Թեմա 9՝** Կրտսեր դպրոցականների ուշադրության առանձնա-հատկությունները: **Թեմա 10՝** Հիշողության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 11՝** Մտածողության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 12՝** Երևակայության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում: **Թեմա 13՝** Կրտսեր դպրոցականի զգացմունքները, հույզերը: **Թեմա 14՝** Կրտսեր դպրոցականի կամային որակները: **Թեմա 15՝** Կրտսեր դպրոցականի բնավարության ձևավորումը: **Թեմա 16՝** Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացումը: **Թեմա 17՝** Ուսուցչի դերը կրտսեր դպրոցականի ուսուցման և դաստիարակության գործում: **Թեմա 18՝** Երեխայի ներաշխարհի ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 19՝** Երեխաների հոգեբանությանը վերաբերող տեսություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0303/B34 Կրտսեր դպրոցականի ֆիզիկական դաստիարակության մեթոդիկա /2 կրեդիտ/ Շաբաթական 2 ժամ (9ժամ դասախոսություն և 9 ժամ գործնական պարապմունք),

6-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Ֆիզիկական դաստիարակությունը հաղորդակցման ձևերից է, որի ընթացքում տեղի են ունենում շարժողական փորձի հաղորդում: Ֆիզիկական դաստիարակությունը ժողովրդի գործունեության արդյունք է: Հետևաբար, ֆիզիկական դաստիարակության մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ մարդը գիտակցորեն է օգտագործում հատուկ շարժումները կամ շարժողական գործողությունները: Ինչպես ամեն մի -գիտություն, ֆիզիկական դաստիարակության տեսությունն ունի իր հասկացողական ապարատը, առանց որի իմացության դժվար է յուրացնել առարկայի բովանդակությունը և նրա բնորոշ հատկանիշները: Ֆիզիկական դաստիարակությունը անձի համակողմանի և ներդաշնակ ձևավորման կարևորագույն միջոցներից է, որն ապահովում է անհատի շարժողական ունակությունների կատարելության, հիգիենիկ կարևորությունների զարգացումը: Ֆիզիկական դաստիարակության դասավանդման մեթոդիկան կոչված է ուսանողներին հաղորդել ինչպես տեսական գիտելիքներ, այնպես էլ մեթոդական պատրաստվածության ֆիզիկական կուլտուրայի առարկայի դասավանդման, մարզական կազմակերպման գործում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտից հետո ուսանողը.

1. կիմանա ֆիզիկական դաստիարակության առարկայի դերը հանրակրթական դպրոցներում, դասի կառուցվածքը, դասի կազմակերպման ձևերը,

2. կկարողանա ճիշտ կազմակերպել և անցկացնել համապատասխան դասերը:

3. կկարողանա ըմբռնել ֆիզիկական դաստիարակության նշանակությունը ընդհանուր դաստիարակության համակարգում,

4. կտարբերակի ֆիզիկական կուլտուրայի առարկայի դասավանդման առանձնահատկությունները, ձևերը,

5. կունենա որոշակի պատկերացում ֆիզիկական կուլտուրայի առարկայի դասավանդման բնորոշ առանձնահատկությունների մասին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հասկացություն ֆիզիկական դաստիարակության մասին: **Թեմա 2՝** Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի առարկան: **Թեմա 3՝** Ֆիզիկական դաստիարակության նպատակը, խնդիրները և սկզբունքները: **Թեմա 4՝** Ֆիզիկական դաստիարակության միջոցները: **Թեմա 5՝** Ֆիզիկական դաստիարակության մեթոդները: **Թեմա 6՝** Ֆիզիկական դաստիարակության պարապմունքների կազմակերպման ձևերը: **Թեմա 7՝** Դասի մանկավարժական վերլուծություն: **Թեմա 8՝** Ֆիզիկական կուլտուրա առարկայի դասավանդման առանձնահատկությունները: **Թեմա 9՝** Ֆիզիկական դաստիարակության ձևավորման ուղղությունների հնարավորությունների օգտագործումը: **Թեմա 10՝**

Ֆիզիկական կուլտուրայի դասավանդման ձևերն ու մեթոդները: **Թեմա 11՝** Ֆիզիկական կուլտուրայի դասի մանկավարժական վերլուծությունը: **Թեմա 12՝** Ֆիզիկուլտուրան դպրոցի ուսուցանվող առարկաների համատեքստում: **Թեմա 13՝** Բնության և հասարակության առկա միջոցների ու հնարավորությունների օգտագործումը ֆիզիկական դաստիարակության ապահովման համար: **Թեմա 14՝** Ֆիզիկական դաստիարակությունը և դաստիարակության մյուս բաղադրամասերի միասնությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0105/B35 Մաթեմատիկա-B /Տարրական դպրոցի մաթեմատիկայի բովանդակային ուղղության տեսական հիմունքները/-6 /2 կրեդիտ/ Շաբաթական 3 ժամ (9 ժամ դասախոսություն և 18 ժամ գործնական պարապմունք),

6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել թվերի տեսության տարրերի, թվագրության տեսակների, թվերի հետ կատարվող որոշ գորողությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա թվագրության դիրքային, ոչ դիրքային, տասնորդական և երկուական համակարգերի մասին, բաժանելիության հայտանիշները,
2. կկարողանա հաշվել ամենամեծ ընդհանուր բաժանարարը, ամենափոքր ընդհանուր բազմապատիկը,
3. կտիրապետի թվաբանության հիմնական թեորեմին, Էվկլիդեսի ալգորիթմին:

Բովանդակություն.

Թվերի տեսության տարրեր

Թեմա 1՝ Ոչ դիրքային, դիրքային թվագրության համակարգեր (պատմական ակնարկ): Թվի գրառումը թվագրության դիրքային համակարգում (բաժանում մնացորդով): Թվագրության տասնորդական համակարգը: Թեորեմ տասնորդական համակարգում թվի գրության գոյության և միակության մասին: **Թեմա 2՝** Գումարի (տարբերության) հաշվման ալգորիթմը: Արտադրյալի (և քանորդի) հաշվման ալգորիթմը: **Թեմա 3՝** Տասնորդականից տարբեր թվագրության համակարգեր՝ երկուական համակարգը գործողություններ այդ համակարգում: **Թեմա 4՝** «Բաժանելիությանն առնչությունը Շո-ում: Գումարի (տարբերության), արտադրյալի (քանորդի) բաժանելիության մասին թեորեմներ: Բաժանելիության հայտանիշներ՝ 3-ի, 5-ի, 9-ի, 11-ի վրա: Բաժանելիության՝ Պասկալի հայտանիշը: **Թեմա 5՝** Էվկլիդեսի ալգորիթմը: Բազմապատիկ, բաժանարար: Ամենամեծ ընդհանուր բաժանարար, ամենափոքր ընդհանուր բազմապատիկ. թեորեմներ դրանց վերաբերյալ: **Թեմա 6՝** Պարզ թիվ, բաղադրյալ

թիվ, փոխադարձ պարզ թվեր. թեորեններ դրանց վերաբերյալ: Թեորեն պարզ բաժանարարի գոյության մասին: **Թեմա 7՝** Թեորեն տրված թվի քառակուսի արմատին . չգերազանցող պարզ բաժանարարի մասին: Էրատոսթենեսի գատիչը. պարզ թվերի բազմության անվերջությունը: **Թեմա 8՝** Թվաբանության հիմնական թեորեմը: Բնական թվերի կանոնական վերլուծությունը: Ամենամեծ ընդհանուր բաժանարար, ամենափոքր ընդհանուր բազմապատիկ գտնելու ալգորիթմը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0105/B36 Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա-3 /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (9 ժամ դասախոսություն և 9 ժամ գործնական պարապմունք),

6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կարևորագույն մեծությունների, հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաները և դրանց հետ կապված հարցերը,

2. կկարողանա կազմակերպել և անցկացնել հանրահաշվական և երկրաչափական բովանդա-կությամբ արտադասարանական, խմբակային պարապմունքները,

3. կտիրապետի մեծությունների ուսումնասիրման, հավասարումների և երկրաչափական բովանդակությամբ խնդիրների լուծման ուսուցման մեթոդիկաներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Կարևորագույն մեծությունների ուսումնասիրման մեթոդիկան տարրական դպրոցում: **Թեմա 2՝** Հանրահաշվական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկան տարրական դպրոցում: **Թեմա 3՝** Երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկան տարրական դպրոցում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0303/B37 Ներառական կրթության տեսություն և պրակտիկա /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (9 ժամ դասախոսություն և 9 ժամ գործնական պարապմունք),

6-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, դաստիարակության ռազմավարական ուղղությունների գիտակցումը ուսանողների կողմից, ներառման սկզբունքների և քաղաքականության մասին գիտելիքների յուրացումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

• կիմանա ներառական կրթության կազմակերպման սկզբունքները, քաղաքականության հիմնական ուղղությունները, դպրոցի առաքելությունները և բոլոր երեխաներին կրթության մեջ ներառման քաղաքականության իրագործման հոգեբանամանկավարժական , իրավական և բարոյաէթիկական հիմնավորումը,

• կկարողանա ուսունասիրել և վեր հանել կրթական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում առկա խնդիրները, դժվարությունները, շեղումները, իրականացնել նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացները ժամանակակից դպրոցում,

• կտիրապետի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության ուսուցման մեթոդներին, տեխնոլոգիաներին, հնարներին և միջոցներին, դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության կազմակերպման ձևերին:

Բովանդակությունը.

Թեմա 1`** Ներառման քաղաքականությունը և սկզբունքները: **Թեմա 2` Երեխաների ներառումը կրթության մեջ: **Թեմա 3`** ՀՀ օրենսդրությունը ներառման քաղաքականության մասին: **Թեմա 4`** Ներառման քաղաքականության իրագործումը Հայաստանում: **Թեմա 5`** Ներառման քաղաքականության շարունակականության ապահովումը ՀՀ կրթական համակարգում: **Թեմա 6`** Ներառական կրթության ազգային ռազմավարական ծրագրի մշակումը որպես հատուկ և հանրակրթական համակարգի միասնական գործառության ապահովման իրավական հիմք: **Թեմա 7`** Ներառման քաղաքականության իրականացման մշտադիտարկումը: **Թեմա 8`** Ներառական կրթության կազմակերպումը: **Թեմա 9`** Ներառական կրթությունը որպես մանկավարժական հիմնախնդիր: **Թեմա 10`** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման սկզբունքները: **Թեմա 11`** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման մեթոդներն ու կազմակերպման ձևերը: **Թեմա 12`** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաները: **Թեմա 13`** Դաստիարակության գործընթացի կազմակերպումը ներառական կրթության պայմաններում: **Թեմա 14`** Դպրոցի և

ընտանիքի համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների դաստիարակության գործում: **Թեմա 15՝** Ուսուցչի շարունակական մանկավարժական կատարելագործումը որպես ներառական կրթության արդյունավետ կազմակերպման միջոց, ներառական կրթության որակի կառավարումը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0303/B38 «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսուցման մեթոդիկա-2 /3 կրեդիտ/ Շաբաթական 3 ժամ (9 ժամ դասախոսություն և 18 ժամ գործնական պարապմունք),

6-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Կրթական արդյունքները. Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է՝
գիտենա՝

Ներառական դպրոցներում դասավանդվող առարկայի ծրագիրը, ուսումնասիրվող նյութի բովանդակությունը, դրա դասավանդման մեթոդները: Առարկայի դասավանդման շտկողական-դաստիարակչական և մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական / ներառական / դպրոցում:

կարողանա՝

Ճիշտ հասկանալ «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դերը կրտսեր դպրոցականի և հատկապես կրթական հատուկ կարիքներով երեխաների կրթադաստիարակչական և շտկող զարգացնող աշխատանքներում: Պատրաստվել դասին, կառուցել և հաշվի առնելով ներառական դպրոցի առանձնահատկությունները՝ իրականացնել դաս, լաբորատոր պարապմունքներ, էքսկուրսիաներ բնության գրկում, թանգարաններում և ցուցահանդեսներում, այգիներում:

տիրապետի՝

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացի դասավանդման մեթոդներին ու հնարներին, արտադասարանական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու հմտություններին, ինչպես նաև ներառական կրթական հիմնական սկզբունքներին, նպատակներին ու խնդիրներին, ուսումնական գործընթացում հավասար պայմանների և կրթական համապատասխան միջավայրի ստեղծմանը՝ սահմանափակ կարողություններով երեխաների առանձնահատկությունները դիտելով ոչ թե որպես խնդիր, այլ որպես ուսուցման գործընթացի զարգացման հնարավորություն:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բույսեր, կենդանիներ, մարդ: **Թեմա 2՝** Տնտեսություն և բնություն, բնապահպանություն: **Թեմա 3՝** Հասարակություն, մարդը որպես հասարակության անդամ: **Թեմա 4՝** Երկիրը որպես կյանքի մոլորակ, մայրցամաքներ և օվկիանոսներ, աշխարհի երկրներ և ազգություններ: **Թեմա 5՝** Առարկայի դասավանդման մեթոդներ, առանձնահատկությունները ներառական

կրթության պայմաններում: **Թեմա 6՝** Դասավանդման մեթոդների զարգացումը և համատեղումը, խոսքային մեթոդ, կիրառական մեթոդներ: **Թեմա 7՝** Առարկայի դասավանդման ձևերը /դասեր, էքսկուրսիաներ, արտադասարանական աշխատանքներ/:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0303/B39 Գործնական մանկավարժություն /2 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (9 ժամ սեմինար և 18 ժամ գործնական պարապմունք), 6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Ընդլայնել ուսանողների մասնագիտական առարկայական գիտելիքները, մանկավարժական պրակտիկ կարողությունների և հմտությունների շրջանակը, նպաստել ուսանողների մասնագիտական կոմպետենտության ձևավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

պետք է իմանա

գործնական մանկավարժություն առարկան, նպատակը, խնդիրները առարկայի տեղը և դերը մանկավարժական գիտությունների համակարգում, կապը այլ գիտությունների հետ, գործնական մանկավարժության հետազոտման մեթոդները, մանկավարժական հաղորդակցման առանձնահատկություններն ու արդյունա-վետության պայմանները, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, մանկավարժական ղեկավարման ոճերը, մանկավարժի կողմից ուսումնառողներին ճանաչելու միջոցներն ու մեթոդները:

պետք է կարողանա

պլանավորել և իրականացնել մանկավարժական գործունեություն, ապահովել տեսության և պրակտիկայի կապը գործնականում, լուծել պրոբլեմային իրավիճակներում առաջացող մանկավարժական խնդիր-ները, արդյունավետ հաղորդակցվել մանկավարժական գործընթացում, կիրառել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները կրթական գործընթացում, ձևավորել և զարգացնել անձնային համապատասխան մասնագիտական որակներ և գործիմացություն, իրականացնել մանկավարժական ախտորոշում, կանխատեսում, նախագծում, մոդելավորում, կազմել պլաններ ֆթեմատիկ, օրվա դասի, ուսումնադաստիարակչական, աշխատանքային պլաններ և այլն՝, հասու լինել ուսուցչի գործունեության ոլորտներին, դասղեկի պարտականություններին և աշխատանքի թաժիններին,

պետք է տիրապետի

մանկավարժական վարպետության կարողություններին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գործնական մանկավարժության առարկան, նպատակը, խնդիրները:
Թեմա 2՝ Մանկավարժական վարպետություն: **Թեմա 3՝** Կրթական հաստատությունների կառավարում: **Թեմա 4՝** Դպրոցի կառավարման հիմունքներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B40 Մայրենի լեզու -6/3 կրեդիտ/

Շաբաթական 4 ժամ (9 ժամ դասախոսություն և 27 ժամ գործնական պարապմունք), 6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բառերի կապակցման միջոցներն ու եղանակները, պարզ նախադասության առանձնահատկությունները և համադրելով ստացած գիտելիքները՝ մշակել գործնականում այն կիրառելու կարողություն, կենդանի խոսքը՝ գրավոր և բանավոր, ճիշտ կառուցելու հմտություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի հատկանիշները,

2. կկարողանա հմտորեն կատարել պարզ նախադասությունների շարահյուսական վերլուծություն, ճիշտ կկիրառի կապակցման միջոցներն ու եղանակները,

3. կտիրապետի նախադասություն և խոսք կառուցելու հմտություններին՝ պահպանելով համա-ձայնական, խնդրառական, շարադասական օրինաչափությունները:

Բովանդակությունը.

Ներածություն. Շարահյուսության ուսումնասիրության առարկան. կապակցության միջոցներն ու եղա-նակները: **Թեմա 1՝** Բառակապակցություն. դասակարգումը: **Թեմա 2՝** Նախադասություն. հատկանիշ-ները, տեսակները: **Թեմա 3՝** Պարզ նախադասություն: Նախադասության գլխավոր անդամներ: Ենթա-կա և ստորոգյալ, դրանց արտահայտությունը:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B41 Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկա-3 /4 կրեդիտ/

Շաբաթական 5 ժամ (9 ժամ դասախոսություն և 36 ժամ գործնական պարապմունք), 6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին տարրական դպրոցում գործադրվող քերականական դասերի տիպերին, ուսուցման ժամանակակից մեթոդներին, լեզվական նախագիտելիքների ու տարրական գիտելիքների ուսուցման միջոցներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի քերականության ուսուցման ժամանակակից մեթոդներին, դասերի տիպերին,
2. կլուծի կրտսեր դպրոցականի քերականական, ուղղագրական, վայելչագրական խնդիրները,
3. կծանոթանա երեխաների հնչյունաբանական, բառակազմական, ձևաբանական ու շարահյո-ւսական գիտելիքներին:

Բովանդակությունը.

Ներածություն. Քերականության տարրական դասընթացը: **Թեմա 1՝** Քերականության ուսուցման մեթոդներն ու եղանակները: **Թեմա 2՝** Քերականության դասի կառուցվածքը, դասի տիպերը: **Թեմա 3՝** Քերականական նախագիտելիքների ուսուցումը: **Թեմա 4՝** Լեզվական տարրական գիտելիքների ուսուցում: Հնչյունաբանության, բառակազմության ուսուցում: Ձևաբանության ուսուցում, շարահյուսության ուսուցում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B42 Մանկական գրականություն և գրականագիտության հիմունքներ-1 /2 կրեդիտ/ Շաբաթական 2 ժամ (9 ժամ դասախոսություն և 9 ժամ սեմինար պարապմունք), 6-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ հաղորդել գրակա-նության մեթոդների, սեռերի ու ժանրերի վերաբերյալ: Գիտելիքներ են հաղորդվում նաև հայ բանա-հյուսության առանձնահատկությունների մասին: Ներկայացվում է հայ մանկագրությունը մինչև XX դարը: Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել 20-րդ դարի հայ հասարակական, գրական կյանքի առանձնահատկություններին, գրական ուղղություններին ու հոսանքներին: Գիտելիքներ են հաղորդվում դարասկզբի մանկական պարբերականների վերաբերյալ: Ներկայացվում են արկածային, գիտամասսայական ժանրերի ստեղծագործությունները, Հայրենական մեծ պատերազմի տարիներին

ստեղծված գրականության առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայ մանկագրության առանձնահատկություններին ու զարգացման փուլերին,
2. ընդհանուր տեղեկություններ կունենա հայ ժողովրդական բանահյուսության ժանրերի վերաբերյալ,
3. հանգամանալից ծանոթ կլինի այս շրջանի նշանավոր մանկագիրների կյանքին ու ստեղծագործությանը:
4. ծանոթ կլինի 20-րդ դարի հայ գրականության հոսանքներին և ուղղություններին, մանկական պարբերականներին,
5. կծանոթանա արկածային, գիտամասսայական և գիտաֆանտաստիկ մի շարք ստեղծագործությունների, անապաստանների կյանքը պատկերող գործերին,
6. հանգամանալից կծանոթանա Հայրենական պատերազմի տարիներին և դրանից հետո ստեղծված գրականությանը:

Բովանդակությունը.

Ներածություն. Գրականությունը որպես արվեստի տեսակ, սեռեր և ժանրեր: **Թեմա 1՝** Հայ ժողովրդական բանահյուսությունը, մանկական ընթերցանության համար նախատեսված ստեղծագործություններ: **Թեմա 2՝** Մանկական գրականությունը միջին դարերում. Ն. Շնորհալի, Մ. Գոշ: **Թեմա 3՝** Մանկական գրականությունը IX դարում, Մխիթարյան միաբանության գործունեությունը, Աբովյանն իբրև հայ մանկագրության հիմնադիր: **Թեմա 4՝** Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի՝ մանկական ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունները: **Թեմա 5՝** Հայ մանկագրությունը 19-րդ դարի վերջին. Հ. Թումանյան, Դ. Աղայան, Ա. Խնկոյան: **Թեմա 6՝** Հայ հասարակական կյանքը 20-րդ դարի սկզբին, գրական հոսանքներ և ուղղություններ: **Թեմա 7՝** Դարասկզբի մանկական պարբերականները: **Թեմա 8՝** Վ. Փափազյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի՝ մանկական ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունները: **Թեմա 9՝** Անապաստականների կյանքը պատկերող ստեղծագործություններ. Ստ. Զորյանի «Խուժան Արշուն»: **Թեմա 10՝** Գիտամասսայական և գիտաֆանտաստիկ ժանրի ստեղծագործություններ: **Թեմա 11՝** Հայ մանկական գրականությունը Հայրենական պատերազմի տարիներին, առանձնահատկությունները: **Թեմա 12՝** Ստ. Զորյանը, Հ. Հայրապետյանը մանկագիրներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0105/B43 Մաթեմատիկա-B (Տարրական դպրոցի մաթեմատիկայի բովանդակային ուղղության տեսական հիմունքները)-7 /4 կրեդիտ/
Շաբաթական 4 ժամ (9 ժամ դասախոսություն և 27 ժամ գործնական

պարապմունք),

7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին ամբողջ, ռացիոնալ, իրական թվերի և նրանց հետ կատարվող գործողությունների հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ամբողջ, ռացիոնալ, իրական թվերի մասին, տասնորդական կոտորակ հասկացությունը,

2. կկարողանա կատարել գործողություններ ամբողջ, ռացիոնալ, իրական թվերի և տասնորդական կոտորակների հետ,

3. կտիրապետի թվերի տեսության կիրառություններին:

Բովանդակությունը.

Թվային համակարգերի ընդլայնումները **Թեմա 1՝** Թվերի համակարգի ընդլայնումը (պատմական ակնարկ): Ամբողջ թիվը որպես կարգավորյալ գույգերի բազմության. համարժեքության դաս. գործողություններ (գումարում, բազմապատկում, հանում) ամբողջ թվերի նկատմամբ: Ամբողջ թվերի կարգավորյալ օղակը: **Թեմա 2՝** Ռացիոնալ թիվը որպես ամբողջ թվերից կազմված կարգավորյալ գույգերի բազմության համարժեքության դաս. գործողություններ ռացիոնալ թվերի նկատմամբ: Ռացիոնալ թվերի դաշտը: **Թեմա 3՝** Տասնորդական կոտորակ հասկացությունը. դրա գրառումը: Սովորական կոտորակը տասնորդականով ներկայացնելու անհրաժեշտ և բավարար պայման: Գործողություններ տասնորդական կոտորակների նկատմամբ: Անվերջ պարբերական տասնորդական կոտորակներ. դրա վերածումը սովորականի: **Թեմա 4՝** Անհամաչափելի հատվածներ. թեորեմ դրանց գոյության մասին: Անվերջ ոչ պարբերական տասնորդական կոտորակ. իրական թիվ հասկացությունը: Գործողություններ իրական թվերի հետ (նկարագրություն):

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0105/B44 Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա-4 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (9 ժամ դասախոսություն և 18 ժամ գործնական պարապմունք),

7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարրական դպրոցում ուսուցանվող տեքստային խնդիրների լուծման ուսուցման, ինչպես նաև մասերի և կոտորակների ուսումնասիրման մեթոդիկաներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ճիշտ կատարել և բաշխել մաթեմատիկական գրառումները խնդիրների և օրինակների լուծման ժամանակ,
2. կկարողանա ուսուցանել պարզ և բաղադրյալ տեքստային խնդիրների լուծման մեթոդիկայի հետ կապված հարցերը,
3. կտիրապետի տեքստային և տիպային խնդիրների լուծման ուսուցման մեթոդիկաներին, ինչ-պես նաև խնդիրների վրա աշխատելու ընդհանուր հնարներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Տեքստային խնդիրների լուծման ուսուցման մեթոդիկան: **Թեմա 2՝** Պարզ և բաղադրյալ խնդիրների լուծման ուսուցման մեթոդիկան: **Թեմա 3՝** Մասերի և կոտորակների ուսուցման մեթոդիկան: **Թեմա 4՝** Մասերի և կոտորակների վերաբերյալ խնդիրների լուծման ուսուցման մեթոդիկան: **Թեմա 5՝** Տիպային խնդիրների լուծման մեթոդիկան:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B45 Մայրենի լեզու -7 /4 կրեդիտ/ Շաբաթական 4 ժամ (9 ժամ դասախոսություն և 27 ժամ գործնական պարապմունք), 7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել գոյականական և բայական անդամի լրացումները, դերբայական դարձվածք և կողմնակի անդամները, նախադասության բազմակի անդամները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի հատկանիշները,
2. կհասկանա նախադասության անդամների որոշման սկզբունքները,
3. կկարողանա կատարել պարզ նախադասության շարահյուսական վերլուծություններ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գոյականական և բայական անդամի լրացումներ: **Թեմա 2՝** Դերբայական դարձված և կողմնակի անդամներ: **Թեմա 3՝** Նախադասության բազմակի անդամներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

0302/B46 Տարրական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկա-4 /3 կրեդիտ/

Շաբաթական 3 ժամ (9 ժամ դասախոսություն և 18 ժամ գործնական պարապմունք),

7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին կրտսեր դպրոցականի բանավոր և գրավոր խոսքի ուսուցման մեթոդներին, գրավոր աշխատանքների տեսակներին, ուսուցման միջոցներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի գրավոր ու բանավոր խոսքի արդյունավետ ուսուցմանը,
2. կձևավորի վայելչագրական, շարահյուսական, ձևաբանական կարողությունները,
3. կծանոթանա կրտսեր դպրոցականի բանավոր ու գրավոր խոսքի թերությունների վերացման հնարներին:

Բովանդակությունը.

Ներածություն. Խոսքի տեսակները և դրանց փոխադարձ կապը: **Թեմա 1՝** Բանավոր խոսքի զարգացումը, նրա բաղադրիչները: **Թեմա 2՝** Գրավոր խոսք, բաղադրիչները, նրա ուղղությամբ տարվող աշխատանքները: **Թեմա 3՝** Գրավորների տեսակները, ուսուցումը: **Թեմա 4՝** Վայելչագրության ու կետադրության ուսուցումը: **Թեմա 5՝** Ուղղագրության և ուղղախոսության ուսուցում: **Թեմա 6՝** Արտադասարանային և արտադպրոցական աշխատանքներ:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

0302/B47 Մանկական գրականություն և գրականագիտության հիմունքներ-2 /4 կրեդիտ/ Շաբաթական 4 ժամ (18 ժամ դասախոսություն և 18 ժամ սեմինար պարապմունք),

7-րդ կիսամյակ, հանրագումարային գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել նորագույն շրջանի հայ մանկական գրականությանը, դրա

առանձնահատկություններին, հանգամանալից տեղեկություններ հաղորդել այդ շրջանի մանկագիրների՝ Վ. Անանյան, Ս. Կապուտիկյան, Հ. Սևան, Ս. Մուրադյան և այլոց ստեղծագործությունների վերաբերյալ:

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել թարգմանական մանկական գրականությանը: Դասընթացի ընթացքում շեշտը դրվում է ինչպես ռուս, այնպես էլ համաշխարհային մանկական գրականության նշանավոր երկերի առանձնահատկությունների բացահայտմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի նորագույն շրջանի հայ մանկական գրականությանը,
2. հանգամանալից տեղեկություններ կունենա այդ շրջանի մանկական արձակի վերաբերյալ
3. ծանոթ կլինի մանկական պոեզիայի առանձնահատկություններին և նշանավոր բանաստեղծների ժողովածուներին:
4. ծանոթ կլինի թարգմանական գրականությանը,
5. քաջատեղյակ կլինի ռուս մեծանուն մանկագիրների ստեղծագործություններին,
6. հանգամանալից ծանոթ կլինի համաշխարհային մանկագրության նշանավոր ստեղծագործություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Նորագույն շրջանի հայ մանկական գրականության առանձնահատկություններն ու զարգացման միտումները: **Թեմա 2՝** Պ. Սևակը և 60-ականների գրական շարժումը: Ձերծանոթները ժողովա-ծուն: **Թեմա 3՝** Նորագույն շրջանի մանկական արձակը. Ս. Խանգաղյան, Վ. Անանյան, Վ. Խեչումյան, Խ. Գյուլնազարյան, Հր. Մաթևոսյան, Ս. Գալշոյան: **Թեմա 4՝** Նորագույն շրջանի մանկական պոեզիան. Ս. Կապուտիկյան, Պ. Խաչատրյան, Ս. Մուրադյան, Հ. Սևան, Գ. Գաբրիելյան: **Թեմա 5՝** Ժամանակակից մանկական գրականությունը. Ե. Պետրոսյան, Լ. Սարգսյան, Էդ. Միլիտոնյան, Յու. Սահակյան: **Թեմա 6՝** Թարգմանական մանկական գրականության առանձնահատկությունները, ռուս մանկագրությունը: **Թեմա 7՝** Ի. Կոնիլովի առակները: **Թեմա 8՝** Ա. Պուշկինի հեքիաթներն ու մանկական ընթերցանության համար նախատեսված բանաստեղծությունները: **Թեմա 9՝** Պ. Երշովի, Ն. Նեկրասովի մանկական ստեղծագործությունները: **Թեմա 10՝** Լ. Տոլստոյի մանկավարժական գործունեությունն ու դասագրքերը: Տոլստոյի հեքիաթներն ու պատմվածքները: **Թեմա 11՝** Ա. Չեխովի, Մ. Սիբիրյակի մանուկների համար նախատեսված ստեղծագործությունները: **Թեմա 12՝** Ռուս մանկական գրականությունը 20-րդ դարում. Մ. Գորկի, Վ. Մայակովսկի, Կ. Չուկովսկի, Մ. Մարշակ, Պրիշվին, Ս. Միխակով, Ա. Բարտո: **Թեմա 13՝** Արտասահմանյան մանկական գրականություն. Դ. Դեֆո, Շ. Պերրո, Ժ. Վեռն, Գրիմմ եղբայր-ներ, Հ. Անդերսեն, Մ. Տվեն, Ա. Լինդգրեն, Ջ. Դոդարի:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0303/B48 Կայուն զարգացման հիմնախնդիրներ /2 կրեդիտ/ Շաբաթական 2 ժամ (9 ժամ դասախոսություն և 9 ժամ գործնական պարապմունք), 7-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել փոփոխությունների գործընթացին, որում բնական պաշարների շահագործումը, ներդրումների ուղղվածությունը, գիտատեխնոլոգիական զարգացման կողմնորոշումը, անհատի զարգացումը և ինստուտիցիոնալ փոփոխությունները, որոնք համաձայնեցված են մեկը մյուսով, ամրապնդում են ներկայի և ապագայի պոտենցյալը մարդկային կարիքների և ձգտումների բավարարման համար: Հիմնականում խոսքը մարդկային կյանքի որակի ապահովման մասին է:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի կայուն զարգացման բնորոշմանը,
2. հանգամանալից տեղեկություններ կունենա «բնություն» և «Հասարակություն» գեոհամակարգերի փոխներգործության վրաբերյալ
3. ծանոթ կլինի գլոբալ հիմնախնդիրներին:
4. ծանոթ կլինի կայուն զարգացման ռազմավարության հիմնական սկզբունքներին:
5. հանգամանալից ծանոթ կլինի կայուն զարգացմանն առնչվող միջազգային կոնվենցիաներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Կայուն զարգացում» հասկացության բնորոշումը: **Թեմա 2.** «Բնություն» և «Հասարակություն» գեոհամակարգերի փոխներգործությունը: **Թեմա 3.** Գլոբալ հիմնախնդիրները: **Թեմա 4.** Կայուն զարգացման ռազմավարության հիմնական սկզբունքները: **Թեմա 5.** Կայուն զարգացման հիմնական նախադրյալները: **Թեմա 6.** Շրջակա միջավայրը որպես կայունության հիմք: Կայուն զարգացմանն առնչվող միջազգային կոնվենցիաները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0105/B49 Մաթեմատիկա –A (Տարրական դպրոցի մաթեմատիկայի բովանդակային ուղղության տեսական հիմունքները)-8 /5 կրեդիտ/ Շաբաթական 8 ժամ (12 ժամ դասախոսություն և 52 ժամ գործնական պարապմունք), 8-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին մեկ և երկու փոփոխականներով հանրահաշվական հավասարումների, անհավասարումների, համակարգերի և համախմբերի լուծման եղանակներին, գծային, քառակուսային, աստիճանային ֆունկցիաներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մեկ և երկու անհայտով հավասարումների և անհավասարումների լուծման եղանակները, գծային, քառակուսային, աստիճանային ֆունկցիաները,

2. կկարողանա տարբեր եղանակներով լուծել հանրահաշվական հավասարումներից կազմված համակարգեր և համախմբեր, գծել գծային, քառակուսային, աստիճանային ֆունկցիաների գրաֆիկները,

3. կտիրապետի համակարգ և համախումբ գաղափարների տեքստային խնդիրների մեջ կիրառելու ունակություններին, գծային, քառակուսային, աստիճանային ֆունկցիաների հատկություններին:

Բովանդակությունը.

Տարրական դպրոցի մաթեմատիկա դասընթացի հանրահաշիվ բովանդակային ուղղության տեսական հիմունքները

Թեմա 1՝ Թվային արտահայտություն. դրա արժեքը: Թվային հավասարությունը (անհավասարությունը) որպես ասույթ, թվային հավասարությունների, անհավասարությունների հատկություններ: **Թեմա 2՝** Հավասարումը որպես պրեդիկատ. հավասարման արմատների բազմությունը: Թեորեմներ հավասարումների համարժեքության մասին: Մեկ փոփոխականով գծային, քառակուսային հավասարումների լուծումը: Գծային, քառակուսային հավասարումների լուծումը: Անհավասարումը որպես պրեդիկատ. անհավասարման լուծումների բազմությունը: **Թեմա 3՝** Թեորեմներ անհավասարումների համարժեքության մասին: Գծային, կոտորակագծային, քառակուսային անհավասարություններ: **Թեմա 4՝** Երկու փոփոխականով անվասարումներ, անհավասարումներ. դրանցից կազմված համակարգերը (համախմբերը) որպես պրեդիկատների կոնյուկցիա (դիզյունկցիա): Համակարգերի լուծման հիմնական եղանակները: Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի հիմնական ֆունկցիաները **Թեմա 5՝** Գծային ֆունկցիա (ուղիղ համեմատականություն). հիմնական հատկություններ, գրաֆիկը: **Թեմա 6.** Քառակուսային, արմատային, աստիճանային ֆունկցիաները. Դրանցից յուրաքանչյուրի հիմնական հատկությունները, գրաֆիկը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0302/B50 Մայրենի լեզու – 8 /5 կրեդիտ/

Շաբաթական 9 ժամ (12 ժամ դասախոսություն և 60 ժամ գործնական պարապմունք),

8-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բարդ նախադասության բաղադրիչների կապակցության միջոցներն ու եղանակները, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգի հատկանիշները,

2. կհասկանա բարդ նախադասության կառուցվածքային տեսակների որոշման սկզբունքները, բաղադրիչ նախադասությունների շարահյուսական գործառույթները,

3. կկարողանա կատարել բարդ նախադասության շարահյուսական վերլուծություններ, որոշել ստորադաս նախադասությունների շարահյուսական գործառույթները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բարդ նախադասություն. հատկանիշները: Բաղադրիչների կապակցության միջոցներն ու եղանակները: **Թեմա 2՝** Բարդ համադասական նախադասություն. առանձնահատկությունները: **Թեմա 3՝** Բարդ ստորադասական նախադասություն. առանձնահատկությունները, դասակարգումը՝ ըստ ստորադաս բաղադրիչի գործառության: **Թեմա 4՝** Բազմաբարդ նախադասություն. տեսակները: **Թեմա 5՝** Փոխակերպում: **Թեմա 6՝** Կետադրություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

ԿԱՄՇՆՏՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

0303/B51 Մանկավարժություն /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (9 ժամ դասախոսություն և 9 ժամ սեմինար պարապմունք),

7-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը

Դասընթացի նպատակն է իրազեկել ուսանողին ուսումնական գործունեության առանձնահատկությունների մասին, նպաստել մանկավարժության բնագավառում գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը:

Կրթական արդյունքները. Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է **գիտենա՝**

20-րդ դարի մանկավարժական մտքի պատմության զարգացման հիմնական փուլերը,

գիտատեսական հիմքերը, ուսումնասիրության առարկան, օբյեկտը, հետազոտության մեթոդները, հիմնական աղբյուրները:

կարողանա՝

Օգտագործել, տեղայնացնել մանկավարժական առաջավոր փորձը ժամանակակից պայմաններում:

տիրապետի՝

20-րդ դարի մանկավարժական առաջավոր փորձին, մեթոդաբանությանը, աղբյուրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Գ.Ի.Գյուրջյանի մանկավարժական տեսությունը, նրա գրույցներն ու ստեղծագործությունները: **Թեմա 2՝** Ռ.Շտայների մանկավարժական հայացքները:

Թեմա 3՝ Վալդորֆյան դպրոց, կազմակերպումը, առանձնահատկությունները:

Թեմա 4՝ Լ. Ս. Վիգոտսկի: Վիգոտսկու մանկավարժական տեսությունը,

հիմնական աշխատությունները: **Թեմա 5՝** Պ. Բրնսկու մանկավարժական

հայացքները, մանկաբանությունը: **Թեմա 6՝** Ս. Շացկու մանկավարժական

հայացքների ձևավորումը, նրա հիմնական աշխատությունները: **Թեմա 7՝** Մ.

Մոնտեսսորիի ազատ դաստիարակության գաղափարները, մեթոդների

պատմությունը: **Թեմա 8՝** Ջ. Դյուլիի տեսությունը, նրա մանկավարժական

տեխնոլոգիաները: **Թեմա 9՝** Ա. Մասլոուի մանկավարժական գաղափարները,

հիմնական աշխատությունները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

0303/B51 Հոգեբանություն /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (9 ժամ դասախոսություն և 9 ժամ սեմինար պարապմունք),

7-րդ կիսամյակ, հանրագումարային

Նպատակը.

Դասընթացի դասավանդումը նպատակ ունի ուսանողին ծանոթացնել ընկալման, ըմբռնման առանձնահատկություններին, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկություններին, անձի հուզականային կողմին, անձի հոգեբանական անհատական առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1.կծանոթանա հոգեկան իմացական բարձրագույն գործընթացներին և նրանց առանձնա- հատկություններին,

2. պատկերացում կունենա անձի հուզականային ոլորտի մասին,
3. կտարբերակի անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները,
4. կգարգացնի սեփական ընդունակությունները, կարողությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: **Թեմա 2.** Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: **Թեմա 3.** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 4.** Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: **Թեմա 5.** Անձի հուզականային կողմը: **Թեմա 6.** Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր:

ԿԱՍՏՆՏՆՈՒՊՈԼԻՍ ԱՌԱՐԿԱՆԵՐ

0303/B52 Գլոբալիզացիայի հիմնախնդիրներ /2 կրեդիտ/

Շաբաթական 2 ժամ (9 ժամ դասախոսություն և 9 ժամ գործնական պարապմունք),

7-րդ կիսամյակի, հանրագումարային

Նպատակը

Դասընթացի նպատակն է իրազեկել ուսանողին քաղաքակրթության առանձնահատկությունների մասին, նպաստել մանկավարժության բնագավառում գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

գիտենա՝

Քաղաքակրթական պարադիգման (հարացույցը) արդի գլոբալիստիկայում :

կարողանա՝

Օգտագործել, տեղայնացնել քաղաքակրթության փորձը ժամանակակից պայմաններում:

տիրապետի՝

Քաղաքակրթության առաջավոր փորձին, մեթոդաբանությանը, աղբյուրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գլոբալիստիկայի առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Քաղաքակրթական պարադիգման (հարացույցը) արդի գլոբալիստիկայում: **Թեմա 3.** Գլոբալ փոխգործունեության ռազմավարությունը: **Թեմա 4.** Համաշխարհային քաղաքակրթությունների համեմատական վերլուծությունը:

